

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ – 3

ԴԱՍ 1.

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանունը իբրև խօսքի մաս

Դերանուն բառը բաղկացած է **դեր** եւ **անուն** բաղադրիչներին: Ուրեմն՝ կրնանք ըսել, որ դերանունները անունի դեր կը կատարեն, կը գործածուին անուններու (գոյական, ածական, թուական), ինչպէս նաեւ մակբայներու փոխարէն՝ պարզապէս զանոնք չկրկնելու համար:

Ես կը կարդամ:

Խօսողը իր անունը ըսելու փոխարէն կ'ըսէ՝ **ես**:

Ուսուցիչը, գրիչ մը ցոյց տալով, կ'ըսէ.

Ասիկա՛ գործածէ:

Ասիկա դերանունը կը փոխարինէ *գրիչ* գոյականը:

Հինգ կարկանդակ եւ նոյնքան ալ զովացուցիչ պիտի գնեն:

Հոս **նոյնքան** դերանունը կը փոխարինէ *հինգ* թուականը:

Լուրջ ու գիտակից անձ մըն էր դասախօսը. հաճելի է մտիկ ընել այդպիսի մարդոց

գաղափարները:

Հոս **այդպիսի** դերանունը կը փոխարինէ *լուրջ ու գիտակից* ածականները:

Արագ մի՛ վազեր. եթէ այդպէս վազես, շուտ կը յոգնիս:

Հոս **այդպէս** դերանունը կը փոխարինէ *արագ* ձեւի մակբայը, որ պաշտօնով ձեւի

պարագայ է:

Դերանունները գոյական, ածական, թուական անուններուն եւ մակբայներուն փոխարէն գործածուող բառեր են:

1) Աշտոյր առատաձեռն մարդ է. այդպիսի մարդիկ քիչ կան:

2) Արշակը կծծի մարդ է. այդպիսի մարդիկ շատ կան:

Բոլոր օրինակներին կարելի է եզրակացնել, որ դերանունը նախադասութեան մէջ մատնացոյց կընէ որոշակի առարկայ կամ յատկանիշ, իսկ նախադասութենէն դուրս ան ունի ընդհանուր իմաստ:

Դերանուն կը կոչուին այն բառերը, որոնք մատնացոյց կընեն առարկաներ, յատկանիշեր, առարկաներու քանակ՝ առանց զանոնք անուանելու:

Վարժութիւն

Ընդգծէ՛ դերանունները:

1. Ես նամակը կը շարադրեմ, իսկ դուն կը մեքենագրես:
2. Հիւրերը բերած են երկու նուէր: Ասիկա քուկդ է, ասիկա՝ եղբօրդ:
3. Այս տարի երեք կօշիկ եւ նոյնքան ալ պայուսակ մաշեցուցի:
4. Դանդաղ մի՛ ուտեր. եթէ այդպէս շարունակես, աշխատելու ժամանակ պիտի չունենաս:
5. Դանիէլ Վարուժան մեծ բանաստեղծ է. այդպիսի բանաստեղծներ քիչ կան:

Դերանուններուն տեսակները

Հայերէնը ունի ինը տեսակ դերանուն՝ անձնական, անդրադարձ, փոխադարձ, ցուցական, հարցական, յարաբերական, որոշեալ, անորոշ, ժխտական:

Ծանօթանանք քանի մը տեսակին:

Անձնական դերանուններ

Ես շուկայ կէրթամ:

Դուն ճաշ կը պատրաստես:

Արան միայն պտուղ կը լուայ. ան շատ յոգնած է արդէն:

Անձնական դերանունները մատնացոյց կրնեն խօսող, խօսակից կամ երրորդ անձ մը:

Խօսքի մէջ խօսողը առաջին դէմքն է (*ես*), խօսակիցը՝ երկրորդ (*դուն*), իսկ այն անձը կամ առարկան, որուն մասին կը խօսուի՝ երրորդ (*ան, ինք*): Ուրեմն՝ անձնական դերանունները ունին երեք դէմք:

Ան եւ **ինք** դերանունները կրնան գործածուիլ ոչ միայն անձերու, այլ նաեւ կենդանիներու եւ իրերու անուններուն փոխարէն:

Ծանօթութիւն:

Գործող անձը կամ դէմքը յատկապէս շեշտելու համար յաճախ կը գործածենք **ինքս**, **ինքդ** դերանունները **ես**, **դուն** դերանուններուն հետ: Օրինակ՝

Ես ինքս տեսած եմ այդ բոլորը:

Ղուն ինքդ ստորագրեցիր:

Քաղաքավարութեան համար **դուն** դերանունին փոխարէն կը գործածուի նոյն դերանունին յոգնակին՝ **Ղուք**, որ կը գրուի մեծատառ:

Դերանուններուն մեծ մասը ունի առանձնայատուկ՝ գոյականէն տարբեր՝ դերանուանական հոլովում: Արեւմտահայերէնի դերանուանական հոլովները վեցն են՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական:

Որոշ դերանուններու սեռականն ու տրականը կը նոյնանան:

Եզակի թիւ

Հոլովներ	Ա. դէմք	Բ. դէմք	Գ. դէմք
Ուղղ.	<i>ես</i>	<i>դուն</i>	<i>ան ինք(ը)</i>
Հայց.	<i>զիս</i>	<i>քեզ</i>	<i>զայն զինք</i>
Սեռ.	<i>իմ</i>	<i>քու</i>	<i>անոր իր</i>
Տրակ.	<i>ինձի</i>	<i>քեզի</i>	<i>անոր իրեն</i>
Բաց.	<i>ինձմէ</i>	<i>քեզմէ</i>	<i>անկէ իրմէ</i>
Գործ.	<i>ինձմով</i>	<i>քեզմով</i>	<i>անով իրմով</i>

Յոգնակի թիւ

Հոլովներ	Ա. դէմք	Բ. դէմք	Գ. դէմք
Ուղղ.	<i>մենք</i>	<i>դուք</i>	<i>անոնք իրենք</i>
Հայց.	<i>մեզ</i>	<i>ձեզ</i>	<i>զանոնք զիրենք</i>
Սեռ.	<i>մեր</i>	<i>ձեր</i>	<i>անոնց իրենց</i>
Տրակ.	<i>մեզի</i>	<i>ձեզի</i>	<i>անոնց իրենց</i>
Բաց.	<i>մեզմէ</i>	<i>ձեզմէ</i>	<i>անոնցմէ իրենցմէ</i>
Գործ.	<i>մեզմով</i>	<i>ձեզմով</i>	<i>անոնցմով իրենցմով</i>

Վարժութիւն

Ա. Ամբողջացո՛ւր ես, զիս, իմ, ինձի, ինձմէ, ինձմով անձնական դերանուններով:

Սովորաբար շատ կը յարգեմ ուսուցիչներս: Ուսուցիչներս ալ կը սիրեն: Իրենց հանդէպ պարտականութիւններուս մէջ չեմ թերանար: Անոնք ալ կը գովեն եւ յարգալիք վերաբերում ունին հանդէպ: Դասընկերներս ալ կ'ախորժին, որովհետեւ միշտ կ'օգնեմ իրենց: Ծնողներս ալ գոհ են եւ կը պարծենան:

Բ. Հետեւեալ նախադասութիւններուն մէջ կրկնուած բառերը փոխարինե՛ր դերանուններով:

1. Արտոյտները իրենց բոյները կը շինեն ցորեններուն մէջ, երբ ցորենները կանաչին:
2. Ծուլութեան յաղթելու համար պէտք է փախչիլ ծուլութենէն:
3. Մարդուս համբաւը ծաղիկ մըն է. թեթեւ շունչ մը կրնայ համբաւը խամրեցնել:
4. Շողոքորթները գովեստներ կը կարդան բոլոր մարդերուն եւ կ'ապրին ի վնաս մարդերուն:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Ծնած է 1878–ին: Նա եղեռնէն պատահաբար փրկուած արեւմտահայ լավագոյն ստեղծագործողներէն է: Բազմաթիւ բանաստեղծութիւններու մէջ երգած է հայրենիքը եւ անձնական ապրումներ: Հրատարակած է «Հրաշալի հարութիւն», «Կէսգիշերէն մինչև արշալոյս», «Հայերգութիւն», «Տաղարան» եւ այլ ժողովածուներ: Վախճանուած է 1948–ին:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս,
Ինչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս.
Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նա՛ւ մ'է ծփուն...

Եկեղեցին Հայկական ես աչքս գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ. կը լսեմ իր Յիսուսով մանկադէմ,
Իր սեղանէն մխացող գուլայ-գուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխոով...

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւատքին
Իմ պապերուս, որ հողէն զայն քար առ քար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ
Ու թաղուեցա՛ն անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ...

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ'է բանուած,
Որուն ետեւ՝ սկիհին մէջ, կ'իջնէ ինքը Աստուած,
Որուն առջեւ ծնրադիր կու գայ իմ ազգս ամբողջ՝
Հաղորդուիլ Անցեալին հաց ու գինով կենսատողջ...

Եկեղեցին Հայկական ծովուն դիմաց ալեկոծ
Նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր եւ բոց,
Ու սօթակէզ ցերեկին անտառ մըն է ստուերքոտ,
Ուր շուշաննէ ր կը ծաղկին Շարականի գետին մօտ...

Եկեղեցին Հայկական մէն մի քարին տակ գետնի

Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի...
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին եւ Մարմնոյն
Զրահանդերձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն,
Եւ գանգակներն են բոմբին, եւ երգն է մի՛շտ Յաղթութիւն...

ԲԱՌԵՐ

Քարայր — քարանձաւ, խոռոչ ժայռին մէջ:
Գաւիթ — եկեղեցիին նախասրահը:
Բանուած — հիւսուած, ասեղնագործուած, զարդակարուած:
Սկիհ — արծաթեայ եկեղեցական ծիսական անօթ՝ թաս:
Շարական — հոգեւոր երգին տեսակ մը:
Զրահանդերձ — մետաղեայ պաշտպանիչ զգեստ, զրահահանդերձ:

Վարժութիւն

Ա. Քերթուածէն արտագրէ՝ դերանունները եւ առանձնացո՛ւր անձ-
նականները:

Բ. Ի՞նչ կը յիշես քերթուածէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ հայկական եկեղեցական տաճար մը:

ԴԱՍ 2.

Անդրադարձ դերանուն

Մեկընը տեղ հասնելուն պէս ինքզինքը կառքէն դուրս կը նետէ:

Ընդգծուած բառը՝ *ինքզինքը*, անդրադարձ դերանուն է, որ գործա-
ծուած է իր իսկ կատարած գործողութիւնը իր վրայ կրող ենթակայի
անուան փոխարէն:

*Անդրադարձ դերանունները կը գործածուին գործողութիւնը իր վրայ
կատարող առարկաներու (անձերու կամ իրերու) անուններուն
փոխարէն:*

Անդրադարձ դերանունը կը կազմուի Գ. դէմքի անձնական դերանունին կրկնումով եւ կը հոլովուի անոր պէս: Այսպէս՝

Հոլովներ	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	----	----
Հայց.	<i>ինքզինք</i>	<i>իրենք-զիրենք</i>
Սեռ.	<i>ինքնիր</i>	<i>իրենք-իրենց</i>
Տրակ.	<i>ինքնիրեն</i>	<i>իրենք-իրենց</i>
Բաց.	<i>ինքնիրմէ</i>	<i>իրենք-իրենցմէ</i>
Գործ.	<i>ինքնիրմով</i>	<i>իրենք-իրենցմով</i>

Անդրադարձ դերանունները ուղղական հոլով չունին:

Անդրադարձ դերանունը միայն Գ. դէմք ունի, սակայն շնորհիւ **ս** եւ **դ** յօդերուն, որոնք կը կցուին **ինքզինք** ձեւին, կ'ունենանք **Ա. եւ Բ. դէմքերը՝ *ինքզինքս, ինքզինքդ:***

Կան նաեւ *ինքզինքնիս, ինքզինքնիդ, ինքզինքնին* ձեւերը, որոնք առաւել խօսակցական լեզուին կը պատկանին:

Վարժութիւն

Ա. Ամբողջացո՛ւր անդրադարձ դերանունին հոլովաձեւերով:

1. Հայրս շատ կը յոգնեցնէ:
2. Ընկերներս որոշում տուած են հաւաքոյթ սարքել:
3. Երբ պարտեզը կոխկոտուած տեսաւ, պարտիզպանը
ելած՝ սկսաւ յանդիմանել դրացիին երեխաները:
4. Ընկերս սխալմամբ զարկաւ:
5. Ծոյլ դասընկերներս այնքան ալ մտահոգ չեն երեւիր:
6. բարեբախտ կը համարիմ ձեզի հետ ծանոթանալուս
համար:

Փոխադարձ դերանուններ

Յակոբը եւ Յովսէփը զիրար կը յարգեն:

Ընդգծուած բառը՝ *զիրար*, փոխադարձ դերանուն է, որ գործածուած է յարգելու գործողութեամբ փոխադարձաբար իրարու կապուող *Յակոբը* եւ *Յովսէփը* անուններուն փոխարէն:

Փոխադարձ դերանունները կը գործածուին գործողութեամբ փոխադարձաբար իրարու կապուած առարկաներու (անձերու կամ իրերու) անուններուն փոխարէն:

Ուղղ.	----	----
Հայց.	<i>իրար, զիրար</i>	<i>մէկզմէկ</i>
Սեռ.-տրակ.	<i>իրարու</i>	<i>մէկզմէկու</i>
Բաց.	<i>իրարմէ</i>	<i>մէկզմէկէ</i>
Գործ.	<i>իրարմով</i>	<i>մէկզմէկով</i>

Փոխադարձ դերանունները եզակի թիւ եւ ուղղական հոլով չունին: Անոնք նախադասութեան մէջ կը գործածուին գոյականներու, ածականներու, բայերու եւ կապերու հետ: Օրինակ՝

Մենք պատահաբար հանդիպեցանք իրարու (մէկզմէկու):

Վարժութիւն

Ա. Ամբողջացո՛ւր փոխադարձ դերանուններու պատշաճ հոլովաձեւերով:

1. Անոնք կը փնտռէին խաւարին մէջ:
2. դժգոհ մարդիկ չեն կրնար համերաշխութեամբ ապրիլ:
3. Աշոտը եւ Յակոբը զիրքերը աչքէ անցուցին:
4. Դուք պէտք է սիրէք եւ ոչ թէ վիճաբանիք հետ:
5. երջանիկ գոյգ մը կը գրօսներ գետակի ափին:
6. Մենք կը վստահինք մեր գաղտնիքները:
7. Այդ պտոյտին ընթացքին մենք նեղուեցանք:

ՀԱՅՈՑ ԲՆԱՇԻԱՐՀԸ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐԸ

Հայաստան աշխարհիս գեղեցիկ երկիրներէն մէկն է. կը գտնուի Մեւ, Միջերկրական եւ Կասպից ծովերու միջեւ: Հայաստան լեռնային երկիր է. ծովերու երեսէն չափելով՝ կը կազմէ շատ բարձր եւ ընդարձակ լեռնադաշտ մը, որուն վրայ շինուած են նշանաւոր քաղաքներ, վանքեր, եկեղեցիներ եւ ամրոցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԸ

Հայաստան շատ անուանի լեռներ ունի. ասոնց մէջ ամէնէն նշանաւորն է **Արարատ** կամ **Մասիս** լեռը, որուն վրայ կեցաւ Նոյ նահապետին տապանը ջրհեղեղէն վերջ: Մասիս երկու գագաթ ունի՝ մեծ եւ փոքր. մեծ Մասիսը միշտ ծածկուած է ձիւնով. ծովերու երեսէն 5165 մէթր բարձր ըլլալով՝ կարծես երկինքին կը դպչի: **Արարատը Հայաստանի սրբազան լեռն է** ու մեզմէ շատ սիրուած. կը գտնուի Հայաստանի մէջտեղը եւ կը հսկէ մեր սիրելի հայրենիքին վրայ: Երկրորդ նշանաւոր լեռն է **Արագածը**, որ չորս գագաթներ ունի եւ անուշահոտ ծաղիկներով լեցուն ձորեր: Նշանաւոր են նաեւ **Միփանը**, **Գեղամայ** լեռները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ

Հայաստան, լեռնային երկիր ըլլալով, ունի շատ մը գետեր ալ, որոնք առատ ջուր ունին ու կը ծառայեն դաշտերը ռոռգելու. իսկ հիմակ ալ անոնց միջոցով ելեկտրականութիւն կը հանեն: Ամէնէն մեծ գետը **Եփրատն** է, ապա կու գայ **Տիգրիսը**, յետոյ **Երասիսը**, **Ճորոխը** եւ **Արածանին**:

Մեզի սիրելի գետեր են **Ախուրեանը** եւ **Հրազդանը**: Հայաստանի ձմեռը շատ ցուրտ ըլլալուն համար այս գետերը կը սառին. մարդիկ անոնց վրայէն կառքերով կրնան անցնիլ:

ԼԻՃԵՐԸ

Հայաստանի ամենասիրուն զարդը կը կազմեն անոր լիճերը: Երեք մեծ լիճեր ունի եւ շատ մըն ալ փոքր լճակներ: Մեծերէն է **Մեւանայ** լիճը, ուր կը գտնուի **Իշխան** կոչուած շատ համեղ ձուկը, որ կ'աղեն ալ: Անկէ

աւելի մեծ է **Վանայ** լիճը. ասոր մէջ ալ կը գտնուի **տառեխ** կոչուած ձուկը, որ նոյնպէս շատ համեղ է: Երրորդ լիճը **Ուրմիոյ** կամ **Կապուտան** կը կոչուի: Այս երեք լիճերը իրենց գեղեցկութեամբ չեն զիջեր մէկգմէկու:

ԲԱՌԵՐ

Անուանի – քաջածանօթ, հոչակաւոր:

Նահապետ — 1. նախահայր, 2. առաջնորդ, 3. տոհմի մը աւագագոյն այրը:

Սրբազան – նուիրական, աստուածային, սուրբ, պաշտուող:

Ոռոգել – ջրել, անդաստանը ջուրով ապահովել:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ դերանունները, որոշէ՛ անոնց տեսակը, հոլովը, դէմքը, թիւը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ քեզի ծանօթ հայկական լերան կամ լիճի մը գեղեցկութիւնը:

ԴԱՍ 3.

Ցուցական դերանուններ

Ասիկա (սա) մեր տունն է:

Այս հագուստը գեղեցիկ է:

Ասիկա (սա), այս դերանունները մատնացոյց կընեն առարկաներ (իրեր՝ *տուն, հագուստ*):

Ժամանակին մեր նախնիները կը կառուցէին սիւնազարդ վանքեր: Հիմա այդպիսի վանքեր չկան:

Այդպիսի դերանունը կը մատնանշէ յատկանիշ (յատկութիւն). այս նախադասութեան մէջ կը նշանակէ *սիւնազարդ*:

- *Ի՞նչ հագար գիրք...,- քացազանչեցի ես:*

- *Այո՛, ճիշդ այդքան,- պատասխանեց եղբայրս:*

Այդքան դերանունը մատնացոյց կընէ առարկային քանակը: Այս նախադասութեան մէջ՝ *ինը հագար:*

Ուշադի՛ր, սատոյցը հոն (այնտեղ) դիրարբէկ է:

Հոն (այնտեղ) դերանունը կը մատնանշէ գործողութեան (եղելութեան) տեղը:

Այդպէս մի՛ պատասխանէր:

Այդպէս դերանունը այս նախադասութեան մէջ մատնացոյց կընէ գործողութեան կատարման ձեւը:

Ասիկա (սա), այսպիսի, այդպէս, հոն (այնտեղ), այդքան դերանունները ցուցական դերանուններ են:

Ցուցական դերանունները մատնացոյց կընեն առարկայ, առարկայի յատկանիշ (յատկութիւն), քանակ, գործողութեան տեղ եւ ձեւ:

Ցուցական դերանուններն են՝ *սա, ասիկա, ատիկա, անիկա (այս, այդ, այն), այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի (այսքան, այդքան, այնքան, նոյնքան), այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս, այստեղ, այդտեղ, այնտեղ, նոյնտեղ(ը), ասդին, անդին, այն, նոյն, միեւնոյն, միւս, մէկայ, հոս, հող, հոն:*

Ցուցական դերանունը նախադասութեան մէջ կրնայ գործածուիլ իբրեւ ածական՝ որոշիչի պաշտօնով: Օրինակ՝ *Այս մարդուն հետ խօսեցայ:*

Ան կրնայ նաեւ գործածուիլ փոխանունաբար եւ նախադասութեան մէջ կունենայ գոյականին յատուկ պաշտօններ: Կարգ մը ցուցական դերանուններ կը հոլովուին գոյականաբար կամ մասամբ դերանուանաբար:

Կարգ մը դերանուններ ալ ունին մակբայական կիրարկութիւն. անոնք պարագայի պաշտօնով կը գործածուին բայերու հետ եւ ցոյց կու տան գործողութեան տեղ կամ ձեւ: Օրինակ՝

Հո՛ւ նստէ: Հո՛ն գնա:

Կարգ մը ցուցական դերանուններու հոլովումը.

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ.-հայց.	<i>այս, ասիկա</i>	<i>ասոնք</i>
Մեռ.-տրակ.	<i>ասոր</i>	<i>ասոնց</i>
Բաց.	<i>ասկէ</i>	<i>ասոնցմէ</i>
Գործ.	<i>ասով</i>	<i>ասոնցմով</i>

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ. -հայց.	<i>այդ, ատիկա</i>	<i>ատոնք</i>
Մեռ.-տրակ.	<i>ատոր</i>	<i>ատոնց</i>
Բաց.	<i>ատկէ</i>	<i>ատոնցմէ</i>
Գործ.	<i>ատով</i>	<i>ատոնցմով</i>

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ.	<i>(այն), անիկա</i>	<i>անոնք</i>
Հայց.	<i>զայն, անիկա</i>	<i>զանոնք</i>
Մեռ.-տրակ.	<i>անոր</i>	<i>անոնց</i>
Բաց.	<i>անկէ</i>	<i>անոնցմէ</i>
Գործ.	<i>անով</i>	<i>անոնցմով</i>

	Եզակի թիւ		
Ուղղ. -հայց.	<i>այստեղ</i>	<i>այդտեղ</i>	<i>այնտեղ</i>
Մեռ.-տրակ.	<i>այստեղի</i>	<i>այդտեղի</i>	<i>այնտեղի</i>
Բաց.	<i>այստեղէն</i>	<i>այդտեղէն</i>	<i>այնտեղէն</i>
Գործ.	<i>այստեղով</i>	<i>այդտեղով</i>	<i>այնտեղով</i>

Միւս բառը դերանուն կը սեպուի, անիկա կ'արտայայտէ յաջորդականութիւն եւ ունի ցուցականութեան երանգ: Ան նախադասութեան մէջ հանդէս կու գայ որոշիչի պաշտօնով: Երբ գործածուի փոխանունաբար, կը հոլովուի ի հոլովիչով:

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ. -հայց.	<i>միւսը</i>	<i>միւսները</i>
Մեռ.-տրակ.	<i>միւսին</i>	<i>միւսներուն</i>
Բաց.	<i>միւսէն</i>	<i>միւսներէն</i>
Գործ.	<i>միւսով</i>	<i>միւսներով</i>

Հոս, հող, հոն դերանունները ունին մակբայական կիրարկություն: Անոնք նախադասութեան մէջ կը գործածուին բայերու հետ եւ կը ներկայանան տեղի պարագայի պաշտօնով: Օրինակ՝ *Ես հոս նստայ*:

Կան նաեւ ասոնց քարացած բացառական հոլովածեւերը՝ **հոսկէ, հողկէ, հոնկէ**, որոնք նոյնպէս մակբայական կիրարկություն ունին:

Վարժություն

Ա. Ընդգծէ՛ ցուցական դերանունները:

Կրիան եւ եղնիկը որոշեցին մրցիլ: Մրցումը տեղի պիտի ունենար երեք օր ետք: Եղնիկը այնքան արագ վազող անասուն մըն էր, որ ամբողջ օրը հոս ու հոն կը պտըտէր, իսկ կրիան իր եղբայրներուն հետ կը ծրագրէր իր յաղթանակը:

Որոշուած օրը եղնիկը սուրաց, իսկ կրիան պահուրտեցաւ թուփի մը ետեւ: Եղնիկը անտառ հասաւ՝ կրիան այդտեղ էր: Հասաւ մարգագետին՝ կրիան հոն էր: Ան կարճ ճամբայ ընտրեց ու գիւղ մտաւ: Կրիան իրմէ առաջ նոյն տեղը հասած էր: Եղնիկը շատ զարմացաւ, իսկ գիւղացիները ծիծաղեցան եղնիկին միամտութեան վրայ:

Եղնիկը այնքան զարմացաւ ու բարկացաւ, որ լեռ բարձրացաւ ու այնտեղ ապրեցաւ: Ան մինչեւ այսօր այդ բարձր լեռներէն գիւղ չէ իջած:

Բ. Ընդգծէ՛ ցուցական դերանունները: Գրէ՛, թէ ո՛ր անունին կամ անուններուն տեղ գործածուած են անոնք:

1. Այս պղպեղը կծու է. **ասկէ** մի՛ ուտեր:
ասկէ = կծու պղպեղէն
2. Այս ճամբան մութ է. **հոսկէ** մի՛ անցնիր:
3. Այդ պտուղները փտած են. **ատոնցմէ** մի՛ ուտէք:
4. Տեսա՞ք նոր աթոռները. **ատոնցմէ** իւրաքանչիւրին համար մեծ գումար վճարեցինք:
5. Ահաւասիկ ձեր ծածկոցները. **ասոնցմով** պիտի ծածկէք ձեր անկողիները:
6. Այս ի՛նչ անհրապոյր նստարաններ են. **ասո՞նց** վրայ պիտի նստինք:

ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Հայերեն նահանգ կը կոչուին երկրի մը ներքին բաժանումները. այս բաժանումները եղած են, որպէսզի կարելի ըլլայ դիրքաւ կառավարել ու հոգ տանիլ իւրաքանչիւր նահանգի պէտքերուն: Այս նահանգները նախարարներու հրամանին տակ էին, եւ նախարարներն ալ թագաւորին հրամանին տակ: Իւրաքանչիւր նահանգ ունէր իր գաւառները, իր գլխաւոր քաղաքը, բազմաթիւ գիւղեր եւ առանձին զօրքը, որ պատերազմի ժամանակ կը միանար թագաւորին բանակին:

Հայաստան բաժնուած էր տասնհինգ նահանգներու. անոնց գլխաւորն էր **Այրարատեան** նահանգը, ուր թագաւորը ունէր իր պալատը եւ բանակը: Ասիկա Արարատ լեռան ստորոտը կը գտնուէր: Կարելոր գաւառ էր նաեւ **Տարօնը**՝ իր **Մուշ** քաղաքով. այս գաւառին իշխանները մեր քաջ Մամիկոնեաններն էին, որոնք որդիէ որդի Հայաստանի բանակին զօրավարները կ'ըլլային:

Տարօնի քով՝ Վանայ լիճին եզերքը, կը գտնուի **Վասպուրական** նահանգը, որ հարուստ եւ մեծ երկիր մըն է: Սեւանայ լիճին արեւելեան կողմն ալ կը գտնուի **Միւնեաց** նահանգը: Անոր հարեւան է **Արցախ** նահանգը, որ հիմա նաեւ Ղարաբաղ կը կոչուի. շատ լեռնոտ երկիր է, ու բնակիչները քաջ ռազմիկներ են:

ԲԱՌԵՐ

Նախարար – նահանգի մը գլխաւոր իշխանը:
Ստորոտ – լեռան լանջերէն ցած գտնուող տարածքը:
Ռազմիկ – կռուող զինուոր, մարտիկ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՝ դերանունները եւ առանձնացո՛ւր ցուցականները:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննէ՛ր հայթայթէ Հայաստանի նահանգներուն վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 4.

Հարցական եւ յարաբերական դերանուններ

Ո՞վ հեռաձայնեց:

Այս նախադասութեան մէջ **ո՞վ** դերանունը կ'արտայայտէ հարցում՝ խօսողին անյայտ անձի մը մասին:

Ի՞նչ կ'ուզես ինձմէ:

Այս նախադասութեան մէջ **ի՞նչ** դերանունը կ'արտայայտէ հարցում՝ առարկայի մը մասին:

Ինչպիսի՞ երաժշտութիւն կը սիրէք դուք:

Այս նախադասութեան մէջ **ինչպիսի՞** դերանունը կ'արտայայտէ հարցում՝ առարկայի մը յատկանիշին (յատկութեան) մասին:

Ո՞րքան շաքար կ'ուզես:

Այս նախադասութեան մէջ **ո՞րքան** դերանունը կ'արտայայտէ հարցում՝ չափի, քանակի մասին:

Ե՞րբ եւ ո՞ւր պիտի տեղափոխեն ձեզ:

Այս նախադասութեան մէջ **ե՞րբ**, **ո՞ւր** դերանունները կ'արտայայտեն հարցում՝ գործողութեան ժամանակի եւ տեղի մասին:

Ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞, ո՞րքան, ե՞րբ, ո՞ւր դերանունները հարցական դերանուններ են:

Հարցական դերանունները կ'արտայայտեն հարցում խօսողին անձանօթ, անյայտ անձի կամ առարկայի, անոնց յատկութեան, թիւին, գործողութեան, տեղին, ժամանակին, ձեւին եւ այլնի մասին:

Հարցական դերանուններ են՝ *ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչպիսի՞, ի՞նչքան, ի՞նչչափ, ի՞նչպէս, ինչո՞ւ, ո՞ր, ո՞րքան, ո՞րչափ, ո՞ւր, ուրկե՞, երբե՞ն, քանի՞, քանի՞ երորդ, քանիակա՞ն:*

Կարգ մը հարցական դերանուններու հոլովումը.

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ.	<i>n</i> ՚վ	<i>որոնք</i> ՚ն (ովքէք ՚ր)
Հայց.	<i>զոն</i> ՚վ	<i>որոնք</i> ՚ն (ովքէք ՚ր)
Սեռ.-տրակ.	<i>որոն</i> ՚ւ	<i>որոնք</i> ՚նց
Բաց.	<i>որովէ</i> ՚օ	<i>որոնցմէ</i> ՚օ
Գործ.	<i>որոն</i> ՚վ	<i>որոնցմոն</i> ՚վ

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ. -հայց.	<i>ի</i> ՚նչ(ք)	<i>ինչէք</i> ՚ր
Սեռ.-տրակ.	<i>ինչի</i> ՚ն(ն)	<i>ինչերոն</i> ՚ւ(ն)
Բաց.	<i>ինչէ</i> ՚ն(ն)	<i>ինչերէ</i> ՚ն(ն)
Գործ.	<i>ինչոն</i> ՚վ	<i>ինչերոն</i> ՚վ

Առարկայի կամ գործողութեան յատկանիշ ցոյց տուող հարցական դերանունները (*ո՞րքան, քանի՞, քանի՞ երոքոք*) կը հոլովուին զոյակա-նաբար գործածուելու պարագային եւ կենթարկուին ի հոլովման:

Քանի՞ երոքոք հարցական դերանունը կը հոլովուի եզակի եւ յոգնակի թիւերով:

Քանի՞ հարցական դերանունը սովորաբար կը հոլովուի եզակի թիւով:

Եզակի թիւ

Ուղղ. -հայց.	<i>քանի</i> ՚ն(ն)	<i>ո՞րքան(ք)</i>	<i>քանի՞ երոքոք</i>
Սեռ.-տրակ.	<i>քանիի</i> ՚ն(ն)	<i>որքանի</i> ՚ն(ն)	<i>քանի՞ երոքոքին</i>
Բաց.	<i>քանիէ</i> ՚ն(ն)	<i>որքանէ</i> ՚ն	<i>քանի՞ երոքոքէն</i>
Գործ.	<i>քանիոն</i> ՚վ	<i>որքանոն</i> ՚վ	<i>քանի՞ երոքոքով</i>

Հարցական դերանունները կարտասանուին յատուկ առոգանու-թեամբ եւ կը կազմեն հարցական նախադասութիւն: Օրինակ՝

Ի՞նչպէս տուն վերադարձար:

Ինչոն ի չկրցար այդ խնդիրը լուծել:

Հարցական դերանունները երբեմն կը գրուին երկարով՝ (´) բացազանչական նշանով: Հետեւաբար, անոնք կարտասանուին բացազանչական առոգանութեամբ եւ կը կազմեն բացազանչական նախադասութիւն: Օրինակ՝

Ինչպիսի՛ հերոս ընկերնէ՛ր մեռան. մեռա՛ն՝ չկորսուեցան:

Յարաբերական դերանունները նոյն հարցական դերանուններն են՝ առանց հարցական կամ բացականչական հնչերանգի եւ նշանի:

Յարաբերական դերանունները կը գործածուին բարդ ստորադասական նախադասութեան գլխաւոր եւ երկրորդական բաղադրիչները իրարու կապելուն համար: Օրինակ.

Ես կկատարեմ այն, ինչ կը յանձնարարէ իմ ուսուցիչս:

Վարժութիւն

Ա. Ընդձե՛հ հարցական դերանունները:

Ո՞վ, ե՞րբ հնարած է ճատրակը, ինչպիսի՞ տեղեկութիւններ կան անոր ծագման մասին:

Կըսուի, թէ հնդիկ իմաստուն մը Ջ. դարուն զայն ստեղծած է իր տիրակալին համար:

Ճատրակը Հայաստան մուտք գործած է Թ. դարուն: Իսկ ի՞նչ անուն տուած են հայերը այդ խաղին եւ ինչո՞ւ: Հնդկերէն «չատուրանգա» բառէն խաղը անուանած են «ճատրակ», հետագային ռուսերէնին միջոցով պարսկերէնէն ընդունած են նաեւ «շախմատ» (շահմատ) անուանումը. իսկ ի՞նչպէս կարելի է թարգմանել «շախմատ» բառը:

Շահմատ (*պարսկ.*) = թագաւորը (շահ) մեռաւ (մատ):

Բ. Պատմողական նախադասութիւնը դարձո՛ւր հարցական նախադասութիւն:

1. Եղբայրս երէկ ճամբորդեց:

2. Ե՞րբ ճամբորդեց եղբայրդ:

Կաղամբ եւ ստեպղին քաղեցի:

Գառնին լուսանկարեցի:

Լեւոնը եւ Յակոբը ստանձնեցին աշխատանքը:

Այս պարտականութիւնը տաժանելի աշխատանքի կը նմանի:

Քոյրս չորրորդ դասարանի աշակերտուի է:

Մէկ հեթանոսական տաճար կանգուն մնացած է:

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՀԱՅԿԻ ԵՒ ԲԵԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հայկ նահապետը Նոյ նահապետին Թորգոմ անունով թոռնիկին որդին էր: Հայկ աստուածապաշտ էր. տեսնելով մարդերու չարութիւնը՝ չուզեց անոնց հետ գործ ունենալ: Ան իր ընտանիքով, բարեկամներով ու բոլոր ունեցածներով՝ կով, ոչխար, ձի, էջ՝ կը բնակէր Միջագետքէն դէպի հիւսիս՝ քարձր լեռներուն վրայ, մասնավորապէս Վանայ լիճին հարաւր: Այդ կողմերը բնակութիւն հաստատած ամէնքն ալ իր հրամանին տակ առաւ եւ եղաւ մեր ազգին նահապետը. ահա թէ ինչու իր անունով մենք **Հայ** կը կոչուինք, եւ մեր հայրենիքն ալ՝ **Հայաստան**:

Հայկ նահապետ այդ երկիրը ժառանգութիւն տուաւ իր **Արմենակ** անունով անդրանիկ որդիին տղուն՝ **Կադմոսին**, իսկ ինքը, առնելով միւս գաւակներն ու թոռները, գնաց աւելի հիւսիս եւ գտնելով գեղեցիկ դաշտ մը՝ հոն բնակեցաւ: Այնտեղ շինեց փոքրիկ քաղաք մը, որ մեծ գիւղի կը նմանէր, եւ անունը դրաւ **Հայկաշէն**, այսինքն՝ Հայկին շինածը: Երկիրն ալ կոչեց **Հարք**:

Այն երկիրը, ուր կ'ուզէին երկինք հասնող աշտարակ մը շինել, Ստրեաստան կը կոչուէր: Հոն **Բել** անունով չար ու բռնաւոր մարդ մը կար: Ասիկա տիրեց շատ մը ցեղերու վրայ եւ բոլորը ստիպեց, որ իրեն հնազանդին. այնքան չարացաւ, հպարտացաւ, որ ինքզինքը աստուած կարծեց եւ հրամայեց, որ աստուծոյ տեղը զինքը պաշտեն:

Բել մարդ դրկեց Հայկին քով՝ պահանջելով, որ իրեն հնազանդի: Հայկ չընդունեցաւ եւ վռնտեց Բելին մարդիկը: Բել, սաստիկ բարկացած, պատերազմի ելաւ Հայկի դէմ: Հայկ ալ իր քիչ զօրքերով անոր դէմ ելաւ Ուրմիոյ լիճին քովերը: Երկու կողմիներն ալ հսկայ մարդիկ էին, սաստիկ ոյժ ունէին: Պատերազմի ատեն Հայկ տեսաւ, որ Բել, զրահազգեստներ հագած, բանակին մէջն է: Իսկոյն քաշեց իր աղեղը, եւ երկաթէ ծայրակալով նետը, ծակելով Բելին զրահները, անոր սիրտը մտաւ: Բել ինկաւ մեռաւ, իսկ իր զինուորներն ալ կռիւէն փախան:

Հայկ նահապետ աստուածապաշտ էր. գրեթէ չորս հարիւր տարի խաղաղութեամբ ապրեցաւ եւ ձգելով բազմաթիւ գաւակներ ու թոռներ՝ մեռաւ:

ԲԱՌԵՐ

Ժառանգութիւն – յե՛հ մահու ձգուած ուեցուածք:

Անդրանիկ – գաւակներէն առաջինը:

Բռնաւոր – բռնակալ, բռնապետ, բռնութեամբ տիրող:

Պաշտել – երկրպագել, յարգանք մատուցել, աստուածացնել:

Զրահ – մետաղէ պահպանակ մարմինին վրայ:

Ծայրակալ – նետին խոցող ծայրը:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ դերանունները եւ առանձնացո՛ւր հարցականներն ու յարաբերականները:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Հայկ նահապետը:

ԴԱՍ 5.

Որոշեալ դերանուններ

Ամէնքն ալ այդ կարծիքին են:

Այս նախադասութեան մէջ **ամէնքը** դերանունը կ'արտայայտէ առարկաներու որոշեալ, յայտնի ամբողջութիւն:

Ամէն ոք դուրսն է:

Այս նախադասութեան մէջ **ամէն ոք** դերանունը կ'արտայայտէ առարկաներու որոշեալ, յայտնի ամբողջութեան ամէն մէկ առանձին անդամը:

Որոշեալ դերանունները կ'արտայայտեն որոշեալ ամբողջութիւն կամ աղոր ամէն մէկ առանձին անդամը՝ իբրեւ առարկաներ (անձեր, իրեր) կամ յատկանիշեր:

Որոշեալ դերանուններ են՝ *ամէնքը, ամէն(ը), բոլոր(ը), իւրաքանչիւր(ը), ամէն մէկ(ը), իւրաքանչիւր ոք, ամէն ոք, ամէն ինչ(ը), ամբողջ(ը):*

Ամէն ոք, իւրաքանչիւր ոք, դերանուններէն բացի մնացեալները կը հոլովուին:

Ուղղ. -հայց.	<i>ամէնք</i>	<i>ամէնքը</i>
Սեռ.-տրակ.	<i>ամէնուն</i>	<i>ամէնքին</i>
Բաց.	<i>ամէնէն</i>	<i>ամէնքէն</i>
Գործ.	<i>ամէնով</i>	<i>ամէնքով</i>

Անորոշ դերանուններ

Ոմանք այլ կարծիք ունին այդ մասին:

Այս նախադասութեան մէջ **ոմանք** դերանունը կ'արտայայտէ առարկաներու ամբողջութեան անորոշ մաս մը:

Ինծի ուրիշ մարդ յայտնեց այդ լուրը:

Այս նախադասութեան մէջ **ուրիշ** դերանունը կ'արտայայտէ առարկայի (անձի) անորոշ յատկանիշ:

Անորոշ դերանունները կ'արտայայտեն անորոշ առարկա (անձ, իր) կամ յատկանիշ:

Անորոշ դերանուններ են՝ *մեկը, ուրիշ(ը), այսինչ(ը), այնինչ(ը), ոմն, ոմանք, քանի մը, մեկ քանի (մի քանի), որեւէ, ոեւէ, որեւիցէ:*

Ուեւէ դերանունը աւելի յաճախ կը գործածուի անձի անուան հետ, *որեւէ* դերանունը՝ իրի անուան հետ:

Ոմն, քանի մը, որեւէ, ոեւէ, որեւիցէ անորոշ դերանուններէն բացի մնացեալները կը հոլովուին:

Մէկը անորոշ դերանունը կը հոլովուի միայն եզակի թիւով:

Ոմանք անորոշ դերանունը կը հոլովուի միայն յոգնակի թիւով:

Ուղղ. -հայց.	<i>մէկը</i>	<i>ոմանք</i>
Սեռ.-տրակ.	<i>մէկուն</i>	<i>ոմանց</i>
Բաց.	<i>մէկէն</i>	<i>ոմանցմէ</i>
Գործ.	<i>մէկով</i>	<i>ոմանցով</i>

	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ. -հայց.	<i>ուրիշը</i>	<i>ուրիշներ(ը)</i>
Սեռ.-տրակ.	<i>ուրիշի(ն)</i>	<i>ուրիշներու(ն)</i>
Բաց.	<i>ուրիշէ(ն)</i>	<i>ուրիշներէ(ն)</i>
Գործ.	<i>ուրիշով</i>	<i>ուրիշներով</i>

Ժխտական դերանուններ

Ոչ մէկը պատրաստ է մեկնելու:

Այս նախադասութեան մեջ **ոչ մէկը** դերանունը կ'արտայայտէ ամբողջութեամբ ժխտուող առարկա (անձ):

Ժխտական դերանունները կ'արտայայտեն ամբողջութեամբ ժխտուող կամ լիովին բացառուող առարկա (անձ, իր):

Ժխտական դերանուններ են՝ *ոչ ոք, ոչինչ, ոչ մէկը:*

Ժխտական դերանունները կը հոլովուին միայն եզակի թիւով:

Ուղղ. -հայց.	<i>ոչինչ</i>	<i>ոչ ոք</i>	<i>ոչ մէկը</i>
Սեռ.-տրակ.	<i>ոչինչի</i>	<i>ոչ ոքի</i>	<i>ոչ մէկուն</i>
Բաց.	<i>ոչինչէ(ն)</i>	<i>ոչ ոքէն</i>	<i>ոչ մէկէն</i>
Գործ.	<i>ոչինչով</i>	<i>ոչ ոքով</i>	<i>ոչ մէկով</i>

Ժխտական դերանուններու հետ ստորոգեալը կը դրուի հաստատական ձեւով:

Վարժութիւն

Ընդգծէ՛ դերանունները եւ նշէ՛ անոնց տեսակը:

Ես այս երեկոյ կու գայի քեզ տեսնելու, բայց ճամբան մէկը հանդիպեցաւ ու խնդրեց, որ երթանք ուրիշի մը մօտ:

Մայրդ կը գրէ, որ ձեր ճամբորդութիւնը մեծապէս օգտակար եղած է, եւ մի քանի շաբթուան մէջ գրգռուած ջիղերդ հանդարտեր են:

Ձեզի պէս երեւելի մարդ մը մայրաքաղաքս գայ, եւ պատկերահան մը անմիջապէս բարի եկարի չերթայ, պակասութիւններու պակասութիւնն է, որ եւ ոչ մէկ կերպով մը կրնայ պակասութիւն ըլլալէ դադրիլ:

Քանի մը հիւանդներ տարբեր գանգատներով դիմած էին բժիշկին, եւ ան ամենուն ալ նոյն պատասխանը տուած է:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՀԱՅԿԻ ՅԱՁՈՐԴՆԵՐԸ

ԱՐՄԵՆԱԿ

Հայկ նահապետ շատ զաւակներ ու թոռներ ունեցաւ. ամէնէն մեծը Արմենակ կը կոչուէր: Արմենակ իր զաւակներով գնաց բնակեցաւ Այրարատեան դաշտը, որ շատ յարմար էր իր հարստութեամբ եւ առատ խոտերով: Այդ դաշտին մէջ տնկեց Սօս կոչուած մեծ ծառեր, որոնք յետոյ մեր հայրերուն համար սրբազան եղան, եւ անոնց տերեւներուն շարժումներէն ապագան կը գուշակէին: Արմենակ տնկեց նաեւ խաղող

եւ ուրիշ պտղատու ծառեր: Այդ դաշտին հիւսիսը մեծ լեռ մը կար, որուն անունը **Արագած** դրաւ:

ԱՐԱՄԱՅԻՍ

Երբ Արմենակ մեռաւ, անոր տեղը անցաւ իր որդին՝ **Արամայիս**. ասիկա մեծ-մեծ քարերով փառաւոր քաղաք մը շինեց Արագածի մօտերը եւ կոչեց **Արմաւիր**, որ երկար տարիներ Հայաստանի մայրաքաղաք եղաւ:

Արամայիս որդի մը ունէր՝ **Շարա** անունով, որ շատ նշանաւոր եղաւ իր շատակերութեամբ: Ոչ ոք անոր պէս ախորժակ ունէր: Հայրը, տեսնելով, որ Շարան չի կշտանար, եւ իր ամբողջ հարստութիւնը կը լմննայ, Շարային տուաւ ոչխարներ, եգներ ու կովեր եւ զինքը ընտանիքով դրկեց ուրիշ գաւառ մը, որ Հայաստանի ամենէն աւելի առատ ցորեն տուողն էր: Շարա այդ երկրին անունը դրաւ **Շիրակ** եւ հոն բնակեցաւ: Շիրակը դաշտային երկիր է եւ Հայաստանի ամենէն աւելի պտղաբեր հողը ունի: Շարայի «շատակեր» անունը այնքան տարածուեցաւ, որ երբ մէկը շատակեր ըլլար, հայերը կ'ըսէին. «Եթէ դուն Շարայի որկորն ունիս, մենք Շիրակի ամբարները չունինք»:

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻՆ ՄԻԻՍ ԹՈՌՆԵՐԸ

Հայկ նահապետի զաւակներն ու թոռները այնքան շատցան, որ մեր ամբողջ Հայաստանը գրաւեցին: Անոնք կամաց-կամաց տարածուեցան մեր երկրին ամեն կողմերը: Արամայիսէն ու Շարայէն յետոյ Հայկի թոռներուն մէջ նշանաւոր եղան **Ամասիա**, **Գեղամ**, **Յուլակ**, **Սիսակ**, **Հարմա** եւ ուրիշներ:

ԲԱՌԵՐ

Գուշակել – ըլլալիքը առաջուց գիտնալ, կռահել, կանխատեսել:

Որկոր – 1. ստամոքս, 2. ախորժակ:

Ամբար – շտեմարան, մթերք պահելու շէնք կամ սենեակ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ դերանունները եւ առանձնացո՛ւր որոշեալ, անորոշ եւ ժխտական տեսակները:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Հայկի թոռ Շարան:

ԴԱՍ 6.

ԿԱՊ

1. Կապը իբրև խօսքի մաս

Աշակերտները մեծարուեցան տնօրէնութեան կողմէ: (որո՞ւ կողմէ մեծարուեցան)

Առանց **կողմէ** բառին՝ այս նախադասութեան միւս անդամները (*աշակերտները մեծարուեցան տնօրէնութեան*) միտք չեն արտայայտեր, կըլլան անկապ. ուրեմն չենք կրնար ջնջել **կողմէ** բառը, որովհետեւ ան (*կողմէ*) *տնօրէնութեան* բառը կը կապէ *մեծարուեցան* ստորոգիչին, եւ երկուքը (*տնօրէնութեան* եւ *կողմէ*) միասնաբար կը լրացնեն *մեծարուեցան* ստորոգիչը:

Տնօրէնութեան կողմէ կապակցութիւնը կը կատարէ անուղղակի խնդիրի պաշտօն:

Նոյնպէս՝

Հայերէնը կը սիրեմ անձիս պէս: (ի՞նչպէս կը սիրեմ)

Առանց **պէս** բառին՝ այս նախադասութեան միւս անդամները (*հայերէնը կը սիրեմ անձիս*) միտք չեն արտայայտեր. ուրեմն չենք կրնար ջնջել **պէս** բառը, որովհետեւ ան (*պէս*) *անձիս* բառը կը կապէ *կը սիրեմ* ստորոգիչին, եւ երկուքը (*անձիս* եւ *պէս*) միասնաբար կը լրացնեն *կը սիրեմ* ստորոգիչը:

Անձիս պէս կապակցութիւնը կը կատարէ ձեւի պարագայի պաշտօն:

Կողմէ եւ **պէս** կապեր են:

Օրինակներէն եզրակացնելով՝ կրնանք ըսել.

ա. Կապը առանձինն չի կրնար նախադասութեան անդամ դառնալ:

բ. Կապը գոյականներու եւ հոլովուող բառերու հետ միասնաբար կոն- նենայ զանազան

պաշտօններ:

գ. Կապը եւ կապուող բառը միասնաբար կը դառնան նախադասութեան մէկ անդամ:

Տնօրէնութեան կողմէ կապակցութիւնը նախադասութեան մէկ անդամ է՝ անուղղակի խնդիր:

Անձիս պէս կապակցութիւնը նախադասութեան մէկ անդամ է՝ ձեւի պարագայ:

Կապերը որեւէ գոյական կամ հոլովուած բառ կը կապեն ստորոգիչին կամ գոյականին եւ այդ կապուող բառին հետ միասնաբար կը դառնան բայական կամ գոյականական անդամի լրացում:

Վարժութիւն

Ա. Բաց ձգուած տեղերը ամբողջացո՛ւր կապերով:

(Մասին, հետեւանքով, չափ, առթիւ, ատեն, հետ, տակ, բացի, առանց, ետք, հանդէպ, համար:)

1. Մեզի դուք ալ աշխատեցաք այսօր:
2. Յովսէփէն՝ բոլորը նեղուած էին ինձմէ:
3. Արամին սխալին աշակերտները տուժեցին:
4. Յակոբը կէսօրէ մեզի պիտի գայ:
5. հովանոցի դուրս ելայ տունէն:
6. Տարեդարձիս շատ նուէրներ ստացայ:
7. Պարտիզպանը նստած էր խնձորենիի մը
8. Եղբայրս Փարիզ մեկնեցաւ ուսանելու
9. Ուսուցչուհին շատ խիստ է անկիրթ աշակերտներուն
10. Մօրս շուկայ գացի:
11. Զբօսանքի փոքրիկները շատ վազվզեցին:
12. Այս դէպքին մանրամասնութիւններ պիտի հաղորդենք հետագային:

2. Կապերուն դիրքային տեսակները

Կապերը կը դրուին կա՛մ կապուող բառերէն առաջ, կա՛մ կապուող բառերէն ետք:

Ա. Կապուող բառերէն առաջ

*Առանց հովանոցի դուրս ելայ տունէն:
Բացի Արամէն՝ բոլորը նեղուած են ինձմէ:*

Առանց եւ բացի կապերը դրուած են *հովանոցի* եւ *Արամէն* կապուող բառերէն առաջ:

Կապուող բառերէն առաջ դրուող կապերը կը կոչուին նախադրութիւն:

Նախադրութիւններ են՝ *առանց, դէպի, ըստ, աւելի քան, իբր, իբրեւ, որպէս* (իբրեւ), *մինչեւ, նախքան, ինչպէս* (պէս իմաստով), *զերթ* (պէս), *վասն* (համար), *քան, յանուն* (անունով, մէկուն կամ բանի մը սիրոյն համար), *ի սէր* (մէկուն կամ բանի մը սիրոյն), *ի վնաս, ի նպաստ, ի շահ, ի խնդիր, յօգուտ, ի լուր, ի գին, ի հաշիւ, ի պատիւ* (պատուելու համար), *ի յարգանս* (յարգելու համար), *ի հեճուկս* (հակառակ), *ի տես* եւ այլն:

Վարժութիւն

Բաց ձգուած տեղերը ամբողջացո՛ւր նախադրութիւններով:

(Առանց, յօգուտ, իբրեւ, մինչեւ, յանուն, նախքան, ըստ, փոխանակ, ի հեճուկս, ի սէր:)

1. օդացոյցին՝ վաղը շատ ցուրտ պիտի ըլլայ:
2. օգնութեանդ՝ չեմ կրնար անցնիլ այս կածանէն:
3. Փաստաբանը աշխատեցաւ մեզի:
4. առաւօտ սպասեցինք դեսպանատան առջեւ:
5. վերադառնալդ՝ լուր տուր մեզի:
6. ջղայնանալու պատասխանէիր իրեն:
7. մեր պատմական իրաւունքներուն՝ մենք կը պահանջենք մեր հայրենիքին ամբողջական ազատագրումը:
8. ձեզի՝ ես զինք պիտի մեծարեմ:
9. Աստուծոյ՝ մոռցի՛ր այդ ամէնը:
10. Թղթատարին բերած կապոցը յանձնեցի Արշակ Մարկոսեանին՝ հաշուապահի:

Բ. Կապուող բառերէն ետք

Վէճի բռնուեցայ ընկերոջս հետ:

Այս դէպքին մասին մանրամասնութիւններ պիտի հաղորդեն հետագային:

Հետ եւ մասին կապերը դրուած են *ընկերոջս եւ դէպքին* կապուող բառերէն ետք:

Կապուող բառերէն ետք դրուող կապերը կը կոչուին յետադրութիւն:

Հայերէնը ունի մեծ թիւով յետադրութիւններ՝ *համար, ետք, հետ, պէս, վրայ, տակ, մօտ, քով, շուրջ, մէջ, նման, վար, վեր, չափ, ի վեր, ի վար, ընթացքին, ատեն, ժամանակ, կողմէ, ներքեւ, վերեւ, փոխարէն, առաջ, ետեւ, ներս, դուրս, վերաբերեալ, միջեւ, միջոցին, հանդերձ, հետեւանքով, պատճառով, պատճառաւ, կից, հեռու, հանդէպ, նկատմամբ, մասին, պայմանով, սկսեալ, պարագային, հաւասար, նպատակով, ընթացքին եւ այլն:*

Ծանօթութիւն:

Քանի մը կապեր ալ թէ՛ նախադրութիւն են, թէ՛ յետադրութիւն. օրինակ՝ *անկախ, համաձայն, շնորհիւ, հակառակ, հանդերձ, բացի, համապատասխան, ընդդէմ, հեռու:*

Հակառակ յորդորներուս՝ *Արամը լաւ չ'աշխատիր:*

Յորդորներուս հակառակ՝ *Արամը լաւ չ'աշխատիր:*

Համաձայն լաւատեղեակ աղբիւրներու՝ *անձնակազմէն զոհուած էր երէք հոգի:*

Լաւատեղեակ աղբիւրներու ***համաձայն***՝ *անձնակազմէն զոհուած էր երէք հոգի:*

Այսպիսի կապերը կը կոչուին երկդրութիւններ:

Վարժություն

Բաց ձգուած տեղերը ամբողջացո՛ւր նախադրություններով կամ յետադրություններով:

(Վերաբերեալ, դէմ, բացի, հանդերձ, իբրեւ, հակառակ, պարագային, ատեն, յանուն, միջոցին, շնորհիւ, ի վեր, յանուն):

1. Աշոտը համաձայնութիւն տուած էր՝ իր հայեացքներուն:
2. Մենք ձեր առաջարկներուն առարկութիւն չունինք:
3. Երուանդը՝ կաթողիկոսական պատուիրակ, մասնակցեցաւ ժողովին:
4. ընտանեօք ներկայ էինք հանդէսին:
5. Հայ գիրերու գիտէն անցած են հարիւրաւոր տարիներ:
6. Ո՛չ մէկ ազահութիւն ներելի է՝ ժամանակի ազահութենէն:
7. Պատերազմ ծագելու մենք անակնկալի չենք գար:
8. Տարիներ շարունակ պայքարեր ենք վերելքի, բարօր կեանքի:
9. նոր կառավարութեան անդամներուն՝ երկրին մէջ տեղի ունեցան բազմաթիւ բարեկարգումներ:
10. Այս հանդիպումին քաղաքական հարցերու նիւթեր չխօսուեցան:
11. Ճաշելու աղմուկ չեն հաներ:
12. Արձակուրդի մենք գիւղն էինք:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏ

Արամ Հարմայի որդին էր՝ մեր հին նահապետներուն մէջ ամենէն քաջն ու անուանին: Խելացի ու շատ խոհեմ էր. շատ կը սիրէր իր հայրենիքը: Ուզեց, որ Հայաստանը ընդարձակուի, եւ ուրիշ ազգեր ալ հայերէն խօսին. անոր համար իր քովը կանչեց հազարաւոր հայ քաջեր, ձիաւորներու եւ հետեւակներու մեծ բանակ մը պատրաստեց, զէնք ու զրահներ տուաւ անոնց ու սորվեցուց պատերազմելու արուեստը: Դրացի տէրութիւնները իրմէ շատ վախցան եւ շատեր ալ նախանձեցան իր փառքին վրայ:

ՊԱՏԵՐԱԶՄ ՄԱՐԵՐՈՒ ԴԷՄ

Արամի հորը ժամանակ Մար կոչուած ազգ մը, որ Կասպից ծովին եզերքները կը բնակէր, եկած ու տիրած էր Հայաստանի մէկ մասին: Ասոնց **Նիւքար** թագաւորը ըսաւ Արամին, որ իրեն դրամ եւ շատ մը կենդանիներ տայ: Արամ մտիկ չըրաւ ու պատերազմի պատրաստուեցաւ: Նիւքար հպարտ էր. կը կարծէր, թէ աշխարհիս վրայ իրմէ աւելի քաջ մարդ չկար: Ահագին բանակ մը առած՝ կռիւի եկաւ Արամին դէմ: Արամ հայ քաջերով անոր դէմն ելաւ, եւ սաստիկ պատերազմ ըրին: Արամ ջարդեց թշնամիները, Նիւքարը ողջ-ողջ գերի բռնեց ու Արմաւիր մայրաքաղաքը բերաւ. հոն սուր երկաթ մը ճակատին զարնելով՝ կախեց քաղաքին մէջտեղը:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԴԷՄ

Հայաստանի հարաւային կողմը հին ժամանակ թագաւորութիւն մը կար որ Ասորեստան կը կոչուէր: Այս թագաւորութիւնը տիրած էր շատ երկիրներու եւ կ'ուզէր տէր ըլլալ նաեւ Հայաստանի: Այս երկրին **Բարշամ** թագաւորը մարդ որկեց Արամին քով, որպէսզի գայ, իրեն հպատակ ըլլայ եւ տուրք վճարէ: Արամ, փոխանակ հնազանդելու, ձիաւոր ու հետեւակ զօրքերու մեծ բանակով մը գնաց դէպի Հայաստանի հարաւը, լեռնոտ երկիր մը, որ **Կորդուք** կը կոչուէր եւ Հայաստանի մաս կը կազմէր: Հոն հանդիպեցաւ Բարշամի բանակին: Երկու կողմէն ալ մեծ քաջութեամբ կռուեցան: Արամ իր նիզակով զարկաւ սպաննեց Բարշամը եւ անոր բանակը քշեց Հայաստանէն դուրս:

ԱՐԱՄ ԿԸ ՏԻՐԷ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

Այս պատերազմէն վերջ Արամ նահապետ իր մեծ բանակով անցաւ աւելի հեռաւոր վայրեր եւ պատերազմեցաւ ընդդէմ **Պայասլիս** թագաւորին: Արամ շատ մեծ քաջութեամբ կռուեցաւ, յաղթեց իր թշնամին ու սպաննեց: Իր **Մշակ** զօրավարին հրամայեց, որ տասը հազար զինուորներով պաշտպանէ նուաճուած երկիրները եւ կարգադրէ բնակիչները, որ հայերէն սորվին ու հայերէն խօսին: Այդ երկրին մէջ Մշակ մեծ եւ գեղեցիկ քաղաք մը շինեց եւ իր անունով **Մաժակ** անուանեց:

Արամ շատ մեծ գործեր տեսաւ Հայաստանի մէջ. սքանչելի քաղաքներ շինեց, եւ գիւղացիներուն ալ օգնեց, որպէսզի լաւ մշակութիւն ընեն: Հայաստան այնքան հարստացաւ, որ նախանձելի եղաւ միւս ազգերուն: Արամի անունով մեր ազգը **Արամեան** ալ կոչուեցաւ: Արամ մեռաւ մեծ փառքերով, եւ հայերը շատ լացին իր վրան:

ԲԱՌԵՐ

Խոհեմ – ինելացի, իմաստուն, կշռադատ, շրջահայեաց, զգաստամիտ:

Նախանձ – ուրիշներու յաջողութիւններէն յառաջացած չարութիւն:

Արուեստ – ճարտարութիւն, հմտութիւն, հնարագիտութիւն:

Դրացի – հարեւան, դրկից:

Սքանչելի – հիանալի, զմայլելի, զարմանալի, կատարեալ, հոյակապ, ընտիր:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ կապերը եւ որոշէ՛ անոնց տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Արամ նահապետը:

ԴԱՍ 7.

Գոյականներու, ածականներու, մակբայներու եւ այլ բառերու գործածութիւնը իբրեւ կապ

Արամը դուրս ելաւ:

Ընդգծուածը՝ **դուրս**, իբրեւ խօսքի մաս՝ մակբայ է:

Քաղաքէն դուրս խաղաղութիւն կը տիրէր:

Ընդգծուածը՝ **դուրս**, կապ է, որովհետեւ *քաղաքէն* կապուող բառին հետ կը դառնայ նախադասութեան մէկ անդամ՝ տեղի պարագայի պաշտօնով: (Ո՞ր կը տիրէր:)

Նոյնպէս՝

Տարեդարձիս առիթով նուէրներ ստացայ:

Ընդգծուածը՝ **առիթով**, իբրեւ խօսքի մաս՝ գոյական է (գործիական հոլովով), բայց հոս գործածուած է իբրեւ կապ եւ կապուող բառին հետ (*տարեդարձիս*) դարձած է նախադասութեան մէկ անդամ: (Ե՞րբ ստացայ՝ *տարեդարձիս առիթով*՝ ժամանակի պարագայ:)

Վարժութիւն

Ա. Զոյգ-զոյգ դրուած նախադասութիւններուն մէջ ընդգծուածներէն որոշէ՛, թէ որո՞նք մակբայ են, որո՞նք կապ: Մակբայները ընդգծէ՛ մէկ գիծով, կապերը՝ երկու գիծով:

Յիշէ՛. կապը եւ կապուող բառը միասնաբար մէկ հարցումի կը պատասխանեն:

1. *Շուրջ երեսուն աշակերտ տուն վերադարձաւ:*
1. Ժողովականները նստած էին սեղանի մը *շուրջ*:
2. Պարտեզին դրան *մօտ* կիսանդրի մը կար:
2. *Մօտ* երեք ամիս պիտի բացակայիմ քաղաքէն:
3. Ընկերս անակնկալօրէն *ներս* մտաւ:
3. Սրահէն *ներս* լռութիւն կը տիրէր:
4. Արամը մեզմէ *առաջ* սենեակ մտաւ:
4. *Առաջ* այս ամէնը չէի գիտեր:

5. Արային թերը վիրաւորուած էր արմուկէն *վար*:

5. Վար նայեցայ ու տեսայ Գորիսը:

6. Մեր դրան *անջել* կեցած էր մուրացկան մը:

6. Յառաջացայ եւ *անջել* նստայ:

7. Այս պողոտան *հեռու* կը տանի ձեզ:

7. Այլեւս կը բաւէ, որ ապրինք հայրենիքէն *հեռու*:

8. Արամը *դէմ* կեցաւ մեր առաջարկներուն:

8. Արաբները կռուեցան պարսիկներուն *դէմ*:

9. Վերել նայեցայ եւ տեսայ ուղղաթիռը:

9. Ձեր գլխուն *վերել* ճանճ մը կը տոգայ:

10. Ետե՛ւ անցիր եւ մի՛ խօսիր:

10. Արամը Սմբատին *ետել* նստած էր:

Բ. Ձոյգ-զոյգ դրուած նախադասութիւններուն մէջ ընդգծուածներէն որոշէ՛, թէ որո՛նք զոյական են, որո՛նք կապ:

1. Առիթով մը ձեզի պիտի գամ:

1. Տարեդարձիս *առիթով* ընկերներս մեր տունը պիտի հաւաքուին:

2. Խօսելու *ժամանակ* դասախօսը աջ ու ձախ կը նայէր:

2. Ես *ժամանակ* չունիմ ձեզի հետ խօսելու:

3. Երկու *պատճառով* պիտի մերժեմ ձեր առաջարկը:

3. Հիւանդութեանս *պատճառով* դպրոց չգացի:

4. Երկու *օրով* պիտի բացակայիմ քաղաքէն:

4. Մեծն Տիգրանի *օրով* Հայաստան կայսրութեան վերածուած էր:

5. Արամը միշտ հպարտացած է այս վեհ *նպատակով*:

5. Փարիզ մեկնեցաւ ուսանելու *նպատակով*:

6. Քու անկրթութիւնդ *չափ* չունի:

6. Ձեզի *չափ* ես ալ տեղեակ եմ այդ հարցէն:

Գ. Ձոյգ-զոյգ դրուած նախադասութիւններուն մէջ ընդգծուածներէն որոշէ՛, թէ որո՞նք ածական են, որո՞նք կապ:

1. Միւս յանձնաժողովը *հակառակ* եզրակացութեան յանգեցաւ:
1. Ղեկավարին ծանր վիճակին *հակառակ*՝ մենք շարունակեցինք քալել:
2. Մենք կուգենք ունենալ *անկախ* հայրենիք:
2. Արշակը գործեց իր համոզումներէն *անկախ*:
3. Այս հարցին *գուգահեռ* կը լուծենք նաեւ ձեր հարցը:
3. Աշակերտը *գուգահեռ* գիծերը ճիշդ նշեց:
4. Ժողովին՝ տրուեցան *համապատասխան* որոշումներ:
4. Վարձատրութիւնը արժանիքին *համապատասխան* կըլլայ:
5. Արամին *նման* ես ալ որոշեցի գործադուլի դիմել:
5. *Նման* երեւոյթներու միշտ ալ կը հանդիպինք մեր կեանքին մէջ:

Կապերուն իմաստային դասակարգումը

Եղբայրս Փարիզ մեկնեցաւ ուսանելու համար:

Ուսանելու համար կապակցութիւնը կը նշանակէ *որպէսզի ուսանի*:
Ուսանելու համար կապակցութիւնը կ'արտայայտէ Փարիզ մեկնելու նպատակը:

Եթէ *մեկնեցաւ* ստորոգիչին ուղղենք **ինչո՞ւ** հարցումը, կը ստանանք *ուսանելու համար* պատասխանը, որ նպատակի պարագայ է:

Ուրեմն՝ **համար** կապը կ'արտայայտէ նպատակի իմաստ:

Կապերը կ'արտայայտեն զանազան իմաստներ, որովհետեւ անոնք կը գործածուին տարբեր բառերու հետ, խօսքի տարբեր միջավայրերու մէջ:

1. **Տեղի՞** *մէջ, վրայ, տակ, մօտ, դէպի, միջեւ, դուրս, ներս, ներքեւ, ի վեր, ի վար, շուրջ* եւ այլն:
2. **Ժամանակի՞** *ետք, նախքան, մինչեւ, օրով, օրօք, առաջ, սկսեալ, ընթացքին, մէջ* եւ այլն:
3. **Ձեւի եւ նմանութեան՝** *պէս, նման, ինչպէս, իբրեւ:*
4. **Չափ ու քանակի՞** *աւելի քան, աւելի, նուազ, չափ, մինչեւ:*

5. Վերաբերութեան՝ մասին, վերաբերեալ, հանդէպ, նկատմամբ եւ այլն:

6. Նպատակի՝ համար, յանուն, վասն, նպատակով, ի լուր եւ այլն:

7. Միասնութեան՝ հետ, միասին, մէկտեղ, հանդերձ, համընթաց, զուգընթաց:

8. Ներգործութեան՝ կողմէ, ձեռքով:

9. Բացառման՝ բացի, զատ, բացառութեամբ, առանց:

10. Զիջման՝ փոխարէն, փոխանակ, հակառակ եւ այլն:

11. Պատճառի եւ հիմունքի՝ պատճառով (պատճառաւ), ըստ, համաձայն, համեմատ, հիման վրայ, շնորհիւ, համար, սիրոյն:

12. Պայմանի՝ պայմանով (պայմանաւ), պարագային:

Կարգ մը կապեր բազմիմաստ են: Այսպէս՝ վրայ կապը կրնայ արտայայտել քանի մը իմաստ՝

ա) տեղի, բ) յանգման, գ) ժամանակի:

ա) Ծառին վրայ թռչուն մը կայ:

Ծառին վրայ՝ տեղի պարագայ: (ո՞ւր կայ)

բ) Հայերը յարձակեցան թշնամիներուն վրայ:

Թշնամիներուն վրայ՝ անուղղակի խնդիր: (որո՞նց վրայ)

գ) Այս խօսքիս վրայ ներս մտաւ ուսուցիչը:

Խօսքիս վրայ՝ ժամանակի պարագայ: (ե՞րբ)

Վարժութիւն

Տեղադրէ՛ կապերը եւ որոշէ՛ անոնց տեսակները՝ ըստ իմաստի:

(համար, առանց, ի վեր, փոխարէն, հետեւանքով, համաձայն, շնորհիւ, միջոցին, մինչեւ, ի վար, կողմէ)

1. Փոքր սրահին մէջ հարիւրէ աւելի մարդ կար: (չափ ու քանակի)

2. իր նաժիշտներուն ընկերակցութեան՝ թագուհին դահլիճ գնաց:

3. հազար տողար պիտի նուիրեմ դպրոցին:

4. Հայկական գորգերը նշանաւոր եղած են իրենց սքանչելի գոյներուն

5. Երեք ժամէ քեզի կը սպասեմ:

6. Դասապահը խանգարող աշակերտը կանչուեցաւ տնօրէնութեան
.....:
7. Արամը բռներ կը փնտռէր՝ իր վշտացած մայրը մխիթարելու
.....:
8. Պարտքիս այս ոսկի մատանին տուի վաճառականին:
9. Առատ ձինին փակ էին դպրոցները:
10. Ընկերս հրաժեշտի երեք անգամ սեղմեց ձեռքս:
11. Տղաքը զգուշօրէն կը քալէին գետն:
12. Ստացած լուրերուն՝ դաշնագիրը կնքուած է:

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Երբ Արամ մեռավ, տեղը անցավ իր Արա որդին. ասիկա դեմքով այնքան աղուոր էր, որ անունը **Գեղեցիկ** դրին, եւ ամենքը կը զարմանային վրան: Բարի, ազնիւ ու պարկեշտ էր: Երջանիկ կ'ապրէր իր **Նուարդ** թագուհիին հետ, ու զիրար շատ կը սիրէին: Արա, բարի մարդ ըլլալով, պատերազմիլ չէր սիրէր եւ կ'ուզէր, որ ամէն մարդ խաղաղ ու երջանիկ ապրի:

Արայի ժամանակ Ասորեստանի մէջ կ'ապրէր զօրաւոր թագաւոր մը, որ **Նինոս** կը կոչուէր: Ասիկա, հին պատմութիւններէն լսելով, թէ իր մեծ պապը՝ Բել, սպաննուած է Հայկի ձեռքով, ուզեց վրէժ առնել հայերէն եւ ամենքը սպաննել, բայց իր իշխանները ըսին, թէ հայերու դէմ կռուիլը շատ վտանգաւոր է, որովհետեւ անոնք թէ՛ քաջ են եւ թէ՛ շատ կը սիրեն իրենց իշխանը: Այն ատեն Նինոս մեծ մարդիկ դրկեց Արային ու հետը բարեկամ եղաւ:

Նինոս ունէր **Շամիրամ** անունով գեղեցիկ, բայց շատ չար թագուհի մը, որուն համար կը պատմեն, թէ պաղեստինցի որբ աղջիկ մըն էր. փոքրիկ հասակին զինքը փոսի մը մէջ նետած էին. հոն վայրի աղանիներ զինքը կը կերակրէին. փոքրիկ աղջիկը կը մեծնայ եւ Ասորեստան երթալով՝ իր գեղեցկութեան շնորհիւ Նինոսի կին կ'ըլլայ:

ԱՐԱՅԻ ԵՒ ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Շամիրամ խնդրեց Նինոսէն, որ գոնէ հինգ օրուան համար ինքը թագաւորէ: Նինոս զինքը շատ սիրելուն պատճառաւ ընդունեցաւ: Այն ատեն Շամիրամ իսկոյն կտրել տուաւ Նինոսի գլուխը եւ Ասորեստանի վրայ ինքը թագաւորեց: Շատ փառասէր էր եւ իր հսկայ բանակներով կ'ուզէր գրաւել բոլոր աշխարհը: Լսելով, որ Արան շատ գեղեցիկ է ուզեց հետը ամուսնանալ: Արա մերժեց: Ասոր վրայ Շամիրամ պատերազմի ելաւ Արայի դէմ, որպէսզի անոր յաղթելով՝ հետը բռնի ամուսնանայ: Իր զօրքերուն հրաման տուաւ ջարդել Արայի բանակը, բայց «Արան ողջ-ողջ ինձի պիտի բերէք» ըսաւ անոնց: Պատերազմի միջոցին Արան պարզ զինուորի նման հագուած էր. քաջութեամբ կռուեցաւ ու զարնուելով մեռաւ:

Շամիրամ շատ սիրեց Հայաստանը գեղեցիկ եւ ծառագարդ ըլլալուն համար: Վանի լիճին մօտ մեծ քաղաք մը շինել տուաւ ու կոչեց **Շամիրամակերտ**: Ամառները կու գար՝ հոն անցընելու:

ԲԱՌԵՐ

Պարկեշտ – բարոյապէս զուսպ, չափաւոր, անբասիր վարքի տեր:
Վրէժ – կրած չարիքի փոխհատուցման բուռն փափաք, քէն:
Փառասէր – փառքի հետամուտ, փառք ու պատիւ սիրող:
Բռնի – ոյժով կատարուած, զօրով:
Ծառագարդ – ծառերով զարդարուն:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ կապերը եւ որոշէ՛ անոնց իմաստային տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Արային գեղեցկութիւնը:

ԴԱՍ 8.

Կապերուն գործածութիւնը այս կամ այն հոլովին հետ

Ինչպէս նշուած է արդէն, կապերը կը գործածուին կապուող բառերուն հետ եւ իրենք կ'որոշեն անոնց հոլովը, որովհետեւ համապատասխանութիւն գոյութիւն ունի կապի նշանակութեան եւ կապուող բառի հոլովական ձեւին ընտրութեան միջեւ:

Ժամանակակից հայոց լեզուի մէջ ուղղական հոլովին հետ կը գործածուի **քան** կապը: Օրինակ՝

Արամը նուազ աշխատասէր է, քան դուն:

Ժամանակակից հայոց լեզուի մէջ ուղղական-հայցական հոլովին հետ կը գործածուին հետեւեալ կապերը. *դէպի* (դէպի դաշտ), *զերթ* (զերթ արեգակ), *ի վեր* (երկու ժամէ ի վեր), *ի վար* (գետակն ի վար), *առաջ* (երկու տարի առաջ), *ետք* (երկու տարի ետք), *նախքան* (նախքան անոր վերադարձը), *իբրեւ* (իբրեւ զիս ընդունէ):

Սակայն պէտք է նկատի ունենալ հետեւեալ պարագաները.

ա. Անձնական դերանուններուն առաջին, երկրորդ եւ երրորդ դէմքերուն հետ **դէպի** եւ **մինչեւ** կապերը կը պահանջեն տրական հոլով:

Օրինակ՝ դէպի քեզի, դէպի մեզի, մինչեւ քեզի, մինչեւ մեզի:

բ. **Առաջ** եւ **ետք** կապերը ուղղական-հայցական հոլովին հետ կը գործածուին միայն ժամանակ ցոյց տուող բառերու պարագային (*երկու օր առաջ, երկու օր ետք*): Այլ բառերու պարագային կը գործածուի բացառականը՝ *քննութենէն առաջ, դասէն ետք*:

գ. **Իբրեւ** կապը կրնայ գործածուիլ բոլոր հոլովներուն հետ: Օրինակ՝
Ես, իբրեւ ուսուցիչ, կը յարգեմ ձեզ: (ուղղական հոլով)

Յակոբը իբրեւ զիս ընդունէ: (հայցական հոլով)

Յակոբին՝ իբրեւ մասնագէտի խորհուրդները գնահատելի են:
(սեռական հոլով)

Ես կը դիմեմ ձեզի՝ իբրեւ հարագատներու: (տրական հոլով)

Ես գոհ եմ ձեզմէ՝ իբրեւ աշակերտներէ: (բացառական հոլով)

Ես կը հպարտանամ ձեզմով՝ իբրեւ աշակերտներով: (գործիական հոլով)

Ժամանակակից հայոց լեզուի մեջ սեռական հոլովին հետ կը գործածուին հետեւեալ կապերը. *վրայ, տակ, մէջ, քով, մօտ, առջեւ, ետեւ, դիմաց, միջեւ, մէջտեղ, դէմ, շուրջ, մասին, առթիւ, շնորհիւ* (յետադաս դիրքի մէջ), *ձեռամբ, պատճառաւ, վերեւ, ներքեւ, ատեն, միջոցաւ* եւ այլն:

Տրական հոլովով խնդիր կ'առնեն հետեւեալ կապերը. *առանց, հակառակ, համար, չափ, պէս, հետ, հանդէպ, փոխանակ, փոխարէն, համեմատ, համաձայն, շնորհիւ* (նախադաս դիրքի մէջ), *համապատասխան, ի շահ, յօգուտ, յանուն, ի վնաս, ի հեճուկս, ի լուր, ի խնդիր, ի տես, բաղդատմամբ, ըստ, նկատմամբ*:

Ժամանակակից հայոց լեզուի մէջ բացառական հոլովին հետ կը գործածուին հետեւեալ կապերը. *բացի, ետք, առաջ, աւելի, նուազ, վար, վեր, ներս, դուրս, ասդին, անդին, զատ, հեռու, ի վեր, սկսեալ, անկախ*:

Գործիական հոլովով խնդիր կ'առնեն հետեւեալ կապերը՝ *հանդերձ, մէկտեղ, միասին*:

Վարժութիւն

Ա. Փակագիծերուն մէջէն ճիշդ ձեւերը ընտրէ՛.

(մեզ, մեզի) համար	(ձեր, ձեզի) հետ
(մեզի, մեր) հանդէպ	(իրար, իրարու) վրայ
(իրարու, իրար) նկատմամբ	(ձեր, ձեզի) չափ
(իր, իրեն) մասին	(իրար, իրարու) հետ
(իրար, իրարու) համար	(ձեր, ձեզի) վերաբերեալ
(ձեր, ձեզի) փոխարէն	(ձեր, ձեզի) նկատմամբ

Բ. Պատշաճ հոլովաձեւերով կապուող բառէ՛ր դիր:

- ա. Ներսը մարդ չկայ՝ բացի
- բ. Մեր տունը կարծես նոր կեանք ստացած է ի վեր:
- գ. Այս գիշեր փոքրիկ հաւաքոյթ մը ունինք ի պատիւ մեր
- դ. Արամը նորէն չեկաւ՝ տուած հակառակ:
- ե. Նախ պէտք է դո՛ւն գայիր այցելութեան՝ ըստ մեր
- զ. Վէճի բոնուեցայ հետ:

- է. Թղթատարին բերած կապոցը յանձնեցի Արշակ Մարկոսեանին՝
իբրև:
- ը. Թէև այս հարցը քեզի չի վերաբերիր, բայց կուզեմ զայն յայտնել ի
լուր
- թ. Բացի մաքուր՝ պէտք է նաև լաւ սնունդ ստանաս:
- ժ. Ես քեզի կընկերանամ տուն:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՅԵԱԼԷՆ

ԱՆՈՒՇԱԻԱՆ

Արա Գեղեցիկ մանչ զաւակ մը ուներ՝ Կարդոս անունով: Շամիրամ թագուհին, միշտ յիշելու համար գեղեցիկ Արան, անոր տղուն անունը փոխեց եւ **Արայեան Արա** անուանեց: Ամէն ամառ հիւր կու գար Կարդոսին: Ահագին դրամ ծախսեց գեղեցկացնելու համար Վան քաղաքին շուրջը, որ շատ կը սիրէր, աւելի հաճելի կը գտներ, քան իր տափարակ ու փոշոտ երկիրը: Շամիրամ, իր որդիին հետ պատերազմի բռնուելով, քիչ վերջը մեռաւ:

Կարդոս իր իշխանութեան ժամանակ երջանիկ հայրիկ մը եղաւ՝ ունենալով շատ գեղեցիկ մանչ զաւակ մը, որուն անունը **Անուշաւան** դրաւ:

Հայրը ուզեց, որ Անուշաւանը աստուածներուն նուիրուի, անոր համար փոքրիկ տղան տարաւ Արմաւիր քաղաքին մօտ գտնուող **Սօսիներու** սրբազան անտառը: Սօսիները լայն տերեւներով մեծ ծառեր են. Հայերը ապագային համար գուշակութիւններ կ'ընէին անոնց տերեւներու ձայներէն:

Անտառին մեջ մարմարէ խորան մը կար. Կարդոսը Անուշաւանը անոր վրայ դրաւ. խունկ եւ անուշահոտ իւղեր այրեցին ու տղան ծուխին վրայ բռնեցին, որպէսզի սրբանայ. անոր համար Անուշաւանը կոչուեցաւ **Սօսանուէր**, այսինքն՝ Սօսիներուն նուիրուած:

Անուշաւան դեռ 14 տարեկան տղայ էր, երբ հայրը մեռաւ: Շամիրամի որդին՝ Նինուաս, պատերազմելով գերի բռնեց Անուշաւանը եւ իր մայրաքաղաքը տարաւ: Անիկա երկար տարիներ հոն մնաց: Հայերը ստիպուեցան հարկ վճարել Նինուասին, մինչեւ որ բարեկամներու միջոցով Անուշաւանը ազատեցաւ եւ Հայաստան դառնալով՝ իշխեց մեր երկրին վրայ:

Անուշաւան, տարիքը առնելով, շատ խելացի եւ քաջ իշխան մը եղաւ. տիրեց ամբողջ Հայաստանին եւ ա՛լ դրամ չտուաւ Նինուասին, որովհետեւ քաջերու բանակ մը ունէր, որ կը պաշտպանէր Հայաստանը: Վաթսուներէք տարի իշխելէ վերջ, մեծ անուն ձգելով, մեռաւ:

ԲԱՌԵՐ

Տափարակ – տափակ, հարթ:

Խորան – [հոս`] գոհասեղան:

Խունկ – բուսական խեժ, որ կրակի վրայ դրուելով՝ անուշահոտ ծուխ կ'արձակէ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ կապերը եւ որոշէ անոնց հետ կապուած բառերուն հոլովը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Սօսանուէր Անուշաւանը:

ԴԱՍ 9.

ՇԱՂԿԱՊ

ՇԱՂԿԱՊԸ ԻԲՐԵՒ ԽՕՍՔԻ ՄԱՍ

ա. Քի՛չ խօսէ եւ շա՛տ մտիկ ըրէ:

Այս նախադասութեան մէջ **եւ** բառը *քի՛չ խօսէ* բաղադրիչ նախադասութիւնը կը շաղկապէ *շա՛տ մտիկ ըրէ* բաղադրիչ նախադասութեան:

բ. Լուրջ եւ աշխատասէր աշակերտ մըն է Աշոտը:

Այս նախադասութեան մէջ **եւ** բառը կը շաղկապէ նախադասութեան *լուրջ* եւ *աշխատասէր* անդամները:

Օրինակներէն եզրակացնելով՝ կրնանք ըսել, որ **եւ** բառը շաղկապ է:

Նախադասութիւններ կամ նախադասութեան անդամներ իրարու կապող բառերը կը կոչուին շաղկապ:

ՇԱՂԿԱՊՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԻՐԱՐԿՈՒԹԵԱՆ ՁԵՒԻ

Ա. Մենադիր շաղկապներ

- 1. Դուն աշխատասէր եւ ուշիմ աշակերտ ես:*
- 2. Արշակը փորձեց համոզել զիս, բայց ձախողեցաւ:*
- 3. Կը փափաքիմ, որ ներկայ ըլլաս հանդիսութեան:*

Առաջին նախադասութեան մէջ **եւ** շաղկապը առանձինն կը շաղկապէ *աշխատասէր* եւ *ուշիմ* անդամները:

Երկրորդ նախադասութեան մէջ **բայց** շաղկապը առանձինն կը շաղկապէ *Արշակը փորձեց համոզել զիս* բաղադրիչ նախադասութիւնը *ձախողեցաւ* բաղադրիչին:

Երրորդ նախադասութեան մէջ **որ** շաղկապը նոյնպէս առանձինն կը շաղկապէ կը *փափաքիմ* բաղադրիչ նախադասութիւնը *ներկայ ըլլաս հանդիսութեան* բաղադրիչին:

Մենադիր կը կոչուին նախադասութեան մէջ առանձինն գործածուող շաղկապները:

Մենադիր են՝ *եւ, ու, իսկ, բայց, սակայն, մանաւանդ որ, այսինքն, կամ, մինչդէռ, նաեւ, մինչ, որ, որովհետեւ, քանի դէռ, քանի որ, մինչեւ որ, որպէսզի, որ է, այն է, վասնզի, ուստի, ուրեմն* եւ այլն:

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր մենադիր շաղկապներով:

(Իսկ, ու, քանի որ, որպէսզի, ալ, որովհետեւ, մինչդէռ, այսինքն, եթէ, որ:)

1. Երեկոյեան Լեւոնն Վարդանը գիւղ գացին:
2. Նախընտրելի է, պայուսակը տուն տանիս:
3. Պահապան շուները կը հսկէին, հովիւը կը քնանար:
4. Բանախօսը չկրցաւ իր միտքը արտայայտել, շատ յուզուած էր:
5. Ժողովը յետաձգեցինք, ատենապետը հիւանդ է:
6. Անոնք միշտ կը բամբասեն Տիգրանը, ան գովեստով կը խօսի անոնց մասին:
7. յանցանքդ խոստովանիս, պատիժդ կը մեղմանայ:
8. Սովորական ժամուն, ժամը ուրիշն արթնցայ:
9. Եղբայրս Փարիզ մեկնեցաւ, իր ուսումը շարունակէ:

Բ. Կրկնադիր շաղկապներ

1. Ո՛չ դրամին կիրքը ունիմ, ո՛չ փառքին, ո՛չ համբաւին:
2. Ան ինծի համար թէ՛ հայր եղած է, թէ՛ ուսուցիչ:
3. Կա՛մ դասերդ կը սերտես, կա՛մ կը քնանաս:
4. Երածիշտը ե՛ւ կը նուագէր, ե՛ւ կէրգէր:

Այս չորս նախադասություններուն մէջ գործածուած են այնպիսի շաղկապներ, որոնք կրկնուած են. այդ պատճառով ալ անոնք կը կոչուին **կրկնադիր շաղկապներ:**

Այդ շաղկապներն են՝ (ուշադի՛ր եղի՛ր կետադրութեան) *ե՛ւ ..., ե՛ւ / թե՛ ..., թե՛ (թե՛... եւ թե՛) / կա՛մ..., կա՛մ (կա՛մ... եւ կամ) / ալ..., ալ / ո՛չ..., ո՛չ / (ո՛չ..., ոչ ալ / ո՛չ... եւ ոչ ալ):*

Ծանօթութիւն:

ա. *Ո՛չ..., ո՛չ* կրկնադիր շաղկապին յաջորդող դիմաւոր բայը սովորաբար հաստատական ձեւով կարտայայտուի: Օրինակ՝

Այդ տխուր լուրին տպաւորութեան տակ ո՛չ ուտելու, ո՛չ խմելու ցանկութիւն ունէինք:

բ. Դիմաւոր բայը միշտ ժխտական ձեւով կարտայայտուի, երբ ան *ո՛չ..., ո՛չ* կրկնադիր շաղկապէն առաջ կը դրուի: Օրինակ՝

Պաշարուածները ա՛լ յոյս չունէին ո՛չ ռազմամթերք ստանալու, ո՛չ ուտելիք գտնելու:

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր կրկնադիր շաղկապներով:

(*ե՛ւ..., ե՛ւ / թե՛ ..., թե՛ / կա՛մ..., կա՛մ / ո՛չ ..., ո՛չ ալ / ե՛ւ..., ե՛ւ / ... ալ, ... ալ / ո՛չ ..., ո՛չ / կա՛մ..., կա՛մ / ո՛չ..., ո՛չ / կա՛մ..., կա՛մ):*

1. հեռացի՛ր անկէ, զգո՛յշ եղի՛ր անոր ներկայութեան:
2. Մենք ծովափը քալեցինք, խեցիներ հաւաքեցինք:
3. Արամը կը կարդար, կը գրէր:
4. մեծը կընտրես, փոքրը:
5. Երաժիշտը անկին մը նստած էր. կը նուագէր, կէրգէր:
6. մենք, դուք կրնայիք հանդուրժել այս նախաստինքը:
7. Չեմ ուզեր Աշոտին այցելութիւնը, իր բարեւը:
8. Հեղեղը ողողեց արտերն, պարտէզներն
9. պիտի պատժուիս, ներում պիտի ստանաս:
10. Յակոբ Օշական մեծ դէմք է իբրեւ վիպագիր, իբրեւ քննադատ:

Գ. Ձուգադիր շաղկապներ

Արամը կերաւ ոչ միայն սառնանոյշ, այլեւ երկու նկանակ:

Այս նախադասութեան նամագօր անդամները՝ *սառնանոյշ* եւ *երկու նկանակ*, իրարու շաղկապուած են **ոչ միայն...**, **այլեւ** շաղկապով, որ գուգադիր կը կոչուի:

Նոյնպէս հետեւեալ նախադասութիւնը:
Թէեւ շատ փորձեցի համոզել ուսուցիչը, բայց ձախողեցայ:

Նախադասութեան բաղադրիչները՝ *շատ փորձեցի համոզել ուսուցիչը* եւ *ձախողեցայ*, իրարու շաղկապուած են **թէեւ...**, **բայց** գուգադիր շաղկապով:

Ձուգադիր կը կոչուին սովորաբար գոյգով, միասին, բայց ոչ քով քովի գործածուող շաղկապները:

Ձուգադիր շաղկապներն են՝ *ոչ միայն..., այլեւ / ոչ միայն..., այլ նաեւ / ոչ թէ..., այլ / թէեւ..., բայց / թէեւ..., սակայն / որովհետեւ..., ուրեմն (ուստի) / քանի որ ..., ուստի (հետեւաբար) / թէպէտ..., բայց / թէպէտ..., սակայն / եթէ..., հապա* (այս վերջին բաղադրիչը՝ հարցական նախադասութիւն):
Օրինակ՝

Եթէ տուն պիտի չերթաս, հապա ո՞ր պիտի երթաս:

Վարժութիւն

Սմբողջացո՛ւր գուգադիր շաղկապներով:

(Ոչ միայն..., այլեւ / թէեւ..., սակայն / ոչ թէ ..., այլ / քանի որ..., ուստի / թէեւ..., բայց / որովհետեւ..., ուրեմն / ոչ միայն..., այլեւ / ոչ թէ..., այլ / թէեւ..., սակայն / թէպէտ..., սակայն):

1. Դուն խստութեամբ պէտք է վարուէիր, բարեացական վերաբերում ցոյց տայիր:
2. բոլոր միջոցները օգտագործեցի, չհասայ իմ նպատակիս:
3. մերժեցիր առաջարկս, որոշեցի ուրիշին դիմել:

4. կեանքի թերութիւններուն վրայ լալը տկարութիւն կը սեպեմ, կը նախընտրեմ խնդալ՝ կեանքին ծիծաղելի կողմերը շեշտուած ներկայացնելով:
5. Ճշմարիտ արժանիքը ժամանակ մը կ'անտեսուի, ի վերջոյ կը գնահատուի:
6. շատ խնդրեցինք, մերժուեցանք:
7. մենք հեռու ենք մեր հայրենիքէն, հոգիով կառչած ենք անոր մշտնջենական գոյութեան:
8. Բանախօսը կը խօսէր, նկարներ կը ցուցադրէր:
9. Անսպասելիօրէն անձրել, կարկուտ տեղաց:
10. Սուրէնին, Արամին հանդիպեցայ փողոցը:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԶԱՐՄԱՅՐ ՆԱՀԱՊԵՏ

Քրիստոսէ շատ տարիներ առաջ Հայաստանի վրայ իշխեց Զարմայր նահապետը: Ասիկա թե՛ շատ խելացի, թե՛ անչափ քաջ մէկն էր, անոր համար զինքը **Սարսափելի** կը կոչէին: Բոլոր օտարները դուրս քշեց Հայաստանէն. մեր երկիրը ազատեց գերութենէ եւ հայ քաջերէ բաղկացած այնպիսի անվախ բանակ մը կազմեց, որ կրնար ո՛ր եւ է ազգի դէմ կռուիլ եւ յաղթել:

Զարմայրի ժամանակ յոյները պատերազմի ելած էին Տրոյիա քաղաքին դէմ, որ կը գտնուէր Փոքր Ասիայի մէջ: Քանի որ Տրոյիայի Պրիամոս թագաւորին տղան յափշտակած էր Յունաստանի Մենելաոս թագաւորին կինը՝ Հեղինէն, այս երկու թագաւորները իրարու դէմ պատերազմ ըրին, որ տասը տարի տեւեց: Տրոյիայի թագաւորը՝ Պրիամոս, բարեկամ ըլլալով մեր Զարմայր նահապետին, զինքը օգնութեան կանչեց Տրոյիան պաշտպանելու համար:

Զարմայր պատերազմի գնաց հայկական գունդերով: Յոյները չկրցան գրաւել Տրոյիան, բայց քաղաքը առնելու համար խարդախութիւն մը ըրին: Տախտակէ մեծ ձի մը շինեցին, մէջը շատ մը զինուորներ դրին ու իրենք հեռացան քաղաքին մօտէն: Առաւօտեան, երբ տրոյիացիները տեսան, որ մարդ չկար, բացի այդ տախտակէ մեծ ձիէն, առին քաղաքին մէջ տարին՝ կարծելով, թէ յոյները նուէր ձգած են իրենց աստուածներուն:

Գիշեր ատեն ձիուն փորեն դուրս ելան պահուրտած յոյն զինուորները եւ քաղաքին դուռերը բացին: Դարձեալ սաստիկ պատերազմ սկսաւ: Թեեւ տրոյիացիները սաստիկ դիմադրութիւն ցոյց տուին, սակայն ի վերջոյ պարտուեցան: Շատ քաջութիւններէ վերջ Չարմայր ալ մեռաւ պատերազմին մէջ: Իսկ Տրոյիան կործանուեցաւ նենգ յոյներէ կողմէ:

ԲԱՌԵՐ

Խարդախութիւն – խաբեբայութիւն, կեղծարարութիւն:

Կործանուիլ – աւերուիլ, քանդուիլ, խորտակուիլ, փլիլ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՝ շաղկապները եւ որոշէ՝ անոնց տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ հայթայթէ Տրոյայի պատերազմին վերաբերեալ եւ պատմէ՝ դասընկերներուդ:

ԴԱՍ 10.

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԵՒ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ա. Համադասական շաղկապներ

Արամը պարկեշտ եւ ուշիմ աշակերտ մըն է:

Այս նախադասութեան մէջ **եւ** բառը կը շաղկապէ *պարկեշտ, ուշիմ* համազօր որոշիչները:

Մայրս շուկայէն գնեց խնձոր եւ տանձ:

Այս նախադասութեան մէջ **եւ** բառը կը շաղկապէ *խնձոր, տանձ* համազօր ուղիղ խնդիրները:

Արան շատ փորձեց, բայց ձախողեցաւ:

Այս բարդ նախադասութեան մէջ երկու բաղադրիչները՝ *Արան շատ փորձեց, ձախողեցաւ*, իրարու կապուած են **բայց** բառով. անոնցմէ ոչ մէկը միւսէն կախեալ է, միւսին լրացումն է: Այլ խօսքով՝ չենք կրնար առաջին բաղադրիչին անդամներէն մէկուն հարցում ուղղել՝ պատասխանը գտնելու համար երկրորդ բաղադրիչին, եւ ընդհակառակն՝ չենք կրնար երկրորդ բաղադրիչին անդամներէն մէկուն հարցում ուղղել՝ պատասխանը գտնելու համար առաջին բաղադրիչին: Ինչո՞ւ. որովհետեւ երկու բաղադրիչներն ալ իրարու համադաս են ու համազօր:

Եւ, բայց բառերը համադասական շաղկապներ են:

Համադասական են այն շաղկապները, որոնք կը շաղկապեն նախադասութեան համազօր անդամներ կամ համազօր, համադաս նախադասութիւններ:

Հայերէնի համադասական շաղկապներն են՝

<i>եւ</i>	<i>նաեւ</i>	<i>թէ՛ ..., թէ՛ (թէ՛ ... եւ թէ)</i>
<i>ու</i>	<i>ինչպէս նաեւ</i>	<i>ո՛չ ..., ո՛չ</i>
<i>իսկ</i>	<i>այսինքն</i>	<i>ե՛ւ..., ե՛ւ</i>
<i>բայց</i>	<i>այն է</i>	<i>կա՛մ..., կա՛մ (կա՛մ... եւ կամ)</i>

<i>սակայն</i>	<i>բայց եւ այնպէս</i>	<i>ապա թէ ոչ</i>
<i>կամ</i>	<i>եւ ոչ թէ (ոչ թէ)</i>	<i>ոչ միայն..., այլեւ</i>
<i>այլ</i>	<i>կամ թէ</i>	<i>ոչ միայն..., այլ նաեւ</i>
<i>եւս</i>	<i>եւ կամ թէ</i>	<i>ոչ թէ..., այլ</i>
<i>մինչդեռ</i>	<i>եւ կամ</i>	<i>եւ ոչ թէ</i>

եւ այլն

Բ. Ստորադասական շաղկապներ

Առնենք 2 բաղադրիչ ունեցող բարդ նախադասութիւն մը:

Յասմիկը տուն վերադարձաւ, որպէսզի իր մօրը օգնէ:

Որպէսզի շաղկապը *իր մօրը օգնէ* երկրորդ նախադասութիւնը կը կապէ *Յասմիկը տուն վերադարձաւ* առաջին բաղադրիչ նախադասութեան եւ միաժամանակ անոնց միջեւ կը ստեղծէ ստորադասական յարաբերութիւն մը:

Իսկ ինչո՞ւ կըսենք ստորադասական յարաբերութիւն:

Ստորադասական յարաբերութիւն կըսենք, որովհետեւ *իր մօրը օգնէ* բաղադրիչ նախադասութիւնը, շնորհիւ *որպէսզի* շաղկապին, կը դառնայ լրացում *Յասմիկը տուն վերադարձաւ* բաղադրիչ նախադասութեան, յատկապէս անոր ստորոգիչին (*վերադարձաւ*), կախեալ կըլլայ անկէ: Այսպէս.

Ինչո՞ւ Յասմիկը տուն վերադարձաւ:

Պատասխանը՝ *որպէսզի օգնէ իր մօրը*, կըլլայ լրացում *վերադարձաւ* ստորոգիչին:

Այս պարագային լրացում բաղադրիչ նախադասութիւնը կը կոչենք ստորադաս նախադասութիւն, իսկ *Յասմիկը տուն վերադարձաւ*՝ գերադաս նախադասութիւն:

Նոյնպէս՝

Ես կ'ուզեմ, որ դուն յաջողիս կեանքիդ մէջ:

Որ շաղկապը երկրորդ բաղադրիչ նախադասութիւնը՝ *դուն յաջողիս կեանքիդ մէջ*՝ իբրեւ լրացում, կը կապէ առաջին բաղադրիչ նախադասութեան (*ես կ'ուզեմ*): Այսպէս.

Ես ի՞նչ կ'ուզեմ:

Պատասխանը՝ *որ դուն յաջողիս կեանքիդ մէջ:*

Առաջին բաղադրիչը՝ *ես կ'ուզեմ*, գերադաս նախադասութիւն է, իսկ երկրորդը՝ լրացումը՝ *որ դուն յաջողիս կեանքիդ մէջ*, ստորադաս նախադասութիւն է:

Որպէսզի, որ ստորադասական շաղկապներ են:

Ստորադասական են այն շաղկապները, որոնք բարդ նախադասութեան մէջ ստորադաս նախադասութիւնը կը շաղկապեն գերադաս նախադասութեան:

Հայերէնի ստորադասական շաղկապներն են՝

<i>որ</i>	<i>թէպէտ</i>	<i>միայն թէ</i>
<i>թէ</i>	<i>թէպէտեւ</i>	<i>եթէ նոյնիսկ</i>
<i>եթէ</i>	<i>քանի որ</i>	<i>ուստի</i>
<i>որպէսզի</i>	<i>քանի դեռ</i>	<i>ուրեմն</i>
<i>որովհետեւ</i>	<i>քանի</i>	<i>հետեւաբար</i>
<i>մինչեւ որ</i>	<i>նախքան որ</i>	<i>ուրեմն էւ</i>
<i>մինչ</i>	<i>մանաւանդ որ</i>	<i>ուստի էւ</i>
<i>թէեւ</i>	<i>չէ՞ որ</i>	<i>հետեւաբար էւ</i>
<i>քան թէ</i>	<i>վասնզի</i>	<i>այնպէս որ</i>
<i>թէկուզ</i>	<i>քանզի</i>	<i>առանց որ</i>
		<i>էւ այլն</i>

Շաղկապները նախադասութեան անդամ չեն ըլլար:

Ծանօթութիւն 1:

Ստորադասական շաղկապներուն հետ պէտք չէ շփոթել յարաբերական դերանունները, որոնք առանձինն կամ **որ** շաղկապին յարադրումով շաղկապներու պէս գերադաս եւ ստորադաս նախադասութիւնները կը կապեն իրարու, բայց, ի տարբերութիւն շաղկապներու, կը դառնան նախադասութեան անդամ: Օրինակ՝

Տղան, որ տուն կ'երթար, ծանօթ է ինծի (որ՝ յարաբերական դերանուն. պաշտօնը՝ ենթակայ):

Ուսուցիչը դասարան մտաւ այն պահուն, երբ աշակերտները կ'աղմկէին (երբ՝ յարաբերական դերանուն. պաշտօնը՝ ժամանակի պարագայ):

Ով որ կ'ուզէ, կրնայ մեզի ընկերանալ (ով որ՝ յարաբերական դերանուն. պաշտօնը՝ ենթակայ):

Ծանոթութիւն 2:

Ձուգադիր շաղկապներէն ստորադասական են հետեւեալները.

Թէեւ..., բայց (սակայն) / որովհետեւ..., ուրեմն (ուստի) / քանի որ..., ուստի (հետեւաբար) / թէպէտ..., բայց (սակայն) / եթէ..., հապա (ապա ուրեմն):

Այս շաղկապներով կազմուած բարդ ստորադասական նախադասութեան մէջ գերադասը վերջադաս է, այսինքն՝ ձեւաւորուած է զուգադիր շաղկապին երկրորդ բաղադրիչով, իսկ ստորադասը՝ առաջադաս, որ ձեւաւորուած է զուգադիր շաղկապին առաջին բաղադրիչով: Այսպէս՝

Որովհետեւ երիտասարդը չէր աճապարեր, ուստի չառարկեց:

Վերոյիշեալ նախադասութեան մէջ գերադաս է *ուստի չառարկեց* բաղադրիչ նախադասութիւնը, իսկ ստորադասը է *որովհետեւ երիտասարդը չէր աճապարեր* բաղադրիչ նախադասութիւնը:

Վարժութիւն

Ա. Համադասակա՞ն, թէ ստորադասական:

որ

այսինքն

մինչեւ որ

նաեւ

այնպէս որ

վասնզի

քանի դեռ

նախքան որ

բայց

մինչդէռ

չէ՞ որ

մինչ

մանաւանդ որ

ապա թէ ոչ

այն է

քանի

Բ. Բարդ ստորադասական նախադասութեան բաղադրիչները իրարու կը շաղկապուին ստորադասական շաղկապներով կամ յարաբերական դերանուններով:

Որոշէ՛ ընդգծուածներուն խօսքի մասը (ստորադասական շաղկա՞պ, թէ՞ յարաբերական դերանուն):

1. *Ինչ որ* կուզես, կը կատարեմ:

2. Ես յանցաւոր չեմ. *ուրեմն* մտահոգուելու պատճառ մը չունիմ:

3. *Ով որ* կուզէ, կրնայ ներկայ գտնուիլ:

4. Այն տղան, *որուն* ձեռքէն բռնած էի, եղբօրս կրտսեր զաւակն է:

5. *Քանի մենք կը զիջինք, ինք աւելի յոխորտ կը դառնայ:*
6. *Մինչև որ դուք ձեր գործը աւարտէք, ես տուն կը վերադառնամ:*
7. Մեր դիմացը ինքնաշարժներու շարժուն պատնէշ մըն էր, *այնպէս որ ստիպուած էինք շատ զգուշութեամբ յառաջանալ:*
8. *Ուր որ կուգես, կրնաս երթալ:*
9. *Որո՞ւ որ հանդիպիս, զինք հրաւիրէ մեր հանդիսութեան:*
10. *Թող մեր արիւնն ալ խառնուի մեր նահատակներուն արիւնին, միայն թէ հայրենիքը ազատագրուի:*

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՅԵԱԼԷՆ

ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱՒՈՐ

Պարոյր հսկայ մարդ էր. շատ ուժով եւ քաջ իշխան եղաւ: Հայ քաջերով մեծ բանակ մը կազմեց ու սկսաւ մեր երկրէն դուրս քշել բոլոր օտար զինուորները: Իր ատեն Հայաստանը սկսաւ հարստանալ. գիւղացիները հանգիստ աշխատեցան հողը ցանելու եւ հնձելու համար: Պարոյր շատ կը սիրէր իր հայրենիքը, ուստի ամէն բան ըրաւ, որպէսզի հայերը երջանիկ ապրին:

Հայաստանի հարաւը կը գտնուէր Ասորեստանի մեծ թագաւորութիւնը, որուն մայրաքաղաքը **Նինուէ** կը կոչուէր: Անոնք տիրած էին շատ մը ազգերու, ինչպէս նաեւ Հայաստանի մէկ մասին, ու շատ կը չարչարէին հպատակ ազգերը, այն է՝ շատ դրամ կ'առնէին եւ կը կողոպտէին զանոնք: Ասորեստանի թագաւորին հպատակ էին նաեւ Մարաստանը եւ Բաբելոն քաղաքը, որ կը գտնուէր Եփրատ գետին վրայ: Թէ՛ Մարաստանը, թէ՛ Բաբելոնը, միանալով Պարոյր նահապետին հետ, պատերազմի ելան Նինուէի դէմ եւ երեք տարի զայն պաշարելով՝ առին: Անոր թագաւորը՝ **Սարդանաբադ**, կրակներու մէջ ինկաւ ու մեռաւ, իր կիները նոյնպէս: Ասորեստանի թագաւորութիւնը իրենց մէջ բաժնեցին մարերը, հայերը եւ բաբելոնցիները: Պարոյր Հայաստանի ամենէն քաջ մարդը եղաւ ու առաջին անգամ թագաւոր պսակուեցաւ Հայաստանի, մինչդէռ իրմէ առաջ հայ իշխանները նահապետ կը կոչուէին: Պարոյր փառաւոր թագաւորութիւն մը ձգեց իր **Հրաչեայ** որդիին ու մեռաւ խաղաղութեամբ:

ԲԱՌԵՐ

Կողոպտել – ուրիշին ունցուածքը խլել, յափշտակել, թալանել:

Պաշարել – շրջափակել, շրջապատման մէջ առնել, չորս կոծմէն պատել, օղակել:

Պսակուիլ – 1. թագադրուիլ, 2. հարսանիքով ամուսնանալ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ շաղկապները եւ որոշէ՛ անոնց տեսակները (համադասական կամ ստորադասական):

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Պարոյր թագաւորը:

ԴԱՍ 11.

ՇԱՂԿԱՊԼԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Շաղկապները, ինչպես գիտես, իրարու կը շաղկապեն նախադասութեան անդամներ կամ նախադասութիւններ՝ անոնց միջեւ ստեղծելով իմաստային կապակցական յարաբերութիւններ:

Ահաւասիկ, ընդհանուր գիծերու մէջ, շաղկապներուն իմաստային խումբերը:

Ա. Միառորիչ-յաւելական՝ *եւ, ու, ալ, եւս, նաեւ, նոյնպէս, այլեւ, թէ... թէ, ո՛չ ... ո՛չ, ոչ միայն ... այլեւ, նոյնպէս եւ եւ այլն.*

Բ. Ներհակական՝ *իսկ, բայց, սակայն, մինչդէռ, ոչ թէ... այլ, ոչ թէ, եւ ոչ թէ, ապա թէ ոչ, այլապէս, բայց եւ այնպէս, այսուամենայնիւ, այնուամենայնիւ, այսուհանդերձ.*

Գ. Տրոհական՝ *եւ կամ, կամ թէ, կամ, կամ թէ ոչ, թէ (հարցական նախադասութիւններու մէջ).*

Դ. Բացայայտման՝ *այսինքն, այն է, որ է.*

Ե. Մեկնական՝ *որ, թէ.*

Զ. Նպատակի՝ *որպէսզի.*

Է. Պայմանի՝ *եթէ, միայն թէ* (ըղծական եղանակով ժամանակաձեւ կը պահանջէ), *միայն* (ըղծական եղանակով ժամանակաձեւ կը պահանջէ).

Ը. Պատճառի եւ հիմունքի՝ *որովհետեւ* (պատճառի), *քանի որ* (հիմունքի), *չէ՞ որ* (պատճառի եւ հիմունքի), *մանաւանդ որ* (պատճառի), գրաբարեան *քանզի, վասնզի:*

ՇԱՂԿԱՊԼԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ըստ կազմութեան՝ շաղկապները կըլլան երեք տեսակ.

Ա. Պարզ շաղկապներ՝ *այլ, ապա, բայց, եթէ, եւ, ու, ալ, եւս, թէ, իսկ, կամ, մինչ, որ, ուստի:*

Բ. Ածանցաւոր շաղկապներ՝ *այլապէս, հետեւաբար, հետեւապէս, քանի, ուրեմն, սակայն, միայն եւ այլն:*

Գ. Բարդ շաղկապներ

ա. Կցական բարդութիւններ՝ *այսինքն* (*այս + ինքն*), *թէեւ* (*թէ + եւ*), *թէկուր* (*եթէ + կուրգես*), *թէպէտ* (*եթէ + պէտք*), *մինչդէռ* (*մինչ + դէռ*), *մինչեւ* (*մինչ + եւ*), *նաեւ* (*նա + եւ*), *այլեւ* (*այլ + եւ*), *որովհետեւ* (*որով + հետեւ*),

որպէսզի (որպէս + զի), քանզի (քան + զի), վասնզի (վասն + զի), թէպէտեւ (թէպէտ + եւ) եւ այլն:

բ. Յարադրական բարդութիւններ՝ այնպէս որ, թէ որ (շատ չենք գործածեր հիմա, անոր փոխարէն կը գործածենք եթէ շաղկապը), մանաւանդ որ, քանի որ, մինչեւ որ, ով որ, ինչ որ, ուր որ, ինչպէս որ, այնքան որ, բայց եւ, ինչպէս եւ, նոյնպէս եւ, նմանապէս եւ, հետեւաբար եւ, ուստի եւ, ուրեմն եւ, միայն թէ, քան թէ, կարծես թէ, կամ թէ, թէ ոչ, ապա թէ ոչ, ոչ թէ, եւ ոչ թէ, քանի դեռ, այն է, եթէ նոյնիսկ եւ այլն:

ՇԱՂԿԱՊԼԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒՈՂ ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ստորակէտը կը դրուի՝

ա. Գերադաս եւ ստորադաս նախադասութիւններուն միջեւ՝ անկախ անոնց դիրքէն: Օրինակ՝

*Աշոտը տուն վերադարձաւ, որովհետեւ հիւանդ էր:
Եթէ աշխատիս, կը յաջողիս:*

բ. Համադաս նախադասութիւններու միջեւ, երբ ասոնք իրարու կապուած են առանց շաղկապի կամ կապուած են *իսկ, բայց, սակայն, մինչդեռ, այլ, այլապէս, ինչպէս նաեւ, այսինքն* եւ այլ համադասական շաղկապներով: Օրինակ՝

*Ծառերը կ'օրորուին գետին եզերքը, խոտերը կը ծփան դաշտերուն մէջ,
իսկ խոնաւ ժայռերուն վրայ կաքաւները լուռ են:
Աշոտը չիօսեցաւ, այլ դասը խանգարեց:*

գ. *Եւ, ու, կամ* շաղկապներով իրարու կապուած համադաս նախադասութիւններու միջեւ, որոնք չունին ընդհանուր ենթակայ, այսինքն՝ ունին տարբեր ենթականեր կամ կրկնուող ենթակայ: Օրինակ՝

*Յանկարծ թուփեր կը յայտնուին, կամ կը ցցուի քար մը ճերմակ:
Դուն տակաւին երիտասարդ ես, եւ կեանքը քեզի իրաւունք չի տար
սուզի մէջ մնալու:*

Ծանոթութիւն:

Եթէ ենթակաները ընդհանուր են, այսինքն՝ նոյնն են, *եւ, ու, կամ* շաղկապներէն առաջ ստորակէտ չենք դնէր: Օրինակ՝

*Արամը տուն պիտի վերադառնար կամ պիտի մնար գիւղը:
Աշոտը տուն վերադարձաւ, լուսցուեցաւ եւ հանգստացաւ:*

դ. Նախադասութեան համագօր (նոյն պաշտօնը ունեցող) անդամներուն միջեւ, եթէ անոնք *եւ, ու, կամ, թէ* շաղկապներով չեն կապուած: Օրինակ՝

*Գրախանութէն գնեցի թուղթ, մատիտ, ռետին:
Աշոտը, Արամը եւ Մահակը դպրոց գացին:*

ե. Կրկնադիր շաղկապներով սկսող (*ե՛ւ..., ե՛ւ / թէ՛..., թէ՛ / կա՛մ..., կա՛մ / ո՛չ..., ո՛չ*) համագօր անդամներու եւ համադաս նախադասութիւններու միջեւ: Օրինակ՝

*Յակոբ Օշական մեծ է ե՛ւ իբրեւ վիպագիր, ե՛ւ իբրեւ քննադատ:
Աշոտը թէ՛ կ'աշխատէր, թէ՛ կ'ուսանէր եւ թէ՛ իր կրտսեր եղբայրը կը խնամէր:
Աշոտը ո՛չ խօսեցաւ, ո՛չ գրեց եւ ո՛չ ալ հետեւեցաւ դասախօսին խորհուրդներուն:*

* Կրկնադիր վերջին շաղկապական բաղադրիչէն առաջ ստորակէտ չենք դնէր, եթէ ան կապուած է **եւ** շաղկապով (երկրորդ եւ երրորդ օրինակները):

Ծանոթութիւն:

ա. Թէ շաղկապէն առաջ ստորակէտ չի դրուիր, երբ անով կը կապուին համագօր անդամներ (նոյն պաշտօնը ունեցող)՝ արտայայտելով միաւորիչ-յաւելական յարաբերութեան իմաստ:

*Աղջիկ թէ տղայ զիս կը լսէին:
Չին թէ նորեկ աշակերտներու արձանագրութիւնը սկսած է արդէն:*

բ. Թե՛ շաղկապը կը դրուի հարցական նախադասութեան մը մէջ՝ երկու եզրերու միջեւ՝ արտայայտելով երկընտրանք (պարոյկը կը դրուի նաեւ շաղկապին նախորդող եզրին վրայ): Օրինակ՝

Պատասխանատուին դիմե՛մ, թե՛ չդիմեմ:

Դատաւորներո՞ւս, թե՛ փաստաբաններուս դէմ բողոքեմ:

Վարժութիւն

Ընդգծե՛ շաղկապները եւ ստորակէտ դի՛ր, ուր որ անհրաժեշտ է:

1. Որովհետեւ օդը ամպոտ էր ուստի որոշեցինք պտոյտի չերթալ եւ տունը մնալ:
2. Անին յարատեւօրէն կ'աշխատէր մինչդեռ ուրիշներ գուարճութիւններու հետամուտ էին:
3. Ո՛չ ընկերոջ ո՛չ եղբօր ո՛չ ալ ուրիշ հարազատի մը կը վստահուին նման գաղտնիքներ:
4. Թե՛ գիրքը թե՛ գրիչը թե՛ տետրակը դպրոցական պիտոյքներ են:
5. Ո՞րը կը նախընտրէս՝ վա՞րդը թե՛ մեխակը:
6. Ե՛ւ երիտասարդը ե՛ւ ծերը ե՛ւ հայ կինը ե՛ւ դպրոցական պատանին անխորտակելի պատնէշ կանգնած էին թշնամի վոհմակին դէմ:
7. Զինին վրայ աղուէսի՞ թե՛ շան թաթերու հետքեր կային:
8. Կա՛մ կը սիրես կա՛մ կ'ատես:
9. Վանայ լիճը կամ Բզնունեաց ծովը կը գտնուի Արեւմտեան Հայաստան:
10. Անոնք միշտ կը բամբասեն Տիգրանը մինչդեռ ան անոնց մասին գովեստով կը խօսի:
11. Դուն պէտք է ներողութիւն խնդրէիր եւ ոչ թէ յիտրտայիր:
12. Պէտք է պատասխանենք նամակին կամ երթանք Եգիպտոս:
13. Հեղեղը ողողեց թե՛ արտերը եւ թե՛ պարտեզները:
14. Ես շատ կը սիրեմ ծաղիկները մանաւանդ վարդն ու մեխակը:
15. Մեծ արժանիքներով օժտուած մարդիկը համեստ կըլլան իսկ տգէտները՝ ամբարտաւան:

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

Հայկի թոռներուն մէջ շատ նշանաւոր եղաւ **Տորք Անգեղը**: Անգեղ կը նշանակէ տգեղ, անճոռնի մարդ: Ասոր համար կը պատմեն, թէ շատ մեծ հասակով հսկայ մ'էր, այնքան ուժով, որ կրնար մեծ-մեծ ժայռեր փրցնել եւ երկինք նետել: Շատ անգամ կարծր քարերը իր հաստ ու երկար եղունգներով կը փորէր ու վրանին արծիւի կամ ուրիշ կենդանիներու պատկերներ կը գծէր:

Փոքր եղած ժամանակը բացօթեայ կը քնանար. թէ՛ արելը եւ թէ՛ անձրելը զինքը շատ կը նեղէին, անոր համար ճերմակ թելերով մեծ արծիւ մը կու գար ու վրան կը տարածէր իր թելերը՝ Տորքը պաշտպանելու համար:

Օր մըն ալ Հայաստանի թշնամիներ եկած էին Սեւ ծովի կողմերէն. Տորք Անգեղ անոնց ետեւէն վազեց ու զիրենք հալածեց. թշնամիները նաւակներով փախան ծովին բացերը: Սակայն Տորք Անգեղ խոշոր քարեր առաւ ու նետեց անոնց ետեւէն: Սաստիկ փոթորիկ ու ալեկոծութիւն ելաւ, ուստի նաւակներէն շատերը ընկղմեցան, եւ քիչեր ազատեցան Տորքի ձեռքէն:

ԲԱՌԵՐ

Անճոռնի – խիստ տգեղ, այլանդակ:

Բացօթեայ – դուրսը, դաշտը, բաց օդի մէջ:

Բաց – [հոս՝] ազատ տարածութիւն:

Հալածել – հետապնդել, ետեւէն իյնալ, հեռու վանել, փախուստի մատնել:

Ընկղմիլ – խորասուզուիլ, ջուրին յատակը իջնել:

Վարժութիւն

Ա. Շարադրանքէն արտագրէ՛ շաղկապները եւ որոշէ՛ անոնց իմաստային տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Տորք Անգեղը:

ԴԱՍ 12.

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ձայնարկութիւնը իբրեւ խօսքի մաս

Առնենք 2 նախադասութիւն:

- *Արամին բոլոր ճիգերը ապարդիւն մնացին, - ըսաւ Յակոբը:*
- *Մե՛ղք, Արամին բոլոր ճիգերը ապարդիւն մնացին, - ըսաւ Յակոբը:*

Առաջին նախադասութեան մէջ ենթական՝ *Յակոբը*, առանց արտայայտելու իր զգացումը, կը յայտնէ, որ Արամին բոլոր ճիգերը ապարդիւն մնացած են:

Երկրորդ նախադասութեան մէջ ալ *Յակոբը* կը յայտնէ նոյն իրողութիւնը, սակայն այս անգամ ան կ'արտայայտէ իր ցաւի զգացումը *մե՛ղք* բառով:

Նաեւ՝

- *Կեցցե՛ս, պետական քննութեանց յաջողեցար, - ըսաւ հայրը իր տղուն:*

Կեցցե՛ս բառով հայրը իր ուրախութիւնը կը յայտնէ տղուն յաջողութեան առիթով:

Մե՛ղք, կեցցե՛ս բառերը ձայնարկութիւն են:

Կան նաեւ ձայնարկութիւններ, որոնք կը ծառայեն մարդիկը կամ անասունները կանչելու, մարդոց կամ անասուններուն դիմելու: Օրինակ՝

Հէ՛յ, ո՞ւր կէրթաս այդպէս:

Հօ՛, գումէշնէ՛ր, քաշեցէ՛ք սայլը:

Ո՞ւր է կատուն, փի՛ս, փի՛ս, փի՛ս:

Թաւ նշուածները ձայնարկութիւն են:

Ձայնարկութիւններ են նաեւ կենդանիներու, բնութեան երեւոյթներու եւ այլ ձայներու նմանութեամբ ստեղծուող բնաձայնութիւնները, որոնք կը կոչուին բնաձայնական ձայնարկութիւններ: Օրինակ՝

Բը՛ զզ, տը՛ զզ, հառ՛ ՚-հառ՛ ՚, թը՛ յսկ-թը՛ յսկ եւ այլն:

Զգացում, յուզում, կոչ եւ բնաձայնութիւն արտայայտող բառերը կը կոչուին ձայնարկութիւն:

Ձայնարկութիւնները անփոփոխ բառեր են եւ նախադասութեան անդամ չեն ըլլար:

Վարժութիւն

Ընդգծէ՛ ձայնարկութիւնները:

Հին ժամանակ պատանի ասպետ մը կ'ապրէր: Գեղեցիկ էր ան ու սլացիկ:

Գիշեր ու ցերեկ քուն ու դադար չունէր ասպետը: Կը փնտռէր իր երազներու դիցուհին, բայց ապարդիւն:

Օր մը գնաց գետակի մը ափը, գլուխը առաւ ձեռքերուն մէջ եւ լացաւ անյոյս ու սրտաբէկ:

- Ա՛խ, ինչո՞ւ կու լաս, սիրո՛ւն տղայ,- հարցուցին ալիքները:

- Օ՛հ, մի՛ հարցնէք, պայծա՛ռ ալիքներ, ձեզի նման գոհարի մը շողն եմ տեսած ու չեմ գտներ զայն:

- Աւա՛ղ, մենք նոր եկանք: Բայց գետափին ծաղիկները միշտ հոս են, անո՛նց հարցուր,- մրմնջացին ալիքները:

- Ափսոս ս, հազա՛ր ափսոս, բայց մենք ալ չենք գիտեր,- շրշացին ծաղիկները,- արտոյտի՛ն հարցուր:

- Օ՛ի՛ւ-ծի՛ւ,- դայլայլեց արտոյտը,- ես միայն արեւը կը տեսնեմ: Ա՛յ, հովը կիմանայ, անո՛ր հարցուր:

Շնկչնկան հովը մեղմիւ շոյեց պատանիին գլուխը եւ ըսաւ.

- Ա՛յ խեղճ տղայ, ես տեսած եմ քու հուրի-փէրիդ հեռո՛ւ, հեռո՛ւ աշխարհի մը մէջ: Մարմարեայ պատշգամը նստած՝ կ'ստեղնագործէ իր լոյս մատներով եւ քեզ կ'երազէ:

Ու թռաւ պատանին դէպի իր երազը...

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ԹԱԳԱԻՈՐ

Պարոյր քաջ թագաւորէն յետոյ բազմաթիւ թագաւորներ եղան Հայաստանի մէջ, բայց ասոնք շատ մեծ գործեր չկատարեցին եւ չկրցան թշնամիներէն լաւ պաշտպանել մեր երկիրը: Հայաստան գերի եղաւ օտարներուն ձեռքը, մանաւանդ մարերուն, որոնք կը բնակէին Կասպից ծովուն եզերքները եւ շատ մեծ ու զօրաւոր կայսրութիւն մը հիմնած էին:

Երբոր Երուանդ թագաւորեց Հայաստանի վրայ, հայերը հարկ կը վճարէին մարերու **Կիաքսար** թագաւորին: Երուանդ գաղտնի պատրաստեց լաւ բանակ մը ու, երբ դարձեալ հարկ ուզելու եկան Կիաքսարի մարդիկը, զանոնք վռնտեց Հայաստանէն: Կիաքսար պատերազմի ելաւ Երուանդին դէմ:

Կիաքսար քեռորդի մը ունէր՝ Կիւրոս անունով. շատ քաջ եւ խելացի մարդ էր: Մարերու թագաւորը զինքը դրկեց Երուանդին դէմ պատերազմի: Վանայ լիճին քովերը շատ արինալից պատերազմ եղաւ. Երուանդ, բլուրի մը վրայ քաշուած, կը կռուէր, բայց Կիւրոս անոր հացն ու ջուրը կտրեց, եւ Երուանդ ստիպուեցաւ հաշտութիւն ընել: Այս կռիւր եղաւ Քրիստոսէ 560 տարի առաջ:

ԲԱՌԵՐ

Կայսրութիւն – [հոս՝] բազում երկիրներ եւ ժողովուրդներ ընդգրկող միապետութիւն:

Վռնտել – դուրս քշել, վտարել, արտաքսել:

Բլուր – ոչ մեծ բարձունք, պզտիկ սար:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ ըստ պատշաճին աւելցո՛ւր ձայնարկութիւններ:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ՝ հայթայթէ Երուանդ թագաւորին վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 13.

ՁԱՅՆԱԴԿՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ձայնարկությունները կըլլան 3 տեսակ՝ զգացական, կոչական եւ բնաձայնական:

Ա. Չգացական ձայնարկությունները կ'արտայայտեն՝

ա. Վիշտ, ցաւ, տառապանք՝ *ա՛ խ, վա՛ խ, ն՛ լյ, վն՛ լյ, վա՛ յ, ա՛ յ, է՛, օ՛ ֆ ...*

բ. Դժգոհութիւն, բարկութիւն՝ *ն՛ հ, օ՛, օհօ՛, ն՛ հ, ամա՛ ն, օ՛ ֆ, էօ՛ ֆ, ի՛ լֆ, մէղա՛ յ ...*

գ. Զղջում, ավստասանք, ցաւակցութիւն՝ *աւա՛ դ, ամօ՛ թ, արստ՛ ս, մէ՛ դք, եղն՛ լկ, վա՛ խ ...*

դ. Ուրախութիւն, հրճուանք՝ *օ՛, օ՛ խ, ջա՛ ն (ջա՛ ն), փա՛ նք, կեցցե՛ ս, կեցցե՛, ապրի՛ ս, ապրի՛ ք ...*

ե. Զարմանք, անակնկալ, հետաքրքրասիրութիւն՝ *է՛, ամա՛, հը՛, ըհը՛, հա՛, օհօ՛ ...*

զ. Ծաղր, հեգնանք, քմծիծաղ, արհամարհանք՝ *հա՛, հը՛, էհէ՛, է՛, ապրի՛ ս, ապրի՛ ք ...*

է. Զգուանք, խորշանք, տհաճութիւն՝ *թն՛ լհ, թի՛ լհ, փի՛ լհ, փն՛ լհ, փի՛ լֆ*

...

ը. Երկմտութիւն, ներքին հարցում՝ *հը՛ ս, հը՞ ...*

Բ. Կոչական ձայնարկություններ

Կոչական ձայնարկություններ են՝ *օ՛ ն, ծօ՛, քա՛, հը՛, է՛ հ, ա՛ յ, ն՛ վ, հէ՛ յ, օ՛ շտ, օշօ՛ շ, հօ՛, փի՛ ս-փի՛ ս, քի՛ շ-քի՛ շ ...*

Այս ձայնարկությունները կը գործածուին ուրիշին ուշադրութիւնը գրաւելու համար՝ անոր բան մը հաղորդելու, զայն գործողութեան մը մղելու եւ այլ նպատակներով, ինչպէս նաեւ կենդանիները կանչելու, վարելու, քշելու համար: Օրինակ՝

Վանչեցե՛ ք կատուն, փի՛ ս, փի՛ ս, փի՛ ս:

Հօ՛, գոմէշնէ՛ յ, քաշեցե՛ ք սայլը:

Վոնտեցե՛ ք հաւերը, քի՛ շ, քի՛ շ, քի՛ շ:

Գ. Բնաձայնական ձայնարկություններ

Բնաձայնական ձայնարկություններ են՝ *ճի՛-ճի՛, ճի՛-ճի՛-ճի՛, ճի՛-ճի՛-ճի՛-ճի՛, ճի՛-ճի՛-ճի՛-ճի՛, միստ՛, բը՛զզ, թը՛խկ, տը՛զզ, հատ՛, հատ՛-հատ՛, խը՛շշ, չը՛պ, շը՛խկ, շը՛փ, տը՛մբ* եւ այլն: Օրինակ

Ծառէն կու գային ուրախ ձայներ՝ ճի՛-ճի՛-ճի՛:

Դուռը ծեծեցին՝ թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ:

Ջուրը առաստաղէն միօրինակ նուագով կը կաթէր՝ չը՛պ, չը՛պ, չը՛պ:

Վարժություն

Ընդգծե՛ք ձայնարկությունները եւ նշե՛ք իւրաքանչիւրին տեսակը (զգացակա՞ն, կոչակա՞ն, բնաձայնակա՞ն):

1. Հո՛, գոմէշնէ՛ր, քաշեցէ՛ք սայլը:
2. Ա՛լ պիտի չքալէ՛մ, ա՛լ կերակուր պիտի չուտե՛մ...է՛, ի՞նչ ընեմ, հոգիով ի՞նչ ընեմ ես:
3. Այսքան ժլատութիւն չէի տեսած, ամո՛թ:
4. Հիմա շունը քեզ կը խածնէ, օ՛շտ:
5. Փո՛ւ, ի՛նչ սատանայ ես, հա՛...
6. Ամա՛ն, փաշա՛ էֆենտի, ձեր վսեմութեան սխալ տեղեկութիւն հաղորդած են:
7. Է՛, մընաք բարով, Աստուա՛ծ եւ արե՛ւ, Որ կը պըլպըլաք իմ հոգոյս վերեւ...
8. Գիւղացին կը պոռար իր իշուն՝ օշօ՛շ-օշօ՛շ:
9. Հէ՛յ ագահ մարդ, հէ՛յ անհոգ մարդ՝ միտքդ երկար, կեանքդ կարճ...
10. Օ՛, չսուկաք, երբ անպատմելի պատմութիւնը ձեզի պատմեմ:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Երուանդ թագաւորը Տիգրան անունով քաջ եւ շատ գեղեցիկ զուակ մը ուներ. ասիկա քսան տարեկան երիտասարդ էր եւ հօրը հետ կը կառավարէր Հայաստանը: Տիգրան շատ սիրելի բարեկամ էր նաեւ

Կիրոսի. մանկութեան ընկերներ էին ու շատ անգամ միասին որսի կ'երթային Հայաստանի անտառներուն մէջ:

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԿԻՒՐՈՍ

Երբ Տիգրան հեռու ճամփորդութենէ մը Հայաստան դարձաւ, տեսաւ որ իր հայրը, մայրը եւ կինը գերի ինկած էին Կիրոսի ձեռքը. շատ վշտացաւ այս եղածին վրայ: Բայց Կիրոս խիստ չվարուեցաւ. ազատ ձգեց իր հայրը, մայրը եւ կինը: Կիրոս ուզեց, որ հայերը իրեն հետ բարեկամ եւ դաշնակից ըլլան Բաբելոն մեծ քաղաքին տիրելու համար: Տիգրան ընդունեցաւ առաջարկը եւ մեծ բանակ մը պատրաստեց Բաբելոնի դէմ երթալու համար:

ԲԱԲԵԼՈՆԻ ԳՐԱԻՈՒՄԸ

Հայաստանի պատերազմէն վերջ Կիրոս եւ Տիգրան իրենց բանակներով գացին Բաբելոն քաղաքին դէմ: Բաբելոն ուներ երեք շարք բարձր եւ հաստ պարիսպներ, որոնց վրայէն կրնային երկու կառք քովէ քով վազել: Շատ դժուար էր այդ քաղաքը գրաւել: Եփրատ գետը այդ պարիսպներուն տակէն քաղաք կը մտնէր. երբ այդ տարին սաստիկ չորութիւն ըրաւ, եւ գետին ջուրերը նուազեցան, Կիրոսի եւ Տիգրանի բանակները կրցան ներս մտնել ցամքած գետէն եւ Բաբելոնը առնել: Կիրոս, շատ ոսկի եւ գոհարեղէն տալով Տիգրանին, դրկեց Հայաստան՝ փառաւոր կերպով թագաւորելու համար (539 Քրիստոսէ առաջ):

ԲԱՌԵՐ

Դաշնակից – դաշինքով մեկու մը հետ կապուած, դաշինքին մասնակից, մեկզմէկու օգնելու ուխտ ունեցող:

Գոհարեղէն – ազնիւ քարեր, ակնեղէն:

Վարժութիւն

Ա. Յիշէ՛ բնաձայնական 5 ձայնարկութիւն եւ անոնցմէ կազմէ՛ բայեր:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննե՛ր հայթայթէ Կիրոսի եւ Տիգրան Երուանդեանի մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 14.

ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Չայնարկութիւնները կազմութեամբ կըլլան պարզ եւ բարդ:

Պարզ ձայնարկութիւններ են՝ *ա՛խ, վա՛յ, օ՛խ, թն՛ւհ, հէ՛յ, բը՛զզ, ծօ՛* եւ այլն:

Բարդ ձայնարկութիւնները կըլլան կրկնաւոր եւ յարադիր:

1. Կրկնաւոր ձայնարկութիւններ են՝ *փի՛ւ-փի՛ւ, ծի՛ւ-ծի՛ւ, վա՛յ-վա՛յ, ն՛ւյ-ն՛ւյ* եւ այլն:

2. Յարադիր ձայնարկութիւններ են՝ *հէ՛յ վախ, հէ՛յ ջան* եւ այլն:

Չայնարկութիւններուն ուղղագրութեան համար պէտք է իմանալ հետեւեալը.

ա. Կրկնաւոր բարդ ձայնարկութիւնները, որոնք կը կազմուին նոյն կամ համահնչին ձայնարկութիւններէն, սովորաբար կը գրուին միութեան գծիկով: Օրինակ՝

Վն՛ւյ-վն՛ւյ, չը՛խկ-չը՛խկ, փի՛ւ-փի՛ւ, քի՛շ-քի՛շ եւ այլն:

բ. Յարադիր բարդ ձայնարկութիւնները կը գրուին անջատ բաղադրիչներով: Օրինակ՝

Հէ՛յ վախ, հէ՛յ ջան, ամա՛ն քա եւ այլն:

գ. Եթէ ձայնարկութեան միակ վանկարար հնչիւնը **ը**-ն է, անիկա կը գրուի եւ շեշտ կը կրէ: Օրինակ՝

Տը՛ւբ, թը՛խկ, չը՛պ, շը՛փ եւ այլն:

Միայն **ը** ձայնաւորով երկվանկ ձայնարկութիւններուն առաջին վանկին **ը**-ն չի գրուիր: Օրինակ՝

Շըը՛խկ, թըը՛խկ եւ այլն:

դ. Աւելի տեսական, երկար արտասանուող ձայնարկութիւններուն երկարաձգուող հնչիւնը կը գրուի երկու եւ աւելի գիրով: Օրինակ՝

Հէ՛է՛է՛յ, հը՛ը՛ւ, ո՛ւո՛ւ:

ե. Արտասանութեան կամ ձայնին ելեւէջին համապատասխան՝ գրաւոր խօսքին մէջ ձայնարկութիւններուն վրայ կը դրուի բացագանչական նշան (՛) կամ շեշտ (՛), երբեմն ալ հարցական նշան (՞):

զ. Ձայնարկութիւնները նախադասութեան անդամներէն կը տրոհուին ստորակէտով. նախադաս գործածուելու պարագային իրմէ ետք ստորակէտ կը դրուի, վերջադաս գործածուելու պարագային՝ իրմէ առաջ, իսկ միջադաս գործածուելու պարագային՝ երկու կողմէն:

Աւա՛ղ, մեր գիւղը աւեր ու աւերակ դարձաւ:

Մեր գիւղը աւեր ու աւերակ դարձաւ, աւա՛ղ:

Մեր գիւղը, աւա՛ղ, աւեր ու աւերակ դարձաւ:

Ա՛յս, սրտիս վերքը խոր է, շա՛տ խոր:

է. Քանի մը ձայնարկութիւններ՝ *ա՛յ, է՛հ, ո՛վ, ջա՛ն*, կոչական անուններու հետ գործածուելու պարագային ստորակէտով չեն տրոհուիր անոնցմէ: Օրինակ՝

Ո՞վ քեզ ծեծեց, Յակոբի՛ կ՛ջան:

Ա՛յ մարդ, ինչո՞ւ տրտում ես:

Է՛յ աստուոր, վերջդ ասիկա չէ՞. թիզ մը սեւ հող ու հողին վրայ թիզ մը կանաչ խոտ:

Ո՛վ մարդկային արդարութիւն, թո՛ղ ես թքնեմ քու ճակտիդ...

Վարժութիւն

Ընդգծէ՛ եւ կէտադրէ՛ ձայնարկութիւնները (ստորակէ՛տ դիր):

1. Այն բազմաթիւ հօտէն գոմին մէջ եղո՛ւկ

Մընացեր է միայն խոյ մը քաջարի...

2. Ա՛հ ըլլայի՛, ըլլայի՛,

Դաշտի ճամբու մը վրան...

3. Այն ամպերը ձիւնաթորմի,
Մինչ երեկոյ ո՛հ մի առ մի
Մեր նայուածքը գրաւէին:
4. Օ՛ֆ ա՛լ ձանձրացայ նոյն բանը կրկնելէն:
5. Եւ նայուածքդ վերջին նուաղ,
Զոր ուղղեցիր ինձի աւա՛ղ
Բեւեռեցուց յիս (մէջս) յիշատակդ:
6. Ո՛հ կը դողդոջե՛մ, տժգոյն եմ տժգո՛յն...
7. Բայց բազմազառամ պատաւ մըն էիր, ուժդ ասիսո՛ւս չէր գօրեր:
8. Փո՛ւհ շատ վայրենի ես:
9. Ո՛հ այս ի՛նչ գգուանք ո՛հ այս ի՛նչ անուրջ
Կու տաս դուն ինձի, անձրեւո տ գիշեր...
10. Օ՛ֆ կերանք, կշտացանք եւ հիմա կրնանք հանգստանալ:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ

Մարերու Կիաքսար թագաւորին յաջորդեց իր որդին՝ Աժդահակ: Չար, նախանձոտ մարդ էր: Շատ կը վախնար Կիւրոսի եւ Տիգրանի բարեկամութենէն, կը կարծէր, որ կրնային օր մը իր թագաւորութիւնը ձեռքէն առնել:

ԱԺԴԱՀԱԿԻ ԵՐԱԶԸ

Աժդահակ միշտ կը մտածէր երկու քաջերուն մասին: Գիշեր մը շատ տարօրինակ երազ մը տեսաւ. գեղեցիկ կին մը, կապոյտ քօղ մը երեսին, նստած էր բարձր լերան մը վրայ: Այս կինը երեք զաւակ ծնաւ: Առաջինը, առիւծի մը վրայ նստած, վազեց դէպի արեւմուտք. երկրորդը, ինձի մը վրայ նստած, գնաց դէպի հիւսիս. իսկ երրորդը, մեծ վիշապ մը հեծած, յարձակեցաւ Մարերու թագաւորութեան վրայ: Աժդահակ ասոր դէմ ելաւ սուրը ձեռքին. երկուքը կռուեցան, բայց վիշապին վրայ հեծած մարդը իրեն յաղթեց. ասոր վրայ Աժդահակ քունէն արթնցաւ՝ քրտինքներու մէջ լողալով:

ԱԺԴԱՀԱԿԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

Աժդահակ իր մոզերուն հարցուց երագին մեկնութիւնը: Անոնք ըսին, թէ հայերու Տիգրան թագաւորն է վրադ յարձակողը. խորհուրդ տուին պատերազմիլ հայերուն դէմ: Աժդահակ մտածեց խաբէութեամբ բռնել Տիգրանը. անոր **Տիգրանուհի** քոյրը իրեն հարս ուզեց. Տիգրան սիրով տուաւ: Օր մը Աժդահակ ըսաւ Տիգրանուհիին. «Գիտե՞ս՝ Տիգրանի Ջարուհի կինը քու վրադ կը նախանձի եւ կը ստիպէ Տիգրանը, որ դէմս պատերազմի ելլէ»:

Տիգրանուհի հասկցաւ Աժդահակի խաբէութիւնը եւ եղբօրը հաղորդեց անոր չար միտքը: Երբ Աժդահակ մեծ բանակով մը Հայաստան գնաց, իբրեւ թէ Տիգրանի հետ որսի պիտի երթան եւ սօսեր պիտի կատարեն, Տիգրան հայ քաջերով անոր դէմ ելաւ եւ պատերազմի մէջ սպաննեց Աժդահակը: Տիգրանուհին ազատեցաւ ու վերադարձաւ Հայաստան:

ԲԱՌԵՐ

Քօղ – նուրբ եւ թափանցիկ գործուածք, շղարշ:

Ինձ – հովազ, ընձառիծ:

Վիշապ – 1. օձի շատ խոշոր տեսակ մը, 2. հրէշ:

Մոզ – 1. հետանոս կրօնաւոր, քուրմ, 2. կախարդ:

Մեկնութիւն – բացատրութիւն, պարզաբանում, վերծանում:

Վարժութիւն

Ա. Յիշէ՛ բնաձայնական 5 ձայնարկութիւն եւ անոնցմէ կազմէ՛ ածականներ եւ գոյականներ:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Տիգրան Երուանդեանը:

ԴԱՍ 15.

ՎԵՐԱԲԵՐՈՒԿԱՆ

Վերաբերականը իբրև խօսքի մաս

Առնենք 2 նախադասություն:

ա. *Պայթումի ատեն փողոցը մարդ չկար:*

բ. *Պայթումի ատեն բարեբախտաբար փողոցը մարդ չկար:*

Առաջին նախադասութեամբ մենք եղելությունը կ'արտայայտենք առանց մեր դատողական վերաբերումին, իսկ երկրորդ նախադասութեամբ մենք նոյն եղելությունը կ'արտայայտենք մեր դատողական վերաբերումով, քանի որ կը գործածենք *բարեբախտաբար* բառը: Այլ խօսքով՝ *բարեբախտաբար* բառը գործածելով՝ մենք այդ եղելությունը փողոցը մարդ չըլլալը, կը գնահատենք իբրև յաջողություն, բարեբախտություն:

Նոյնպէս՝

ա. *Արամը պիտի վերադառնայ:*

բ. *Արամը անշուշտ պիտի վերադառնայ:*

Առաջին նախադասութեամբ մենք եղելությունը կ'արտայայտենք առանց մեր մտածական վերաբերումը արտայայտելու անոր մասին, իսկ երկրորդ նախադասութեան մէջ մենք *անշուշտ* բառով կ'արտայայտենք եղելութեան վերաբերեալ մեր հաւաստի, հաստատական վերաբերումը:

Բարեբախտաբար, անշուշտ բառերը վերաբերականներ են:

Վերաբերականները մակբայներուն պէս կը դրուին ստորոգիչին վրայ, սակայն գործողութեան հանգամանքներ (պարագաներ) չեն արտայայտեր, նախադասութեան անդամ չեն դառնար:

Կան բառեր ալ, որոնք, դրուելով նախադասութեան անդամներուն վրայ, սաստկական, սահմանափակման եւ այլ իմաստային երանգներ կը հաղորդեն անոնց: Օրինակ՝

Աշոտը այսօր լուծեց խնդիրը:

Նոյնիսկ Աշոտը այսօր լուծեց խնդիրը:

Աշոտը **նոյնիսկ** այսօր լուծեց խնդիրը:

Աշոտը այսօր **նոյնիսկ** խնդիրը լուծեց:

Աշոտը այսօր խնդիրը **նոյնիսկ** լուծեց:

Առաջին նախադասութեան մէջ խօսողը չերանգաւորեր նախադասութեան որեւէ անդամ, մինչդեռ միւս նախադասութիւններուն մէջ խօսողը **նոյնիսկ** բառով կընդգծէ, կը սաստկացնէ նախադասութեան այս կամ այն անդամին նշանակութիւնը:

Վերաբերական կը կոչուին այն բառերը, որոնք կ'արտայայտեն խօսողին իմացական, դատողական վերաբերումը եւ կէդանակաւորեն կամ կերանգաւորեն նախադասութիւնը կամ անոր անդամներէն մէկը:

Ծանօթութիւն:

Վերաբերականները նախադասութեան մէջ կրնան ներկայանալ սկիզբը, մէջտեղը եւ վերջը: Երբ անոնք կը վերաբերին ամբողջ նախադասութեան, յաճախ ստորակէտով կը տրոհուին նախադասութեան միւս անդամներէն: Օրինակ՝

Անշուշտ, անոր պատասխանը համոզիչ էր:

Անոր պատասխանը, անշուշտ, համոզիչ էր:

Անոր պատասխանը համոզիչ էր անշուշտ:

(Երրորդ օրինակին մէջ **անշուշտ** վերաբերականէն առաջ ստորակէտ չէ դրուած, որովհետեւ անիկա կը վերաբերի նախադասութեան մէկ անդամին՝ ստորոգիչին):

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(Գոնէ, արդարեւ, իսկապէս, դժուար թէ, յիրաւի, անպայման, ահաւասիկ, անշուշտ, անտարակոյս, թերեւս:)

1. ժամանեցին դեսպանները:
2. Արդարութիւնը,, երեւան կու գայ:

3. Հայ գիրերու գիտը,, եզակի գործ է՝ մեծարանքի եւ երախտագիտութեան արժանի:
4. Խաղաղութեան ուժերը պիտի յաղթեն:
5., մենք հարցը յաջողութեամբ կը լուծենք:
6. մէկ-երկու օր մնայիր մեզի հետ:
7. հաշտուիմ Արամին հետ:
8. վաղը գիւղ վերադառնամ:
9. Աշոտը իմ ընկերս է:
10. Յակոբ Պարոնեան,, մեծ երգիծարան է:

ՎԵՐԱԲԵՐՄԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վերաբերականները կրնան արտայայտել խօսող անձին տարբեր վերաբերումները գործողութեան կամ եղելութեան նկատմամբ եւ, ըստ իմաստի, կըլլան հաստատական, ժխտական, երկբայական, զգացական (կամ գնահատողական), սաստկական, ցուցական, սահմանափակման, կամային:

Ա. Հաստատական վերաբերականներ

Ասոնք կ'արտայայտեն խօսողին հաստատական վերաբերումը գործողութեան կամ եղելութեան հանդէպ: Օրինակ՝

*Այդ խօսքերը, անշուշտ, իր սիրտէն կը բխէին:
Անտարակոյս, ան պիտի գայ:*

Ընդգծուած վերաբերականները աւելի հաւաստի ու հաստատական կը դարձնեն արտայայտուած եղելութիւնը:

Հաստատական վերաբերականներ են՝ *արդարեւ, անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակոյս, անպայման, իրաւ, իրաւ որ, իրաւամբ, իրօք, իրօք որ, իսկապէս, իսկապէս որ, ի հարկէ, հաւաստեալ, հարկաւ, յիրաւի, այո՛ :*

Ծանոթութիւն:

Այո՛ վերաբերականը կրնայ նախադասութեան մէջ ներկայանալ սկիզբը, մէջտեղը եւ վերջը: Եթէ նախադասութեան սկիզբը ըլլայ, իրմէ ետք ստորակէտ կը դրուի. մէջտեղը՝ երկու կողմէն ստորակէտ կառնէ, իսկ վերջը՝ իրմէ առաջ ստորակէտ կը դրուի: Օրինակ՝

*Այո՛, անոնք իրենց ժամանակաշրջանին ամենամեծ գործիչներն էին:
Թումանեանը, այո՛, մեր ազգային ամենամեծ բանաստեղծն է:
Աշոտը հիւանդ է, այո՛ :*

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(Բսկապէս, այո՛, արդարեւ, իրօք որ, անշուշտ, ի հարկէ, անկասկած, յիշատի, անպայման, անպատճառ:)

1. Եթէ ես զինք համոզէի, կու գար:
2. գեղեցիկ է Դիլիջանի բնութիւնը:
3. Այս երեկոյ կը սպասենք ձեզի:
4. Վարիչին կոպիտ վարմունքը,, վիրաւորեց նորեկ յաճախորդը:
5., ես կը հաւատամ ժրաջան աշխատանքի:
6. Այդ խումբը,, մեծ ջանքով պիտի յաջողի հասնիլ լերան գագաթը:
7., դուք իրարու հաւատարիմ բարեկամներ էք:
8. Այս տարի մարզիչը,, քեզ պիտի վարձատրէ շքանշանով մը:
9. Հօրս համար ալ ծաղկեփունջ մը բերած եմ
10. մեր ուսուցիչները կը տքնին մեզի համար:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՎԱՀԱԳՆ

Տիգրան մեռնելով երեք մանչ զաւակներ ձգեց՝ **Բար, Տիրան** եւ **Վահագն**: Ասոնց մէջ ամենէն քաջը Վահագն էր, եւ ինք առաւ հօրը թագաւորութիւնը: Վահագնի ժամանակ պարսիկներու Կիրոս թագաւորը արդէն մեռած էր. իր յաջորդը՝ Դարեհ, կ'ուզէր տիրել Հայաս-

տանի, անոր համար մեծ բանակ մը դրկեց Հայաստանի վրայ: Այս բանակին զօրավարը ուրացած հայ մըն էր՝ **Դադարսէս** անունով: Դադարսէս եկաւ Հայաստանի հարաւային սահմանները: Վահագն անոր դէմ ելաւ եւ սոսկալի պատերազմով քշեց թշնամիները: Դադարսէս երեք անգամ Հայաստանի դէմ ելաւ եւ միշտ յաղթուեցաւ:

Դարեհ Վշտասպեան թագաւորը, տեսնելով, որ իր բանակները միշտ կը յաղթուին, աւելի խոշոր բանակ մը կազմեց եւ ուրիշ զօրավարի մը ձեռքը տուաւ ու Հայաստան դրկեց: Այս պատերազմին մէջ Վահագնը սպաննուեցաւ, եւ հայերը յաղթուեցան:

Երբ Վահագնը մեռաւ, հայերը չհաւատացին անոր մահուան վրայ. այնքան քաջութիւններ ըրած էր, որ զինքը աստուած համարեցան ու պաշտեցին: Վահագն եղաւ հայերու պատերազմի աստուածը:

Կը պատմեն, թէ օր մը մինակը կռուի բռնուեցաւ ասորի քաջ Բարշամին հետ եւ սուրի մէկ հարուածով անոր գլուխը կտրեց: Յետոյ Ասորեստան գտնուող բոլոր յարդանոցները կրակի տուաւ, ինքն ալ, թեւին տակ յարդ առած, թռաւ երկինքէն, Հայաստան եկաւ. այս յարդերը թափեցան երկինքին մէջ եւ աստղեր եղան ու գիշեր ատեն կը տեսնուին ճերմակ ճամբայի պէս. անոր համար հայերը Ծիր կաթինը **Յարդագողի ճանապարհ** ալ կը կոչեն:

ԲԱՌԵՐ

Ուրանալ – [հոս՝] ազգութիւնէն եւ հաւատէն հրաժարիլ:

Յարդ – հացաբոյսերու մանրցուած չոր ցօղունները, դարման:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ ըստ պատշաճին աւելցո՛ւր հաստատական վերաբերականներ:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Վահագնը:

ԴԱՍ 16.

Բ. Ժխտական վերաբերականներ

Ո՛չ պատասխանական բառը եւ չէ՛ ժխտական բայը, գործածուելով ժխտական նախադասութեան հետ, կը շեշտեն անոր ժխտումը եւ կը դառնան ժխտական վերաբերականներ: Օրինակ՝

Ո՛չ, պէտք չէ դժգոհիլ կեանքէն:

Չէ՛, ես չեմ ուզեր:

Ո՛չ եւ չէ՛ վերաբերականներուն կէտադրութիւնը նման է այո՛ վերաբերականին կէտադրութեան:

Ծանօթութիւն 1:

Իբրեւ ժխտական վերաբերականներ կրնան գործածուիլ նաեւ **բնաւ, երբեք** մակբայները, **քաւ լիցի** արտահայտութիւնը, երբ կը վերաբերին ոչ թէ ստորոգիչին, այլ ամողջ նախադասութեանը: Օրինակ.

— *Ոչխարներս, կովերս կը հափշտակե՞ն:*

— *Բնաւ... բայց... խաւարեալ մարդու տեղ կը դնեն ձեզի, չեն ըներ այն պատիւը, որ կուտան մեծ մարդու:*

Չկարծեք, թէ ես բաժանորդ գրելու նպատակաւ ձեզ տեսնելու եկայ, քաւ լիցի, այդ պատիկութիւնը չեմ ընդունիր. բարեկամական պարտք մը կատարելու համար եկայ ձեզ տեսնելու:

Ծանօթութիւն 2:

Չէ՛ վերաբերականը յատուկ է ժողովրդական-խօսակցական լեզուին, իսկ ո՛չ-ը՝ գրական լեզուին:

Ծանօթութիւն 3:

Այո՛, ո՛չ, բնաւ, երբեք, ամէնեւին պատասխանական բառերը առանձին գործածուելու պարագային, իբրեւ հարցական նախադասութեան պատասխան, մասնաւորաբար երկխօսութեան մեջ, կը փոխարինեն ամբողջ նախադասութիւնը եւ, դառնալով պատասխանական բառ-նախադասութիւն, որեւէ խօսքի մասի հետ չեն նոյնանար: Օրինակ՝

— *Աշակերտները եկա՞ծ են:*

— *Այո՛:*

— *Դուք մեղաւո՞ր էք:*

— *Ո՛չ:*

— *Լսեցի, որ շոգենավուն մէջ մէկու մը հետ քիչ մը առեր տվեր էք, եւ այն մէկը ձեր պատուոյն դէմ ծանր խոսքեր ըրեր է:*

— *Ամէնէին:*

— *Թէ դուք ալ անոր քանի մը խօսք ըրեր էք...*

— *Բնաւ:*

Բայց երբ պատասխանական **այո՛, ո՛չ, բնաւ, երբեք** բառերը կը գործածուին նախադասութեան հետ, անոնք վերստին կը հաստատեն կամ կը ժխտեն նախադասութեամբ արտայայտուած եղելութիւնը եւ կը դառնան վերաբերական բառեր: **Այո՛**-ն, **բնաւ**-ը, **երբեք**-ը կը դառնան հաստատական, **ոչ**-ը ժխտական վերաբերական:

Գ. Երկբայական վերաբերականներ

Ասոնք կ'արտայայտեն խօսողին երկբայական, այսինքն՝ հաւանական, անհաւանական, հարցական վերաբերումը գործողութեան կամ եղելութեան նկատմամբ:

Յակոբը գուցէ հիւանդացած է:

Ընդգծուած բառը ցոյց կու տայ եղելութեան (հիւանդանալու) հաւանական կամ անհաւանական ըլլալը:

Միթէ չե՞ս տեսներ արշալոյր, որ կը բռնկի:

Ընդգծուած բառը ցոյց կու տայ կասկած, անվստահութիւն կամ զարմանք գործողութեան (չտեսնելու) նկատմամբ:

Երկբայական վերաբերականներ են՝ *գուցէ, երեւի, թերեւս, ըստ երեւոյթին, ինչպէս կ'երեւի, կարծեմ, կարծես, կարծես թէ, մի գուցէ, իբր թէ, դժուար թէ, հազիւ թէ, արդեօք, միթէ, չըլլա՞յ թէ:*

Վարժություն

Ամբողջացր՛ւր վերաբերականներով:

(Թերեւս, ո՛չ երեւի, չըլլա՞յ թէ, գուցէ, դժուար թէ, արդեօք, մի գուցէ, քաւ լիցի, կարծեմ, միթէ, ըստ երեւոյթին, կարծես)

1., մեր բանակը երբեք պիտի չնահանջէ:
2. Ձեր դասախօսը այստեղ չի բնակիր:
3. Դրկած նամակներդ չվերադարձնեմ:
4., մի՛ ջանար պէղել հոգւոյն գաղտնիքները:
5. ան դաւաճանած է իր ազգին ու հայրենիքին:
6. Միայն քու մասիդ,, կը խորհի ան այս պահուս:
7. դուն անվերադա՞րձ մեկնեցար այդ քաղաքէն:
8. Այս ամպոտ օդին տեղատարափ անձրեւ պիտի յաջորդէ:
9. Առանց հովիւին՝ գայլերը յափշտակեն ոչխարները:
10. Յակոբը մեծահամբաւ բժիշկ մը դարձած է:
11. Ան ըմբռնէ բարդ վերլուծումները:
12. դո՞ւն ալ աւագակներէն մէկն էիր:
13. վնասակար բան կերած ես:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱԻՈՐ

Քրիստոսէ առաջ 189 թուականին Մեծ Հայքի թագաւոր հռչակուեցաւ քաջն Արտաշէս Առաջին: Շուտով նա այնչափ զօրացաւ, որ շատ անգամ ուրիշ թագաւորներ, զօրավարներ, երբ իրենց երկրէն կը քշուէին, կու գային մեր երկիրը ապաստանելու, եւ ոչ ոք կրնար զիրենք Արտաշէսի ձեռքէն առնել:

Արտաշէսի քով ապաստանեցաւ **Աննիբադ** անունով կարթագենացի քաջ զօրավար մը, որ յաղթուելով հռոմայեցիներէն՝ հալածուած էր անոնցմէ: Արտաշէս սիրով պահեց զինքը իր քովը եւ իր խորհրդականը ըրաւ: Աննիբադ անգամ մը պտոյտի էլած էր Երասխ գետին մօտերը. տեսաւ տեղ մը, որ գետը կլոր կը դառնար լայն դաշտի մը շուրջը. Արտաշէսին ըսաւ, թէ այնտեղ շատ մեծ էւ ապահով քաղաք մը կարելի է շինել: Արտաշէս շատ մը գործաւորներ, ճարտարագէտներ տուաւ

Աննիբադին, որ շինեց Երասխի մօտ մեծ քաղաք մը, չորս կողմը հաստ ու բարձր պարիսպներ քաշեց եւ թագաւորին անունով **Արտաշատ** կոչեց, այսինքն՝ Արտաշէսի քաղաք: Արտաշատ երկար տարիներ մայրաքաղաք եղաւ Հայաստանի:

Արտաշէս թագաւորեց քսանութը տարի. իր ժամանակ Հայաստան շատ երջանիկ էր, հարուստ էր ոսկիներով. գիւղացիները հանգիստ կ'աշխատէին, եւ երկրին ամէն կողմը մշակուած էր:

ԲԱՌԵՐ

Ապաստանիլ – թաքնուելու տեղ գտնել:

Խորհրդական – խորհուրդ տուող պաշտօնէայ, օգնական:

Ապահով – 1. անվտանգ, 2. բարեկեցիկ:

Ճարտարագէտ – կառուցողական ծրագիր յղացող եւ գործադրող մասնագէտ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ ըստ պատշաճին աւելցո՛ւր երբայական եւ ժխտական վերաբերականներ:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննե՛ր հայթայթէ Արտաշէս Առաջինին վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 17.

Դ. Զգացական կամ գնահատողական վերաբերականներ

Այս վերաբերականները կ'արտայայտեն խօսողին քաջալերական (հաւանութեան), զղջումի կամ կարեկցական (ցաւակցական) վերաբերումը գործողութեան կամ եղելութեան նկատմամբ: Օրինակ՝

Բարեբախտաբար տունը մարդ չկար:

Դժբախտաբար սխալեցայ:

Առաջին նախադասութեան մէջ *բարեբախտաբար* վերաբերականը կ'արտայայտէ խօսողին քաջալերական, հաւանութեան վերաբերումը եղելութեան, այսինքն՝ տունը մարդ չըլլալու իրողութեան նկատմամբ, իսկ երկրորդ նախադասութեան մէջ *դժբախտաբար* վերաբերականը կ'արտայայտէ խօսողին զղջման, կարեկցական (ցաւակցական) վերաբերումը եղելութեան նկատմամբ:

Զգացական կամ գնահատողական վերաբերականներ են՝ *երնէ՛կ, երնէ՛կ թէ, երանի՛, երանի՛ թէ, ո՛ր էր թէ, իցի՛ւ թէ, բարեբախտաբար, դժբախտաբար, ցաւ ի սիրտ, ցաւօք, ցաւօք սրտի:*

Երանի՛ եւ *երնէ՛կ* բառերը տրական հոլով կը պահանջեն: Օրինակ՝ *Երանի՛ քեզի:*

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(*Ցաւօք սրտի, ո՛ր էր թէ, երանի՛, իցի՛ւ թէ, ցաւ ի սիրտ, բարեբախտաբար,*

երնէ՛ կ, դժբախտաբար, ցաւ ի սիրտ, մանաւանդ, երնէ՛ կ թէ)

1. այն օրերուն, երբ դեռ պատանի էիմք:
2. արծիւներուն, որոնք անկաշկանդ եւ թեւատարած կը թռչին երկինքի կապոյտին մէջ:
3. Այդ օրը ծնողներս այնտեղ չէին գտնուեր
4., ոչ ոք այցելեց անոր բնակարանը:
5. դուն եւ ես քոյրեր ըլլայինք:

6. Կը յայտնենք ձեզի,, որ երէկ ձեր բարեկամը մահացաւ:
7., անոնք իրենց ուխտը դրժեցին ճակատագրական այդ վերջին պահուն:
8. Վարժապետը իր պարտականութիւնը լիովին կատարած ըլլար նախքան մեկնիլը:
9. կը յայտարարենք մեր գնդապետին վաղաժամ մահը:
10. դուք բնական ըլլայիք մեր պարտեզին կից տունը:

Ե. Սաստկական վերաբերականներ

Դրուելով նախադասութեան այս կամ այն անդամին վրայ՝ սաստկական վերաբերականները կը շեշտեն, սաստկական երանգ կը հաղորդեն անոր: Օրինակ՝

Խմեցի վերջին կաթիլն անգամ:

Այս նախադասութեան մէջ ընդգծուած բառը սաստկական վերաբերական է: Անով խօսողը սաստկական երանգ հաղորդած է նախադասութեան *կաթիլն* անդամին:

Սաստկական վերաբերականներն են՝ *անգամ, իսկ, նոյնիսկ, մինչեւ իսկ, մանաւանդ, հէնց* (արեւելահայերէն): Օրինակ՝

Ան մինչեւ իսկ իր սրտակից բարեկամը անարգեց:

Ծանօթութիւն:

Ընդգծման (շեշտման) վերաբերական նշանակութեամբ կը գործածուին *առաձնապէս, առաւելապէս (առաւելաբար), գերազանցապէս, գլխաւորաբար (գլխաւորապէս), յատկապէս, մասնաւորաբար (մասնաւորապէս)* եւ այլ մակբայներ, երբ կը դրուին նախադասութեան՝ ոչ թէ բայով, այլ ուրիշ խօսքի մասով արտայայտուած անդամի վրայ: Օրինակ՝

*Աշակերտները կը սիրէին մասնաւորաբար թուաբանութիւնը:
Ուսուցիչը կը սիրէր յատկապէս Յասմիկը:*

2. Ցուցական վերաբերականներ

Այս վերաբերականները՝ *ահա, ահաւասիկ*, ցուցական իմաստ ունին. այս բառերը, վերաբերելով նախադասութեան որեւէ անդամի, մատնացոյց կընեն զայն եւ կը շեշտեն անոր ներկայութիւնը: Օրինակ՝

Ահաւասիկ մեր դպրոցը:

Ահա եկաւ:

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(Անգամ, մինչեւ իսկ, ցաւօք, ահա, իսկ, հազիւ թէ, անգամ, մինչեւ իսկ, մանաւանդ, իսկ, ահաւասիկ,

նոյնիսկ)

1. Կը ներկայացնեմ, , տարիներով կուտակուած դեզերը:
2. Աշոտին քոյրը՝ ընդամենը վեց տարեկան:
3. Ան չմտաբերեց տարիներ շարունակ իրենց համար յանձն առած գոհողութիւններս:
4. Թշնամին չգթաց անկար ծերերուն եւ անմեղ մանուկներուն:
5. Ազատամարտիկները, մահը արհամարհելով, հաւատարիմ մնացին իրենց երդումին:
6. շուները իրենց անասնային բնագոյով կը գուշակէին սպառնացող վտանգը:
7. Ուժգին փոթորիկը սուլելով իրեն հետ տարաւ ծառերուն ամենատոկուն ճիւղերն:
8. Անոր անդիմադրելի բոյրին առջեւ վարդերն խոնարհեցուցին իրենց գլուխները:
9. Արշակը պիտի չուզէ իր ազարակը վաճառել՝ թանկագին գոհարներու փոխադարձ հատուցումով:
10. Ուսանողը իր գիրքերը ծախեց՝ հին պարտքերը վճարելու համար:
11. Հայերէնի ուսուցիչը,, ներկայ պիտի չգտնուի ձեռնարկին:
12. կարենամ գործս ժամանակին աւարտել:
13. Ես շատ կը սիրեմ ծաղիկները, վարդն ու մեխակը:

Է. Սահմանափակման վերաբերականներ

Դրուելով նախադասութեան այս կամ այն անդամին վրայ՝ սահմանափակման վերաբերականները կ'առանձնացնեն զայն եւ կը ներկայացնեն իբրեւ միակը, եզակին, կամ ալ տուեալ երեւոյթը, գործողութիւնը, յատկանիշը կը ներկայացնեն իբրեւ ծայրագոյն աստիճան (կամ ամենափոքր աստիճան): Օրինակ՝

Միայն մէկ յոյս կայ:

Այս նախադասութեան մէջ ընդգծուած բառը սահմանափակման վերաբերական է, որ դրուած է *մէկ* թուականին վրայ: Խօսողը այս վերաբերականով կ'առանձնացնէ, կը սահմանափակէ *յոյս* անդամին յատկանիշը (*մէկ*):

Գոնէ տունը չծախէր:

Ընդգծուած բառով խօսողը կ'առանձնացնէ, կը սահմանափակէ նախադասութեան *տուն* անդամը՝ իր արտայայտած ցանկութիւնը մասնաւորելով, սահմանափակելով անոր նկատմամբ:

Սահմանափակման վերաբերականներն են՝ *գէթ (միայն), գոնէ, միայն, միմիայն, սոսկ*: Օրինակ՝

Միայն Աստուծոյ կրնանք ապաւինիլ:

Գոնէ երեխաներուն մասին մտածէր:

Գէթ փորձէինք զիրար հասկնալ:

Ը. Կամային վերաբերականներ

Ասոնք կ'արտայայտեն խօսողին կամքը, յորդորը, կոչը՝ երրորդ անձի մը ուղղուած, զայն դրդելով այս կամ այն գործողութեան կատարման:

Կամային վերաբերական է *թող* բառը: Օրինակ՝

Թող վազէ:

Թող գրէ:

Ծանօթութիւն:

Այս վերաբերականը զգացական երանգով կարելի է գործածել առաջին դէմքին հետ: Օրինակ՝

Թող քննութիւնը յանձնէի ու ազատէի:

(Այսինքն՝ երանի՝ քննութիւնը յանձնէի ու ազատէի):

Վարժութիւն

Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(Միայն, գէթ, գոնէ, սոսկ, թող, ահա, յատկապէս, գոնէ, միմիայն, միայն, ահաւասիկ)

1. հօրս կրնամ ապաւինիլ:
2. քու զաւակներուդ խղճայիր:
3. դուն ես մեղաւոր:
4. արագ վերջացնէ գործերը եւ տուն վերադառնայ:
5. Հայրենի արուեստագէտները Պէրլուօ պիտի մնան
մէկ շաբաթ:
6. անոնք ըսեն ճշմարտութիւնը:
7. Ուսանողական ցոյցերը գլխացաւ կը պատճառէին
կառավարութեան անդամներուն:
8. մեր պատուարժան դասախօսը:
9. այս պայմանը մի՛ մերժէք:
10. Սմբատը ձախողեցաւ պետական քննութեանց:
11. դո՛ւն չդաւաճանէիր ինծի:
12. կը լսուի մեր դասախօսին ձայնը:

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐՏԱՇԷՄԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ՍԱԹԵՆԻԿԻ ՀԵՏ

Արտաշէսի փառաւոր թագաւորութեան ժամանակ Կովկասի կողմերէն, որ Հայաստանի հիւսիսը կը գտնուի, **ալաններ** եկան ու Կուր գետը անցնելով՝ թափեցան Հայաստան: Անոնք մեր հարուստ երկիրը կողոպտելու համար պատերազմի ելած էին: Արտաշէս առաւ իրեն հետ հայկական քաջարի բանակը եւ անոնց դէմ ելաւ ու քջեց զանոնք Կուր գետէն անդին: Այս պատերազմին ժամանակ ալաններու թագաւորին տղան գերի ինկաւ հայերուն ձեռքը: Տղուն հայրն ու իշխաններ շատ աղաչեցին, որ ետ դարձնէ թագաւորին որդին, շատ ոսկի եւ արծաթ խոստացան, սակայն Արտաշէս մտիկ չըրաւ: Կուր գետին միւս կողմէն բարձր ժայռի մը վրայ ելաւ ալաններու թագաւորին աղջիկը՝ գեղեցիկ **Սաթենիկը**. ինքն ալ աղաչեց, որ Արտաշէս ետ տայ իր եղբայրը: Մեր թագաւորը երբ տեսաւ Սաթենիկը, շատ հաւնեցաւ անոր գեղեցկութեան եւ ուզեց ամուսնանալ անոր հետ: Բայց ալաններու թագաւորը ոսկի եւ մարգարիտներ ուզեց իր աղջիկը տալու համար: Արտաշէս չհամբերեց. օդին մէջ դարձնելով՝ երկար չուան մը նետեց ու Սաթենիկի մէջքէն անցնելով՝ փախցուց զինքը: Ալաններու թագաւորը ստիպուեցաւ իր աղջիկը հարս տալ Արտաշէսին: Փառաւոր հարսնիք ըրին. այն օրը ոսկի եւ մարգարիտ ցանեցին ժողովուրդին վրայ: Երկու ազգերը բարեկամացան, եւ այլեւս ալանները չյարձակեցան մեր երկրին վրայ:

Երբոր Քրիստոսէ 161 տարի առաջ մեռաւ այս մեծ ու հերոս թագաւորը, հայ ժողովուրդը շատ լացաւ իր վրան: Ամենափառաւոր թաղում ըրին, երկար ժամանակ սուգ պահեցին, եւ հազարաւոր հայեր անձնասպան եղան անոր գերեզմանին վրայ:

ԲԱՌԵՐ

Ալաններ – կովկասեան ցեղ մը, որուն ժառանգներն են ներկայիս օսերը

Աղաչել – թախանձագին խնդրել, պաղատիլ:

Խոստանալ – խոսք տալ, ուխտել, յանձն առնել:

Չուան – ճոպան, թոկ, պարան:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ ըստ պատշաճին աւելցո՛ւր զգացական, սաստկական եւ ցուցական վերաբերականներ:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Արտաշէս Առաջինի եւ Սաթենիկի հարսանիքը:

ԴԱՍ 18.

Թ. Զիջական վերաբերականներ

Հայերենի մեջ զիջական վերաբերականներ կը սեպուին հետեւեալ բառերը՝ *ի դէպ, ի միջի այլոց, ինչ որ է, յամենայն դէպս, այսուամենայնիւ, այնուամենայնիւ, այսուհանդերձ, այնուհանդերձ, ընդհակառակն, մէկ խօսքով*, կարգ մը բայական կապակցութիւններ՝ *ինչ որ ալ ըլլայ, ճիշդ է* եւ այլն:

Ասոնցմէ *ի դէպ, ի միջի այլոց* վերաբերականները ցոյց կու տան, որ միտքը, դատողութիւնը կը մեջբերուի դիպուածաբար, երկրորդաբար: Օրինակ՝

Ի դէպ, Արամը մեր ազգականն է:

Ի միջի այլոց, զինք տեսած եմ Երեւանի մեջ:

Ինչ որ է վերաբերականը ցոյց կու տայ, որ խօսողը կը սկսի նոր միտքեր հաղորդել՝ առանց տուեալ հարցին մասին վերջնական եզրակացութեան գալու, առանց իր միտքը ամփոփելու: Օրինակ՝

Ինչ որ է, այդ փորձանքէն ազատեցանք:

Ինչ որ է, ան մեր լաւագոյն գիտնականներէն է:

Այսուամենայնիւ, այնուամենայնիւ, այսուհանդերձ, այնուհանդերձ, յամենայն դէպս բառերը թէ՛ շաղկապ եւ թէ՛ վերաբերական են:

Այս բառերը, բացի *յամենայն դէպս* բառէն, շաղկապ կը դառնան, եթէ անոնցմով իրարու կապուին երկու նախադասութիւններ, այլապէս կը մտնուին իբրեւ վերաբերականներ: Օրինակ՝

Այսուամենայնիւ Աշոտը ազնիւ մարդ է: (թաւ նշուած բառը՝ վերաբերական)

Այսուհանդերձ անոնք կը պայքարին ճշմարտութեան համար: (թաւ նշուած բառը՝ վերաբերական)

Քու ըսածներդ կը հասկամ, կը մտնեն վիճակդ, այսուամենայնիւ խնդրանքդ չեմ կրնար կատարել: (թաւ նշուած բառը՝ շաղկապ)

Յամենայն դէպս վերաբերականը կը նշանակէ «ամէն պարագայի, այսպէս թէ այնպէս, այս բոլորը հաշուի առնելով հանդերձ» եւ ցոյց կու տայ, որ հակառակ հանգամանքները խօսողի կարծիքով չեն կրնար խանգարիչ ըլլալ տուեալ գործողութեան յատկանիշին արտայայտութեան համար: Օրինակ՝

Աշոտը, յամենայն դէպս, մեր բարեկամն է:
Յամենայն դէպս, գործը լաւ վախճան ունեցաւ:

Օրինակներէն կարելի է եզրակացնել, որ **յամենայն դէպս** բառն ետք ստորակէտ կը դրուի, եթէ նախադասութեան սկիզբն է, իսկ եթէ նախադասութեան մեջտեղն է, երկու կողմէն ստորակէտ կ'առնէ:

Ընդհակառակն բառը, ըստ կիրարկութեան, թէ՛ մակբայ եւ թէ՛ վերաբերական է (երբեմն նաեւ՝ շաղկապ): Մակբայ է, եթէ ուղղակի բային կապուի եւ ցոյց տայ գործողութեան կատարման ձեւը: Օրինակ՝

Մեզի հետ ընդհակառակն պատահեցաւ: (ընդգծուածը՝ մակբայ)

Ընդհակառակն բառը վերաբերական է, եթէ նախադասութեան անդամներէն անջատուած է ստորակէտով: Օրինակ՝

Յասմիկին դէմքը, ընդհակառակն, աւելի պայծառ է: (թաւ նշուածը՝ վերաբերական)

Ընդհակառակն, մենք ձեզի կ'օգնենք: (թաւ նշուածը՝ վերաբերական)

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ վերաբերականները եւ տո՛ւր անոնց իմաստները:

1. Այդ խօսքերը, անշուշտ, իր սրտէն կը բխէին:
2. Արդեօք Արշակը հեռացաւ ւ քաղաքէն:
3. Աշակերտները կը սիրէին մասնաւորաբար թուարանութիւնը:
4. Յակոբը գուցէ հիւանդացած է:
5. Բարեբախտաբար տունը մարդ չկար:
6. Գուցէ ինքն ալ զոհ գացած է արկածին:

7. Անշուշտ ձեզմե կախում ունի այս ձեռնարկին յաջողութիւնը:
8. Ան թերեւս կընկերանայ մեզի մինչեւ ծովափ:
9. Գոնէ այս պայմանը, մի մերժէք:
10. Մենք չենք կրնար հանդուրժել անոր ներկայութիւնը, ո՛չ:
11. Կարպիսը, այո՛, ուշիմ աշակերտ է:
12. Կարօն, ի հարկէ, չէր կրնար չպատասխանել անոր:
13. Մենք ալ, հարկաւ, կընկերանանք ձեզի:
14. Երեւի դեռ մենք երկար պիտի սպասենք հոս:
15. Դուք ալ, անկասկած, ձեր կարծիքը պիտի յայտնէք:
16. Միթէ անկէ նուա՞զ յաջող է այս քերթուածը:
17. Գէթ փորձէինք զիրար հասկնալ:
18. Յամենայն դէպս, ան մեր բարեկամն է:
19. Թող իր անունը արձանագրուի այս տետրին մէջ:
20. Խմեցի վերջին կաթիլն անգամ:

Բ. Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(Սոսկ, գլխաւորաբար, միմիայն, յատկապէս, թո՛ղ, մասնաւորաբար, առանձնապէս, առաւելաբար, գոնէ, միայն, գէթ, թող:)

1. կատարէ այն, ինչ որ յանձնարարուած է իրեն:
2. արձակէն ոտքերուն կապանքները եւ հեռացնեն զինք:
3. քու խօսքերդ կրնան հանդարտեցնել խռոված հոգիս:
4. այս սաստիկ զգայացունց տեսարանը գրուած է բռնապետին սիրտը:
5. անգամ մըն ալ տեսնէի զինք, եւ յետոյ մեկնէր:
6. վերջին լուրը ուրախութիւն պատճառէր այդ մելամաղձոտ մարդուն:
7. Կատարած բարիքներս չարիքներով հատուցեց:
8. քու գաղափարներդ ընկալուեցան հանրութեան կողմէ:
9. կը շեշտեմ արտասանած վերջին խօսքս՝ քեզ զգուշացնելով:
10. նկատելի էր հանդէսին առթիւ կատարուած յարդարանքը:
11. ես ոչ մէկ հարց ունիմ քեզի հետ:
12. Ուսուցիչը կը սիրէր կարմիր գրիչով ստորագրել:

Գ. Ամբողջացո՛ւր վերաբերականներով:

(Ընդհակառակն, ինչ որ է, թող, ինչպես կերելի, այնուամենայնիւ, իրօք
որ, մէկ խօսքով,

թող, ի միջի այլոց, ինչ որ ալ ըլլայ, յամենայն դէպս, ինչ որ ալ ըլլայ):

1., ո՞ր դպրոցը կը յաճախես:
2., կրցանք այդ փորձանքէն փախչիլ:
3. Ձեր խօսքը,, մխիթարեց զինք:
4., Յասմիկը պիտի չլքէ իր ծնողքը:
5. Մեր տեսուչը,, իր լաւագոյնը կատարեց՝ ձախող
աշակերտները փրկելու համար:
6. Այդ ապերախտը,, չարժեր ոչ մէկ գոհողութիւն:
7. Ձեր նշումին վրայ,, աւելցնենք անոր կատարած
մատնանշումները:
8. մենք կը յարգենք մեր դրացիները:
9., դուք ալ կը պատկանիք այդ ցեղախումբին:
10., ես պիտի ներեմ ինծի հանդէպ իր գործած
յանցանքները:
11. Եթէ այդպէս է, բերէ եւ յանձնէ մեր գիրքերը:
12. պայքարին մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐՏԱԻԱԶԴ ԵՐԿՐՈՐԴ

Արտաշէս թագաւորը Արտաւազդ անունով որդի մը ունէր: Ասիկա շատ նախանձոտ եւ շատ զւարճասէր էր: Երբ հայրը մահամերձ էր, Արտաւազդ, տեսնելով, որ շատ հայեր ինքզինքնին կը սպաննեն անոր համար, սիրտը նախանձով լեցուեցաւ եւ ըսաւ.

— Հա՛յր, դուն մեռար գացիր եւ ամբողջ երկիրը քեզի հետ տարիր, ես ի՞նչպէս թագաւորեմ աւերակներուն վրայ:

Հայրը շատ գէշ եղաւ այս խօսքերուն համար եւ անիծեց իր որդին՝ ըսելով.

— Երբոր ձիովդ որսի ելլես ազատ Մասիսն ի վեր, քեզ պիտի բռնեն քաջքերը ու տանին ազատ Մասիսն ի վեր. հոն պիտի մնաս եւ լոյս պիտի չտեսնես:

Արտաշէս թագաւորին անէծքը բռնեց: Արտաւագդ երբ օր մը, սպիտակ ձի մը նստած, երկու որսկան շուներ ալ ետեւէն, որսի գնաց Մասիս լեռներուն վրայ, վայրի այծեամ մը տեսաւ ու ետեւէն վազեց որսալու համար: Ձին այնպիսի արագութեամբ կը վազէր, կարծես թէ ժայռերուն վրայէն կը թռչէր, շուներն ալ ետեւէն կը վազէին. յանկարծ իր առջեւը բացուեցաւ խոշոր անդունդ մը. ձին չկրցաւ բռնել իր վագքը եւ ինկաւ անդունդին մէջ՝ Արտաւագդ ալ հետը: Շուներն ալ ինկան անդունդին մէջ՝ իրենց տիրոջ ետեւէն: Դժոխքի աստուածները հաստ շղթայի զարկին Արտաւագդը: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ դեռ հիմա հոն, քարերուն կապուած, իր հաւատարիմ շուները ամբողջ տարին կը կրծեն շղթաները, որպէսզի մաշին, եւ Արտաւագդ ազատի. բայց Հայաստանի երկաթագործները ամէն շաբաթ իրիկուն մուրճը երկաթէ սալին վրայ կը զարնեն, որպէսզի շղթաները նորէն հաստնան. վասնզի եթէ Արտաւագդ ազատի այդ շղթաներէն, պիտի գայ՝ աշխարհս կործանելու:

ԲԱՌԵՐ

Աւանդութիւն – ավանդագրոյց, բերնէ բերան մեզի հասած պատմութիւն:

Անիծել – նզովել, բանադրել, գէշութիւն ցանկալ մէկուն:

Քաջք – առասպելական չար ոգի, դէ:

Անդունդ – վիհ, անյատակ խորութիւն, խորխորատ:

Սալ – հոս՝ հարթ մակերեսով երկաթեայ զանգուածէլ՝ ծանր մարմին:

Կործանել – տապալել, խորտակել, աւերել, ոչնչացնել:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ ըստ պատշաճին աւելցո՛ւր զգացական, սաստկական, ցուցական եւ զիջական վերաբերականներ:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ նախանձոտ Արտաւագդը:

ԴԱՍ 19.

ՄԱՍ 4. ՇԱՐԱՀԻԻՍՈՒԹԻՒՆ

Բառերով նախադասություններ կազմելու եւ այդ նախադասությունները տրամաբանօրէն իրարու կապելու օրէնքներուն ու կանոններուն ամբողջութիւնը կը կոչուի շարահիւստութիւն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Մարդը կը տրամաբանէ, կը մտածէ եւ իր մտածումները կ'արտայայտէ գրաւոր կամ բանաւոր խօսքով՝ նախադասութիւններով: Ան բառեր կը գործածէ նախադասութիւն կազմելու համար: Բառերը պէտք է իրարու կապուած ըլլան ճիշդ ձեւով, որպէսզի նախադասութիւնը անսխալ կազմուի, ու արտայայտուող միտքը հասկնալի դառնայ:

- Օրինակ՝ 1. *Միջօ պարտէզ ծաղիկ քաղել:*
Արտայայտուած միտքը յստա՞կ է:
2. *Միջօն պարտէզը ծաղիկ կը քաղէ:*

Երկրորդ նախադասութեան մէջ միտքը յստակ է, որովհետեւ բառերը պէտք եղած փոփոխութիւնը կրած են:

Յիշէ՛:

Նախադասութիւնը կը սկսի գլխատառով ու կը վերջանայ վերջակէտով կամ կախման կէտերով:

- Օրինակ՝ *Ծոյլին համար ամէն բան դժուար է:*
Պիտի մեկնիս...

Բառերուն այն կապակցութիւնը կամ այն բառը, որ միտք եւ կամ յոյզ կ'արտայայտէ, կը կոչուի նախադասութիւն:

Նախադասութեան անդամները

Այն բառերը, որոնք, իրարու կապուելով, նախադասութիւն մը կը կազմեն, կը կոչուին նախադասութեան անդամներ:

- Օրինակ՝ *Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞ արշալոյսը...*

Այս նախադասութիւնը կազմուած է եօթը բառէ, որոնցմէ միայն չորսը նախադասութեան անդամ են՝ *բառ, խօսք, ունի՞, արշալոյսը*:

Նոյն նախադասութեան մէջ գործածուած երեք բառեր նախադասութեան անդամ չեն, որովհետեւ առարկայ, յատկանիշ կամ գործողութիւն չեն անուաներ. **ո՛հ**-ը ձայնարկութիւն է, զմայլանքի զգացում կարտայայտէ եւ որոշ երանգ մը կու տայ նախադասութեան. **միթէ**-ն վերաբերական է եւ կասկած կարտայայտէ, իսկ **կամ**-ը կը շաղկապէ նախադասութեան *բառ* եւ *խօսք* անդամները:

Նախադասութեան անդամ ըլլալ կը նշանակէ նախադասութեան մէջ պաշտօն ունենալ:

Նախադասութեան անդամ կըլլան գլխաւոր խօսքի մասերը՝ գոյականը, ածականը, դերանունը, թուականը, բայը, մակբայը: Նախադասութեան անդամ չեն ըլլար երկրորդական խօսքի մասերը՝ կապերը, շաղկապները, ձայնարկութիւնները եւ վերաբերականները:

Նախադասութեան գլխաւոր անդամները

Պարզ համառօտ նախադասութիւն

Լոյսը բացուեցաւ:

Զանգը հնչեց:

Այս նախադասութիւններէն իւրաքանչիւրը ունի 2 անդամ, որոնցմէ մէկը ցոյց կու տայ այն առարկան, որ բան մը կընէ կամ կըլլայ (*լոյսը, զանգը*), իսկ միւսը ցոյց կու տայ, թէ ի՛նչ կընէ կամ ի՛նչ կըլլայ այդ առարկան (*բացուեցաւ, հնչեց*):

Նախադասութեան այն անդամը, որ ցոյց կու տայ բան մը ընող կամ բան մը եղող առարկան, կը կոչուի ենթակայ (լոյսը, զանգը):

Նախադասութեան այն անդամը, որ ցոյց կու տայ, թէ ի՛նչ կըլլայ կամ ի՛նչ է ենթական, կը կոչուի ստորոգիչ (բացուեցաւ, հնչեց):

Լոյսը բացուեցաւ, զանգը հնչեց նախադասութիւնները կազմուած են նախադասութիւն կազմող երկուքական անդամէ, որոնցմէ մէկը ենթակայ է, իսկ միւսը՝ ստորոգիչ (ստորոգեալ):

Ենթական եւ ստորոգիչը կը կոչուին նախադասութեան գլխաւոր անդամներ:

Միայն ենթակայով եւ ստորոգիչով կազմուած նախադասութիւնը կը կոչուի պարզ համառօտ նախադասութիւն:

Ուրեմն՝ *լոյսը բացուեցաւ, զանգը հնչեց* պարզ համառօտ նախադասութիւններ են:

Պարզ համառօտ նախադասութեան մէջ կրնան ըլլալ նախադասութեան անդամ չհանդիսացող բառեր՝ ձայնարկութիւն, վերաբերական եւ այլն: Օրինակ՝

1. *Օ՛հ, զանգը հնչեց:*
2. *Թերեւս զանգը հնչէ:*

Պարզ համառօտ նախադասութեան ենթական կրնայ ըլլալ բազմակի: Օրինակ՝

Անին եւ Հայկը կը գրուցեն:

Վարժութիւն

Մէկ գիծով ընդգծէ՝ ենթակաները, երկու գիծով՝ ստորոգիչները:

Հայաստանի մէջ տեղի կ'ունենար մեծ զօրահանդէս մը: Հռոմէացի զինուորականները ապշած կը դիտէին անվերջանալի շքերթը: Անոնք հայ զինուորներուն հսկայ թիւը տեսնելով՝ հեռացան Հայաստանէն: Անոնք մտածեցին, որ իրենց զինուորները երբեք պիտի չկարենան յաղթել հայ զինուորներուն:

Հիւրերէն ռեւէ մէկը չէր նկատած, որ զինուորները, հրապարակէն դուրս ելլելով, կը փոխէին իրենց տարազն ու զէնքները եւ նորէն հրապարակ կը մտնէին...

Վարժություն

Պարզ համառոտ նախադասությի՞ն է (այո, ոչ):

1. Կարծես ձին կը տեղայ:
2. Աստղը կը փայլի:
3. Չա՛ն, արեւը ծագեցաւ:
4. Մարախը կը ցատկոտէ:
5. Արան եւ Սեւակը գծուեցան:

Պարզ ընդարձակ նախադասությին

Աշակերտները կը վազեն:

Այս նախադասութիւնը կազմուած է երկու գլխաւոր անդամէ՝ ենթակայէ (*աշակերտները*) եւ ստորոգիչէ (*կը վազեն*):

Մենք կրնանք այս նախադասութեան անդամներուն հետ գործածել նաեւ ուրիշ անդամներ: Այսպէս՝

Խանդավառ աշակերտները կը վազեն բակը:

Խանդավառ անդամը կը լրացնէ ենթական, այսինքն՝ յաւելեալ տեղեկութիւն կու տայ *աշակերտներ* ենթակային մասին, իսկ *բակը* անդամը կը լրացնէ *կը վազեն* ստորոգիչը, այսինքն՝ ցոյց կու տայ, թէ ո՛ր կը վազեն աշակերտները:

Խանդավառ եւ *բակը* անդամները լրացումներ են կամ երկրորդական անդամներ:

Գլխաւոր անդամներով եւ առնուազն մէկ լրացումով կազմուած նախադասութիւնը կը կոչուի պարզ ընդարձակ նախադասութիւն:

Խանդավառ աշակերտները կը վազեն բակը պարզ ընդարձակ նախադասութիւն է:

Վարժություն

Ա. Բաց ձգուած տեղերը ամբողջացո՛ւր գլխաւոր եւ երկրորդական անդամներով:

1. Հայրս (ինչո՞վ) վերադարձաւ (ուրկէ՞)
2. Բժիշկը (ի՞նչպէս) (ի՞նչ կ'ընէ)
հիւանդը:
3. (Ի՞նչը) ծածկուած էր (ինչպիսի՞)
ծաղիկներով:
4. (Ե՞րբ) լեռներուն (ինչէ՞րբ)
ծածկուած կըլլան (ինչո՞վ)
5. (Ո՞ր) աշակերտները (ո՞ր)
վերադարձան (ի՞նչպէս)
6. (Ո՞ր) աշակերտը (ի՞նչպէս)
կատարած էր (ինչպիսի՞) (ի՞նչը)
:
7. Մեղուն (ի՞նչ) կը պատրաստէ (ինչէ՞ կամ ինչերէ՞)
.....
8. (Որո՞ւ) տղան (ե՞րբ)..... մեկնեցաւ (ո՞ր)
.....
9. Եղբայրս (ի՞նչ) նուիրեց (որո՞ւ)
տղուն:
10. Երիտասարդը (ի՞նչպէս) ըմբռնեց (ինչի՞ն)
..... լուծումը:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

Մեծն Տիգրան Մասիս լեռան անդունդներն ինկած Արտաւազդի թռոնիկն էր: Իր հայրը պատերազմ ըրաւ պարթեւներու դէմ եւ յաղթուեցաւ. անոնք շատ մը հողեր գրաւեցին մեր երկրէն եւ փոքրիկ Տիգրանն ալ պատանդ տարին իրենց երկիրը, որպէսզի եթէ անոր հայրը նորէն պատերազմ ընէ, զինքը վրէժի համար սպաննեն:

Տիգրան երկար տարիներ օտարութեան մէջ մնաց. երբ Քրիստոսէ իննսունհինգ տարի առաջ իր հայրը մեռաւ, հայերը զինքը թագաւոր

դրին եւ խնդրեցին պարթեւներէն, որ Տիգրանը Հայաստան դրկեն: Եկաւ Հայաստան եւ թագաւոր եղաւ:

Ասիկա շատ քաջ, խելացի եւ հպարտ մարդ էր, իր ժամանակին ամէնէն գեղեցիկը: Քովը կանչեց Հայաստանի բոլոր երիտասարդները, անոնցմով մեծ բանակ մը կազմեց, սորվեցուց լաւ կռուելու արուեստը եւ այնքան զօրացաւ, ու անունը այնպէս տարածուեցաւ շուրջի աշխարհներուն մէջ, որ բոլորը վախցան իրմէ: Պարթեւներու դէմ պատերազմեցաւ եւ անոնց յաղթեց. ետ առաւ մեր հողերը, որ գրաւած էին, մանաւանդ թէ անոնց երկրէն մեծ մաս մը Հայաստանի կցեց:

Յետոյ հայկական բանակով յարձակեցաւ Վրաստանի եւ Կովկասի լեռնցիներուն վրայ. գրաւեց անոնց երկիրները եւ մեծցուց Հայաստանը: Ասոնց թագաւորները գերի ըրաւ, եւ երբ տեղ մը երթար, ինքը ձիու վրայ կը նստէր, եւ այդ գերի թագաւորներն ալ քովէն կը քալէին:

Իր ժամանակ Սեւ ծովի եզերքներուն վրայ երկիր մը կար, որ **Պոնտոս** կը կոչուէր. այս երկրին վրայ կը թագաւորէր **Միհրդատ** անունով քաջ եւ խելացի մարդ մը: Տիգրան եւ Միհրդատ իրարու բարեկամ եւ դաշնակից եղան: Տիգրան ամուսնացաւ Միհրդատի **Կղեոպատրա** աղջկան հետ, ու փառաւոր հարսանիք ըրին:

Այս երկու թագաւորները միացան կռուելու համար **հռոմայեցիներուն** դէմ, որոնք Իտալիայէն մինչեւ մեր երկրին սահմաններուն կը տիրէին:

ԲԱՌԵՐ

Պատանդ – իբրեւ երաշխիք բռնի պահուող անձ մը:

Վրէժ – չարիք՝ չարիքին դէմ իբրեւ հատուցում՝ պատիժ:

Օտարութիւն – ուրիշ խորթ՝ ոչ հարազատ երկիր, պանդխտավայր:

Վարժութիւն

Ա. Ընտրէ՛ շարադրանքէն 5 պարզ ընդարձակ նախադասութիւն եւ համառօտէ՛:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Նկարագրէ՛ Տիգրան Մեծ թագաւորը:

ԴԱՍ 20.

ԵՆԹԱԿԱՅ

Նախադասութեան ենթական միշտ այն առարկան է (մարդ, կենդանի, իր կամ երեւոյթ), որ բան մը կընէ կամ կըլլայ: Ենթական սովորաբար կարտայայտուի գոյականով կամ դերանունով:

Վարդը բացուեցաւ:

Ան տուն վերադարձաւ:

Այս նախադասութիւններուն մէջ *վարդը* բառը ցոյց կու տայ *բացուեցաւ* եղելութեան առարկան, իսկ *ան* դերանունը՝ *վերադարձաւ* գործողութեան առարկան:

Ենթական կը պատասխանէ **ո՞վ, ի՞նչ** հարցումներուն:
Ի՞նչը բացուեցաւ՝ վարդը, ո՞վ տուն վերադարձաւ՝ ան:

Ենթական կը դրուի ուղղական հոլովով:

Յաճախ, սակայն, իբրեւ ենթակայ կը գործածուին նաեւ ածականը, թուականը, բայը (դերբայները) եւ այլ խօսքի մասեր: Այսպիսի պարագաներու մէջ ածականը, թուականը, դերբայը եւ այլն կընկալուին իբրեւ գոյական կամ կը փոխարինեն որեւէ գոյական:

Այսպիսով՝ ենթական կրնայ արտայայտուիլ՝

Ա. Որեւէ գոյականով.

1. Ժողովուրդը պիտի ըմբոստանայ անիրաւութեան դէմ:

2. Արշակը մեծցաւ միս-մինակ:

Բ. Դերանունով.

1. Ես փորձեցի բոլոր լարերը հատիկ-հատիկ:

2. Ոչ ոք կը յիշէր արկածին թուականը:

Գ. Գոյականաբար գործածուած ածականով.

1. Գեղեցիկը հաճելի է բոլորին համար:

2. Փոքրերը կը յարգեն մեծերը:

Դ. Գոյականաբար գործածուած թուականով.

1. **Երրորդը** աշխատասէր տղայ մըն է:
2. **Ութը** չորսէն մեծ է երկու անգամ:

Ե. Գոյականաբար գործածուած դերբայներով.

1. **Վազելը** առողջարար է (անորոշ դերբայ):
2. **Գրածը** կարդացուեցաւ (յարակատար դերբայ):
3. **Խօսողը** ոտքի ելաւ (ենթակայական դերբայ):
4. **Գրելիքը** պիտի հրատարակուի (ապառնի դերբայի Բ. ձեւ):

Զ. Ենթակայ կրնայ դառնալ ամէն մէկ բառ, դարձուածք, նոյնիսկ հնչիւն, նախադասութիւն, եթէ գոյականաբար (փոխանունաբար) գործածուի:

1. **Գ-ն** բաղաձայն է:
2. **Օ-ն** ձայնաւոր է:
3. **«Դասս չեմ սորված»-ը** ծոյլ աշակերտին ամէնօրեայ պատասխանն է:

Ծանօթութիւն 1:

Մարդոց անուններն ու մականունները միասնաբար կը դառնան նախադասութեան մէկ անդամ: Օրինակ՝

Պետրոս Դուրեան քնարերգակ է:
Յակոբ Պարոնեան երգիծարան է:

Ընդգծուածները ենթակայ են:

Ծանօթութիւն 2:

Շատ յաճախ գրաւոր կամ բանաւոր խօսքին մէջ ենթական կ'արտայայտուի երկու բառով, որոնք կը նշեն նոյն առարկան կամ առարկաները: Այս պարագային երկու բառով արտայայտուած ենթական կը կոչուի բաղադրեալ ենթակայ եւ կը մտնուի իբրեւ մէկ անդամ: Օրինակ՝

Ես ինքս կը պատասխանեմ այդ հարցումին:
Մենք ինքներս կը պատասխանենք այդ հարցումին:
Դուն ինքդ գիտես իրականութիւնը:
Դուք ինքներդ յանցաւոր էք:

*Ուսուցիչը ինքը պիտի պաշտպանէ աշակերտներուն իրաւունքը:
Դուք երկուքդ դասարան պիտի մնաք:
Մենք ամէնքս կը յարգենք ձեզ:
Աստնք բոլորը օրինաւոր են:*

Թաւ նշուածները բաղադրեալ ենթակայ են:

Ինքս, ինքներս, ինքդ, ինքներդ, երկուքդ, ամէնքս բառերուն հետ գործածուած **ս**-ն եւ **դ**-ն դիմորոշ յօդեր են. դիմորոշ յօդերը, դրուելով առարկայի կամ անձ ցոյց տուող անունի վրայ, անոր կու տան առաջին կամ երկրորդ դէմքի նշանակութիւն:

Օրինակ՝

Աշակերտներս պարտաւոր ենք յարգել դպրոցին օրէնքները:

(Այսինքն՝ մենք՝ աշակերտներս,...)

Երիտասարդներդ փորձառութեան պէտք ունիք:

(Այսինքն՝ դուք՝ երիտասարդներդ,...)

Վարժութիւն

*Ա. Ընդգծէ՛ ենթակայները եւ նշէ՛, թէ ի՛նչ խօսքի մասով արտա-
յայտուած են անոնք:*

1. Փոքրիկները քնացած էին օրօրոցներու մէջ:
2. Ամենամեծը հինգ տարեկան տղեկ մըն էր:
3. Երկրորդն ալ տղեկ մըն էր՝ գանգուր մագերով:
4. Երեք փոքրիկներէն առաջինը՝ աղջիկը, արթնցաւ շատ կանուխ:
5. Ան բարձրացուց գլուխը եւ սկսաւ ուշի-ուշով նայիլ իր շուրջը:
6. Փրկուողները խելակորոյս կը փախչէին:
7. Լողալը միշտ ալ հաճելի է:
8. Ամէնքը կը շտապէին մահամերձ միլիոնատիրոջ տունը:
9. Ոչինչ պատահեցաւ մեզի հետ:
10. Հինգը անգոյգ թիւ է:
11. Ձեր խումբին մէջ մրցանակ ստացողնե՞րն են շատ, թե՞
չստացողները:
12. Ո՞ր են շարեւիքներդ:

Բ. Իբրև ենթակայ՝ տեղադրե՛ հետևեալ բառերը:

(Նախիր, հօտ, երամակ, երամ, քարաւան, վոհմակ, վտառ, պարս):

Ոչխարի լեռ բարձրացաւ: Կովերու կ'արածեր դաշտին մէջ: Գայլերու շրջապատեց մեզ: Թռչուններու կը գաղթեր դէպի տաք երկիրներ: Ձուկերու փոխեց իր ուղղութիւնը: Մեղուներու արձակեցաւ փեթակին մօտեցած արջին վրայ: Ձիերու խօլաբար կը սուրբար հովիտներէն: Ուղտերու կ'անցնէր անապատէն:

Գ. Լրացո՛ւր թուական ենթականերով:

1. Տղաներէն գացին փայտ բերելու, իսկ մնացին վրանին մօտ:
2. հարիւրին կէսն է:
3. եւ դասական թուական կը դառնան «-րորդ» ածանցով:
4. Առաջին աշակերտը թելադրեց, իսկ գրեց:
5. երեքին կրկնապատիկն է:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՏԻԳՐԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Տիգրան եւ Միհրդատ թագաւորները որոշեցին իրենց բանակները երկու մասի բաժնել: Տիգրան պիտի գրաւեր Սիւրիա, Լիբանան, Կիլիկիա, Պաղեստին. իսկ Միհրդատ պիտի կռուէր հռոմայեցիներուն դէմ՝ զանոնք վանելու համար իրենց երկիրը:

Պատերազմները սկսելէ առաջ Տիգրան Հայաստանի հարաւը շինեց մեծ ու ամուր քաղաք մը. զայն պատեց հաստ ու բարձր պարիսպներով եւ անունը դրաւ **Տիգրանակերտ**, այսինքն՝ Տիգրանէն շինուած. յետոյ անոր մօտ շինեց ուրիշ ամուր քաղաք մը, որ **Մծքին** կոչուեցաւ: Իր հետ առնելով հարիւր հազար զինուոր՝ քալեց դէպի Կիլիկիա, գրաւեց այդ երկիրը. յետոյ անցաւ Սիւրիա–Լիբանան. ոչ մէկ երկիր կրցաւ իր դէմը պատերազմիլ, բոլորին յաղթեց: Լիբանանէն անցաւ Դամասկոս, ան ալ գրաւեց ու հասաւ մինչեւ Երուսաղէմ քաղաքը: Ամէն տեղ ստիպեց, որ հայերէն տորվին: Ամէն կողմ հայ պահակներ եւ կառավարիչներ դրաւ:

Այս գրաւած քաղաքները տասնեօթը տարի հայերուն ձեռքը մնացին: Տիգրան Երուսաղէմէն գերի տարաւ անոնց **Հիւրկանոս** մեծ քահանան. գրեթէ երեք հարիւր հազար գերիներ առնելով հետը՝ բերաւ եւ Տիգրանակերտի մէջ բնակեցուց, որպէսզի աշխատին եւ մեր երկիրը զարգացնեն: Այս յաղթանակներէն վերջ Տիգրան ինքզինքը **Արքայից արքայ** անուանեց, այսինքն՝ թագաւորներու թագաւոր:

ԲԱՌԵՐ

Վանել – հեռու քշել, վտարել, հեռացնել:

Քալել – [հոս՝] արշաւել:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր ենթակաները եւ նշէ՛, թէ ինչով արտայայտուած են անոնք:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ հայթայթէ Տիգրան Մեծին վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 21.

ՄՏՈՐՈՉԻՉ

Արամը կը քնանայ: (ի՞նչ կընէ)
Աշոտը կ'ատողջանայ: (ի՞նչ կըլլայ)

Առաջին նախադասութեան մէջ *կը քնանայ* անդամը ցոյց կու տայ, թէ ի՛նչ կընէ ենթական (*Արամը*):

Երկրորդ նախադասութեան մէջ *կ'ատողջանայ* անդամը ցոյց կու տայ, թէ ի՛նչ կըլլայ ենթական (*Աշոտը*):

Նաեւ՝

Սահակը եղբայրս է: (ո՞վ է)
Ասիկա խնձորենի է: (ի՞նչ է)
Վահէն ատողջ է: (ի՞նչպէս է)
Վեցին կէսը երեք է: (քանի՞ է)

Առաջին նախադասութեան մէջ *եղբայրս է* անդամը ցոյց կու տայ, թէ ո՞վ է ենթական (*Սահակը*):

Երկրորդ նախադասութեան մէջ *խնձորենի է* անդամը ցոյց կու տայ, թէ ի՛նչ է ենթական (*ասիկա*):

Երրորդ նախադասութեան մէջ *ատողջ է* անդամը ցոյց կու տայ, թէ ի՛նչպէս է ենթական (*Վահէն*):

Չորրորդ նախադասութեան մէջ *երեք է* անդամը ցոյց կու տայ, թէ քանի՛ է ենթական (*կէսը*):

Նշուած 6 նախադասութիւններուն մէջ ընդգծուած անդամները՝ *կը քնանայ*, *կ'ատողջանայ*, *եղբայրս է*, *խնձորենի է*, *ատողջ է*, *երեք է*, ստորագիչ են:

Ստորագիչը նախադասութեան այն գլխաւոր անդամն է, որ ցոյց կու տայ, թէ ի՛նչ կընէ, ի՛նչ կըլլայ, ո՞վ է, ի՛նչ է, ի՛նչպէս է, քանի՛ է, ո՞րքան է ենթական:

Ստորագիչին միջոցով ենթակային կը վերագրուի բան մը ընելու, ըլլալու, դառնալու յատկանիշ:

Ստորոգիչը գտնելու համար ենթակային կուղղենք **ի՞նչ կընէ, ի՞նչ կըլլայ, ո՞վ է, ի՞նչ է, ի՞նչպէս է, քանի՞ է, ո՞րքան է** հարցումները:

Վարժութիւն

Ա. Ենթակաները ընդգծէ՛ մէկ գիծով, ստորոգիչները՝ երկու գիծով:

Թիթեռնիկնէ՛ր, նախշո՛ւն թիթեռնիկներ, որ կը նմանիք իմ գիւղիս թիթեռնիկներուն, եկէ՛ք, եկէ՛ք հայերէն խօսինք: Ձորէ՛ր ու անտառնէ՛ր, հայերէ՛ն երգեցէք՝ մտիկ ընեմ ձեզի: Հո՛ղ, հո՛ղ, յաւիտենական հո՛ղ, պղպջա՛ այն հին վանկերը, զորս իմ նախնիքս ցանած են երկրի վրայ: Ջրի կ, որ արծաթ տերեւներու նման թափեր ես մարմարին վրայ, թրջէ՛ լեզուս, որպէսզի միշտ յիշատակներ խօսի:

Պարզ ստորոգիչ

Յաճախ նախադասութեան ստորոգիչ կըլլան դիմաւոր բայերը:

Արամը կը քնանայ, Աշոտը կ'առողջանայ նախադասութիւններուն մէջ ստորոգիչները պարզ են:

Միայն դիմաւոր բայով արտայայտուած ստորոգիչը պարզ ստորոգիչ է:

Պարզ ստորոգիչը կրնայ արտայայտուիլ բային բոլոր եղանակներուն պարզ եւ բաղադրեալ ժամանակաձևերով: Օրինակ՝

Յասմիկը կերգէ (կերգէր, երգեց, երգած է, երգեր է, երգած էր, երգեր էր, պիտի երգէր եւ այլն):

Ծանօթութիւն:

Յարադիր բայերով արտայայտուած ստորոգիչը պարզ ստորոգիչ է: Թէև յարադիր բայերը (*երեւան գալ, դուրս ելլել, ծունկի գալ, սիրտ առնել, նկատի առնել, խելքի գալ...*) կազմուած են առանձին բաղադրիչներէ, բայց մէկ բայ են: Օրինակ՝

Աշոտը ծունկի եկաւ սրբանկարին դիմաց:

Մահակը ի վերջոյ խելքի եկաւ:

Վարժություն:

Ա. Ընդգծե՛ այն բայերը, որոնք ստորոգիչի պաշտոն չունին:

Երկար աստենե՛ ի վեր հայերէն չեմ խօսած:

Ու, լքուած նուագարանի մը նման, հայերէնս արդէն կարկամեր է միտքիս անկիւններուն մէջ: Խաշած ոսկորներու պէս՝ միսէ գուրկ ու ճերմակ, կաւիճ են դարձեր բառերս: Իրարու կը զարնեմ՝ գտնելու համար հին ձայները: Ի գո՛ւր, ի գո՛ւր...

- Պիտի մոռնաս լեզուդ, - կըսէ յիմարանոցին այրերու բաժինին ներքին բժիշկը, որ ծագումով յոյն է, սակայն ֆրանսական հիւանդանոցներու մէջ ապրելով՝ արդէն փոխեր է իր ազգը:

Տխրութիւն կը զգամ, շրթներս կը պրկուին, կուզեմ լալ մանուկի մը պէս, որ շուրջը կը նայի՝ փնտռելու համար պաշտպան մը:

Բ. Ամբողջացո՛ւր ստորոգիչներով (դիմաւոր բայերով):

(կը ժպտէին, կէրեւէին, պճնուած էին, սկսան, կը դառնային, վազեցին)

Դահլիճին մէջ նուագել երաժիշտները: Քանի մը վայրկեան չանցած՝ բոլոր դուռներէն ու անկիւններէն պարասրահ տղաք ու աղջիկներ: Անոնք գոյնզգոյն զարդերով: Ամէնքը ուրախ-գուարթ տրամադրութեան մէջ էին: Պարուհիները պչրանքով, եւ փայլփլուն լոյսերուն տակ անոնց հագուստներուն մետաքսն ու զարդերը արեւի շլացուցիչ

Բաղադրեալ ստորոգիչ

Բաղադրեալ ստորոգիչն ալ, պարզ ստորոգիչին նման, կը կազմուի դիմաւոր բայով. բայց ի տարբերութիւն պարզ ստորոգիչին՝ բաղադրեալ ստորոգիչը իրեն հետ կունենայ ուրիշ բառ մը (գոյական, ածական, թուական, դերանուն, մակբայ եւ այլն), որ կարտայայտէ ենթակային վերագրուող յատկանիշը: Օրինակ՝

- Յակոբը աշակերտ է:*
- Տերերը դեղին է:*
- Ութին կէսը չորս է:*

Բժիշկը ես եմ:

Շարժումը արագ է:

Ընդգծուածները՝ *աշակերտ է, դեղին է, չորս է, ես եմ, արագ է, բաղադրեալ ստորոգիչ են, որովհետեւ կազմուած են էական բայէն (եմ, է) եւ գոյականէ, ածականէ, թուականէ, դերանունէ, մակբայէ (աշակերտ, դեղին, չորս, ես, արագ):*

Գոյականէ, ածականէ, թուականէ, դերանունէ, մակբայէ կամ այլ խօսքի մասէ եւ բայէ կազմուած ստորոգիչը բաղադրեալ է:

Բաղադրեալ ստորոգիչին մէջ եղած օժանդակ բայը անոր հանգոյցն է, իսկ միւս բառերը (գոյական, թուական, մակբայ եւ այլն)՝ անոր ստորոգելին:

Ստորոգելին՝ ենթակային վերագրուող յատկանիշը, կրնայ արտայայտուիլ գոյականներով ու գոյականաբար գործածուած բառերով, ածականներով, թուականներով, դերանուններով, անկախ կիրարկութիւն ունեցող դերբայներով, մակբայներով, կապերով ու անոնց կապուող բառերով, բառակապակցութիւններով:

1. Գոյականով՝

Պօղոսը դերձակ է: (ուղղ. հոլով)

Ժամացոյցը գրպանի է: (տրակ. հոլով)

Գլխարկը նապաստակի մորթէն էր: (բաց. հոլով)

Կարկանդակը սուրմով էր: (գործ. հոլով)

2. Ածականով՝

Տերերը դեղին է:

Փողոցները ամայի են:

3. Թուականով՝

Արամը դասարանին առաջինն է:

Առաջին դասարանի աշակերտներուն թիւը յիսուն է:

4. Դերանունով՝

Իրականութիւնը այս է:

Տունը իմս է:

Արամին կարողութիւնը այդքան էր:

5. Անորոշ, ենթակայական, յարակատար եւ ապառնի (Բ. ձեւ) դեր-
բայներով՝

Մեր կոչումը հայրենիքին հաւատարմօրէն ծառայելն է:

Արամը ծրագիրներ ընդօրինակող է:

Ասիկա Գարեգինին գրածն է:

Աստնք իմ գրելիքներս են:

6. Մակբայով՝

Աստուած ամէնուրեք է:

Մենք հեռու ենք:

7. Կապով եւ կապուող բառով՝

Այս գիրքը փոքրիկներուն համար է:

Պատմուածքը աղքատներու մասին է:

8. Բառակապակցութեամբ՝

Փոքրիկ աղջիկը գլուխը բաց էր:

Անոր դէմքը աւելի գեղեցկացած էր:

***Հանգոյցը բաղադրեալ ստորոգիչին այն մասն է, որ ստորոգելին կը
կապէ ենթակային:***

Էական բայէն բացի՝ հանգոյց կրնան դառնալ նաեւ վերացական կամ
վիճակ արտայայտող բայեր, ինչպէս՝ *դառնալ, սեպուիլ, համարուիլ,
թուիլ, երելիլ, յայտարարուիլ, կոչուիլ, անուանուիլ, հոշակուիլ, նշանա-
կուիլ, նկատուիլ, կարծուիլ, կազմել, մնալ* եւ այլն: Օրինակ՝

Եղբայրս բժիշկ դարձաւ: (եղաւ)

Ընկերս յանցաւոր նկատուեցաւ:

Նորածինը Վարդան կոչուեցաւ:

Թաւ նշուածները հանգոյց են:

Վարժութիւն

***Ա. Մէկ գիծով ընդգծէ՛ պարզ ստորոգիչները, երկու գիծով՝ բաղադրեալ
ստորոգիչները:***

1. Հայր Ղեւոնդ Ալիշան շատ համեստ էր եւ շատ սիրուած էր հայ
ժողովուրդին կողմէ:

2. Խաչատուր Աբովեան մեծ մանկավարժ էր:

3. Այտրնեան արեւմտահայերէնի գիտական քերականութեան հիմնադիրը կը նկատուի:
4. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց ծնած է Վան:
5. Եղիա Տէմիրճիպաշեան տարօրինակ եւ իւրայատուկ գրող է: Ան շատ գեղեցիկ քերթուածներ գրած է:
6. Գրաբար-աշխարհաբար պայքարի ժամանակ Տէմիրճիպաշեան ըսած է. «Գրաբարը կը պաշտէի, իսկ աշխարհաբարը կը պաշտպանէի»:
7. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (1836-37) երկհատոր բառարանին հեղինակները Մխիթարեան միաբանութեան ուխտէն երեք վարդապետներ են՝ հայր Գաբրիէլ Աւետիքեան, հայր Խաչատուր Միւրմէլեան, հայր Մկրտիչ Աւգերեան:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՊԱՏԵՐԱԶՄ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒ ԴԷՄ

Մինչդեռ Տիգրան յաղթեց իր բոլոր թշնամիներուն, Պոնտոսի թագաւորը՝ Միհրդատ, յաղթուեցաւ եւ փախաւ Տիգրանի քով: Հռոմայեցիները պահանջեցին Տիգրանէն, որ Միհրդատը իրենց յանձնէ: Տիգրան ըսաւ.

— Ես իմ աներհայրս ձեզի չեմ տար:

Հռոմայեցիները պատերազմ բացին Տիգրանի դէմ եւ **Լուկուլլոս** անունով զօրավարը դրկեցին: Այս զօրավարը յանկարծակի մտաւ Հայաստան եւ գնաց պաշարեց Տիգրանակերտը, ուր կային Տիգրանի գանձերը, կիները եւ տղաքը:

Տիգրան ետ քաշուեցաւ եւ գնաց Մուշի կողմերը. բայց սիրտը կը ցաւեր, որ իր կիները եւ տղաքը պաշարուած մնացին: Վեց հազար հայ քաջեր երդում ըրին զանոնք ազատել. ձիով յարձակեցան ու ճեղքեցին թշնամիները եւ կիներն ու տղաքը ազատեցին: Լուկուլլոս քալեց Տիգրանի դէմ, եւ Տիգրանակերտի հիւսիսը ճակատամարտ եղավ: Տիգրանը յաղթուեցաւ: Բայց ասիկա վերջնական կոխ չեղաւ: Յաջորդ տարին Լուկուլլոս ուզեց Արտաշատ մայրաքաղաքը գրաւել: Մեծ բանակով քալեց Արածանի գետին ձորերէն դէպի Արարատ լեռը: Անոր բանակին մէջ կային գաղիացիներ, անգղիացիներ, յոյներ եւ ուրիշ

ազգեր: Տիգրան իրեն կը սպասէր Մուշի դաշտին մէջ: Հոն պատերազմ եղաւ, եւ Լուկուլլոսի բանակը յաղթուեցաւ:

Երբ Հռոմ քաղաքին մէջ լսեցին, թէ իրենց բանակը ջարդուեր է, շատ մեծ սուգ բռնեցին ու Լուկուլլոսը ետ կանչեցին՝ տեղը զօրավար դնելով **Պոմպէոսը**:

ԲԱՌԵՐ

Գանձ – հարստութիւն, թանկագին իրերու ամբողջութիւն:

Ճեղքել – հոս՝ ուժով ճամբայ բացել, շրջափակումը պատռել:

Ճակատամարտ – հակառակորդներու պատերազմական ընդհարում՝ կռիւ՝ մարտ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր ստորագիշները, որոշէ՛ անոնց տեսակը եւ նշէ՛, թէ ինչով արտայայտուած են անոնք:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ հայթայթէ Հռոմէական կայսրութեան վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 22.

ԵՆԹԱԿԱՅԻՆ ԵՒ ՍՏՈՐՈԳԻՉԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Ենթական եւ ստորոգիչը սովորաբար իրարու հետ կը համաձայնին թիւով, ինչպէս նաեւ դէմքով:

Ենթակային եւ ստորոգիչին՝ թիւով համաձայնութիւնը

1. Եզակի ենթակային հետ կը դրուի եզակի ստորոգիչ, յոգնակի ենթակային հետ՝ յոգնակի ստորոգիչ: Օրինակ՝

Դաշտը ծածկուեցաւ ձիւնով:

Փողոցները ամայացան:

2. Յոգնակի (յոգնակերպ) ենթակային հետ եզակի ստորոգիչ կը գործածուի, երբ յոգնակի թիւով դրուած ենթական մէկ առարկայ կանուանէ: Օրինակ՝

Ըաֆֆիի «Կայծեր»-ը կը կարդացուի մեծ հետաքրքրութեամբ:

Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ»-ը շատ սիրուած է:

Ծանօթութիւն:

Յոգնակերպ կը կոչուին այն գոյականները, որոնք ձեւով յոգնակի են, բովանդակութեամբ՝ եզակի: Օրինակ՝ «Կայծեր» (վէպը), *Տեղեր* (գիւղը), *Արտեր* (կղզին), *Նիդերլանդներ* (երկիրը):

3. Բազմակի (մէկէ աւելի) ենթականերուն հետ կը գործածուի յոգնակի ստորոգիչ: Օրինակ՝

Արամը եւ Յակոբը շուտ վերադարձան:

Ծանօթութիւն:

Եզակի թիւով բազմակի ենթականերուն հետ եզակի ստորոգիչ կը գործածուի՝

ա. Երբ ենթակաները ունին *իւրաքանչիւր, ամէն, ամէն մէկ* եւ նման իմաստ արտայայտող որոշիչներ: Օրինակ՝

Իւրաքանչիւր աշակերտ եւ աշակերտուհի պէտք է յարգէ դպրոցին օրէնքները:

բ. Երբ բազմակի ենթակաները իմաստով մօտ են եւ միասին կ'արտայայտեն մէկ իմաստ: Օրինակ՝

Կարգ ու կանոնը մեծ դեր կը խաղայ մեր դպրոցական կեանքին մէջ:

գ. Երբ բազմակի ենթակաները կապուած են կամ, կա՛մ....կա՛մ, ոչ թէ....այլ շաղկապներէն որեւէ մէկով: Օրինակ՝

Այսօր փոքրիկներուն պիտի հսկէ Արամը կամ Աշոտը:

Պատասխան պիտի տա կա՛մ աշակերտը, կա՛մ անոր ծնողը:

Տղային հայեացքին մէջ կը նկատուէր ոչ թէ ամօթխածութիւն, այլ երկիւղ:

4. Ստորոգիչը եզակի կը դրուի, երբ հետեւեալ դերանունները՝ *իւրաքանչիւրը, ամէն մէկը, ամէնը, ոչ մէկը, ոչ ոք, ոչինչ*, ենթակայի պաշտօնով կը ներկայանան: Օրինակ՝

Իւրաքանչիւրը իր պարտականութիւնը պիտի կատարէ:

Ոչ ոք իմացաւ:

5. Յոգնակի կամ բազմակի ենթականերուն հետ ստորոգելին՝

ա. Եզակի թիւով կը դրուի, երբ գնահատող իմաստ ունի կամ վերացական անուն է:

Օրինակ՝

Դուք, սիրելի՛ դպրոցականներ, մեր յոյսն էք, մեր ապագան:

Այս ձախողութիւնները ծուլութեան հետեւանք են:

բ. Եզակի թիւով կը դրուի, երբ չափի միաւոր է եւ ունի թուական որոշիչ մը:

Օրինակ՝

Աղը, շաքարը եւ ալիւրը միասին հինգ քիլոկրամ են:

Մեր սենեակները յիսուն քառակուսի մէթր են:

գ. Յոգնակի թիւով կը դրուի, երբ որոշեալ առումով է եւ սովորաբար ունի որոշիչ մը, կամ կը վերաբերի ենթականերէն իւրաքանչիւրին առանձին-առանձին:

Օրինակ՝

Արան եւ Յակոբը եղբօրս աշակերտներն են:

Աշոտը եւ Մահակը լաւագոյն տղաքն են:

Վարդը, մեխակը, Յասմիկը բուրաւէտ ծաղիկներ են:

Վարժություն

Ա. Փակագծեալ բայերը դարձո՛ւր դիմաւոր եւ իբրեւ ստորոգիչ՝ թիւով համաձայնեցո՛ւր ենթակային կամ բազմակի ենթականերուն հետ:

1. Արամը, Աշոտը եւ եղբայրս երբեմն իրարու հակառակ կարծիքներ կը (յայտնել):
2. Պարոնեանի «Քաղաքավարութեան վնասները» կը (կարդացուիլ) մեծ հետաքրքրութեամբ:
3. Ամէնքը ժպտելով կը (նայիլ) ուսուցիչին:
4. Ոչ ոք տուն պիտի (վերադառնայ):
5. Դպրոցին մէջ արդէն կարգ ու կանոն (կամ):
6. Պիտի (պատժուիլ) թէ՛ եղբայրներս, թէ՛ Արամը:
7. Փոքրիկներուն մէջ եռանդ ու կրակ շատ (կամ):
8. Պատերազմի ընթացքին 200 մարդ (սպաննուիլ):

Ենթակային եւ ստորոգիչին՝ դէմքով համաձայնութիւնը

1. Ստորոգիչը առաջին դէմքով կը դրուի, երբ ենթական արտայայտուած է առաջին դէմքի անձնական դերանունով կամ ունի Ա. դէմքի դիմորոշ յօդ: Օրինակ՝

Ես տուն վերադարձայ:

Մենք ինքներս տուն վերադարձանք:

Ստորագրողս ձեր նկատողութեան կը յանձնեմ հետեւեալ խնդիրը:

2. Ստորոգիչը երկրորդ դէմքով կը դրուի, երբ ենթական արտայայտուած է երկրորդ դէմքով կամ ունի Բ. դէմքի դիմորոշող յօդ: Օրինակ՝

Դուն տուն վերադարձար:

Դուք ինքներդ տուն վերադարձաք:

Երիտասարդներդ դեռ փորձառութեան պէտք ունիք:

3. Ստորոգիչը երրորդ դէմքով կը դրուի, երբ ենթական արտայայտուած է երրորդ դէմքի դերանունով, գոյականով ու գոյականաբար

գործածուած բառերով, որոնք չունին առաջին կամ երկրորդ դէմքերու դիմորոշող յօդ: Օրինակ՝

Ան տուն վերադարձաւ:

Անոնք տուն վերադարձան:

Մովսէս Խորենացին ապրած է հինգերորդ դարուն:

4. Տարբեր դէմքերով բազմակի ենթականեր ունեցող ստորոգիչը դէմքով կը համաձայնի միայն մէկուն հետ:

Եթէ բազմակի ենթականերէն մէկը արտայայտուած է առաջին դէմքով, ստորոգիչը կը դրուի առաջին դէմքով, եթէ ենթակաները արտայայտուած են միայն երկրորդ, երրորդ դէմքերով, ստորոգիչը կը դրուի երկրորդ դէմքով: Օրինակ՝

Դուն, Արամը եւ ես հիւրերը պիտի դիմաւորենք:

Դուն եւ Արամը հիւրերը պիտի դիմաւորէք:

Թէ՛ մենք, թէ՛ դուք հիւրերը պիտի դիմաւորենք:

Վարժութիւն

Փակագծեալ բայերը դարձո՛ւր դիմաւոր եւ իբրեւ ստորոգիչ՝ թիւով ու դէմքով համաձայնեցո՛ւր ենթակային կամ բազմակի ենթականերուն հետ:

1. Իւրաքանչիւրը մէկ գիրք (բերել):
2. Ոչ մէկս յանցաւոր (եմ, ըլլալ):
3. Փորձառուներդ միշտ ալ համարձակ (եմ, ըլլալ):
4. Ո՞վքեր տուն պիտի (վերադառնալ):
5. Չորսդ բեմ պիտի (բարձրանալ) եւ պիտի (ասմունքել):
6. Ամէնքս պիտի (փորձել) օգտակար դառնալ խեղճերուն:
7. Դուն եւ ինքը կանուխ պիտի (վերադառնալ):
8. Մենք եւ դուք միասին պիտի (ճամբորդել):
9. Մեզմէ իւրաքանչիւրը տարօրինակ հոգ մը (ունիմ):
10. Երկչոտներդ միշտ կը (բողոքել):

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՊՈՍՊԷՆՍ ԵՒ ՏԻԳՐԱՆ՝ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Պոմպեոս երբ Հայաստան եկաւ, տեսաւ, որ շատ լեռնային երկիր է, եւ դժուար է տիրելը: Տիգրան ալ այդ ժամանակ, ուրախ տարեկան ըլլալով, ծերացած էր, ոյժ չունէր կռուելու: Մանաւանդ որ Տիգրանի որդին՝ **Տիգրանիկ**, մատնութիւն ընելով, թշնամիներու կողմը անցած էր:

Տիգրան եւ Պոմպեոս իրարու մարդ դրկեցին եւ հաշտութիւն ըրին. յետոյ իրարու քով գալով՝ մեծ հանդէս ու ճաշկերոյթ ըրին: Երկուքը որոշեցին, որ հայերը միշտ բարեկամ մնան հռոմայեցիներուն, եւ միասին պատերազմին օտար թշնամիներու դէմ: Յետոյ, երբ հայերը նոր թագաւոր ընտրեն, հռոմայեցիները զինքը սիրով ընդունին ու ճանչնան:

Մատնիչ Տիգրանիկը գոհ չեղաւ այս բարեկամութենէն, վասնզի կը կարծէր, թէ մատնութեամբ ինքը պիտի թագաւորէր հօրը տեղը. սկսաւ խռովութիւններ հանել: Պոմպեոս զինքը շղթայի զարկաւ եւ հետը Հռոմ քաղաքը տարաւ: Բայց հոն ալ չարութիւն ըրաւ, ու զինքը սպաննեցին:

Պոնտոսի Միհրդատ թագաւորը, տեսնելով, որ յաղթուած է, եւ հռոմայեցիները ետեւէն ինկած են՝ զինքը փնտռելու եւ սպաննելու, փախաւ Կովկաս. քիչ մը ժամանակ մնալէ վերջ, տեսնելով, որ հոն ալ ապահով չէ իր կեանքը, եւ չուզելով թշնամիներուն ձեռքն իյնալ, հրամայեց իր հաւատարիմ գերիներէն մէկուն, որ սուրով զինքը սպաննէ. այսպէս մեռաւ Միհրդատ:

ԲԱՌԵՐ

Մատնութիւն – դաւադրաբար մատնանշում՝ ձերբակալելու կամ սպաննելու համար:

Խռովութիւն – հոս՝ անհնազանդութիւն, ընդվզում, ապստամբութիւն:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր ենթակա – ստորոգիչ կապակցութիւնները եւ որոշէ՛ անոնց համաձայնութեան բնոյթը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ՝ հայթայթէ Պոմպեոսի եւ Միհրդատի վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 23.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԿԱՍ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

– *Գիրք մը կորսուած է:*

Դասարան մտնելով՝ ուսուցչուհին այս նախադասութիւնը կ'ըսէ: Ուսուցչուհիին գործածած նախադասութիւնը կազմուած է նախադասութեան գլխաւոր անդամներէն՝ ենթակայէն (*գիրք մը*) եւ ստորոգիչէն (*կորսուած է*): Աշակերտները, անշուշտ, պիտի ուզեն գիտնալ, թէ որո՞ւ գիրքը կորսուած է, ե՞րբ կորսուած է, ո՞ր կորսուած է եւ այլն:

Ուսուցչուհին, միտքը պարզաբանելով, կ'ըսէ.

– *Արշակին գիրքը կորսուած է բակը:*

Այս նախադասութեան մէջ գլխաւոր անդամները լրացնող *Արշակին* եւ *բակը* լրացումները նախադասութեան երկրորդական անդամներ են:

Երբեմն նախադասութեան երկրորդական անդամներն ալ պարզաբանութեան կը կարօտին:

Օրինակ՝ ուսուցչուհին, միտքը աւելի պարզաբանելով, կ'ըսէ, թէ ո՞ր Արշակին գիրքը կորսուած է եւ ո՞ր բակին մէջ կորսուած է: Այսպէս՝ *Աշխատասէր Արշակին գիրքը կորսուած է ընդարձակ բակը:*

Աշխատասէր բառը կը լրացնէ *Արշակին* լրացումը, իսկ *ընդարձակ* բառը՝ *բակը* լրացումը: Այս բառերը նոյնպէս նախադասութեան երկրորդական անդամներ են:

Բացի ենթակայէն եւ ստորոգիչէն՝ նախադասութեան միւս անդամները կը կոչուին լրացում կամ երկրորդական անդամներ:

Նախադասութեան երկրորդական անդամները կը պատասխանեն **ո՞ր, ինչպիսի՞, որո՞ւ, քանի՞, ո՞ր, ե՞րբ** եւ այլ հարցումներու:

Լրացումները կ'ըլլան երկու տեսակ՝ գոյականական անդամի եւ բայական անդամի:

Վարժություն

Բ. Ամբողջացո՛ւր ենթականերով:

1. (Ո՞վ) ճամբորդութենէն վերադարձաւ:
2. (Ի՞նչ) կը տիրէր սրահին մէջ:
3. (Ո՞վ) մէր կը պատրաստէ:
4. (Որո՞նք) իրենց լաւ նիշերով կուրախացնեն իրենց ծնողքը:
5. (Ո՞վ) կը պաշտպանէ իր կորիւնները:
6. Փիղին (ի՞նչը) շատ արժէքաւոր է:
7. Դասարանին պատուհանին (ի՞նչը) կոտրած է:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Աշակերտը կը գծէ տուն մը:

Հոս *աշակերտը* ենթական եւ *տուն մը* լրացումը արտայայտուած են գոյականներով: Անոնք այս նախադասութեան գոյականական անդամներն են:

Նախադասութեան այն անդամը, որ գոյականով արտայայտուած է, կը կոչուի գոյականական անդամ:

Ուշիմ աշակերտը կը գծէ գեղեցիկ տուն մը:

Ուշիմ եւ *գեղեցիկ* բառերը կը լրացնեն *աշակերտը* եւ *տուն մը* գոյականական անդամները:

Գոյականով արտայայտուած անդամի մը լրացումը կը կոչուի գոյականական անդամի լրացում:

Գոյականական անդամի լրացումները կըլլան երեք տեսակ՝ որոշիչ, յատկացուցիչ եւ բացայայտիչ:

Ա. Որոշիչ

Անին կարմիր ծաղիկ շատ կը սիրէ:

Ինչպիսի՞ ծաղիկ

Կարմիր լրացումը ցոյց կու տայ, կորոշէ, թէ ինչպիսի՞ ծաղիկ կը սիրէ Անին:

Կարմիր լրացումը *ծաղիկ* գոյականական անդամին որոշիչն է:

Գոյականական անդամին որպիսութիւնը, որակը, չափը, քանակը ցոյց տուող լրացումը կը կոչուի որոշիչ:

Դերձակ Արամը մեր դրացին է:

Ո՞ր Արամը

Դերձակ որոշիչ է *Արամը* գոյականական անդամին:

Յասմիկը երկու եղբայր ունի:

Քանի՞ եղբայր

Երկու որոշիչ է *եղբայր* գոյականական անդամին:

Որոշիչը կը պատասխանէ **ինչպիսի՞, ո՞ր, ո՞րքան, քանի՞** հարցումներուն:

Նախադասութեան այն անդամը, որ որոշիչ ունի, կը կոչուի որոշեալ:

Վերը նշուած *ծաղիկ, Արամը, եղբայր* բառերը որոշեալ են:

Երբ որոշեալը որոշիչ յօդ ունի, որոշիչին **ո՞ր** հարցումը կուղղենք, իսկ երբ որոշեալը յօդ չունի՝ **ինչպիսի՞** հարցումը: Օրինակ՝

Ծովու ձուկ շատ կը սիրեմ: (ինչպիսի՞ ձուկ)

Աշխատասէր աշակերտը կը սիրուի (ո՞ր աշակերտը):

Հայերէնի մէջ, իբրեւ կանոն, որոշիչը կը դրուի որոշեալէն առաջ (սովորական շարադասութիւն): Սակայն յաճախ, յատկապէս գեղարուեստական խօսքին մէջ, որոշիչը կը դրուի որոշեալէն ետք եւ կը կոչուի յետադաս որոշիչ (շրջուն շարադասութիւն): Օրինակ՝

Մերմանո ղն է: Յաղթահասակ կը կանգնի

*Մայրամուտի շողերուն մէջ **նսկեթոյր**: (ինչպիսի՞ շողերուն մէջ՝
նսկեթոյր)*

Յետադաս որոշիչը, եթէ մէկէ աւելի բառով արտայայտուած է, որոշեալէն կը բաժնուի բութով, իսկ նախադասութեան միւս անդամներէն՝ ստորակէտով: Օրինակ՝

*Չորս փոքր որբուկները՝ **մերկ ու բոպիկ**, փողոցներն ինկան:* (ո՞ր որբուկները՝ մերկ, բոպիկ)

Վարժութիւն

Ա. Գրէ՛ հարցումին պատասխանող որոշիչ լրացում մը:

Ապրիլեան (ինչպիսի՞) առաւօտ է: Փողոցները լեցուած են (ո՞րքան) մարդոցմով: (Ինչպիսի՞) բազմութիւն մը կուղղուի Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք մատուցելու համար (քանի՞) միլիոն հայ նահատակներուն: Ծիծեռնակաբերդի ջահին շուրջը լեցուած է (ինչպիսի՞) եւ (ինչպիսի՞) ծաղիկներով:

Գ. Ըստ պատշաճութեան՝ ձախ սինակին բառերը միացո՛ւր գոյականներուն:

նշաձեւ	մատ
տասը	աչք
երկար	քիթ
կոր	լեզու
ընդարձակ	շէնք
նորակառոյց	սրահ
կուպրապատ	պողոտայ
խոտաւէտ	պարտեզ

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐՏԱԻԱԶԴ ԵՐՐՈՐԴ

Քրիստոսէ յիսունհինգ տարի առաջ մեռաւ Մեծն Տիգրան: Հայերը շատ լացին իր վրայ, որովհետեւ մեր ամենէն քաջ եւ անուանի թագաւորն էր: Իր տեղ թագաւորեց իր որդին՝ **Արտաւազդ Երրորդ**: Արտաւազդ

բարի, ազնիւ եւ գիտուն մարդ էր: Իր ժամանակ պատերազմի բռնուեցան հռոմայեցիները եւ պարթեւները: Արտաւազդ ուզեց օգնել հռոմայեցիներուն, բայց անոնց **Կրասսու** զօրավարը զինքը շատ նախատեց, անոր համար պարթեւներուն կողմը անցաւ: Այս բարեկամութիւնը հաստատելու համար Արտաւազդ եւ պարթեւներուն **Որոնդ** թագաւորը Արտաշատ մայրաքաղաքին մէջ մեծ հանդէսներ ըրին:

Կրասսու յաղթուեցաւ պարթեւներէն Սիրիոյ դաշտերուն մէջ: Տեղը եկաւ **Անտոնիոս** անունով հռոմայեցի նոր զօրավար մը: Ասիկա ալ յաղթուեցաւ պարթեւներէն: Իր պարտութիւնը պարտկելու համար սիրալիք նամակներով իր քով հրաւիրեց Արտաւազդը, իբր թէ հաստատելու համար հին բարեկամութիւնը: Արտաւազդ խաբուեցաւ եւ իր կնոջ ու զաւակներուն հետ գնաց: Անտոնիոս, զինքը ոսկի շղթայի զարնելով, տարաւ Եգիպտոս, ուր կը գտնուէր իր կինը՝ Եգիպտոսի թագուհին՝ Կղեոպատրա, եւ հրամայեց Արտաւազդին երկրպագութիւն ընել անոր, բայց Արտաւազդ ըսաւ.

— Ես Հայաստանի թագաւոր եմ. այս չար կնոջ երկրպագութիւն չեմ ըներ:

Անտոնիոս շատ բարկացաւ եւ հրամայեց, որ Արտաւազդը մահուան դատապարտեն:

ԲԱՌԵՐ

Նախատել – 1. կշտամբել, յանդիմանել, 2. գէշ խօսքերով վիրաւորել, անարգել:

Պարտկել – թաքցնել, գաղտնի պահել, ծածկել, սքողել:

Երկրպագութիւն – խոնարհում, յարգանք մատուցելը:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր որոշիչ - որոշեալ կապակցութիւնները եւ ըսէ՛, թէ ինչով են արտահայտուած որոշիչները:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ՝ հայթայթէ Արտաւազդ Երրորդի եւ Անտոնիոսի վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 24.

Բ. Յատկացուցիչ

Արշակին տետրակը օրինակելի է:

Որո՞ւ տետրակը

Արշակին լրացումը ցոյց կու տայ, թէ որո՞ւ կը պատկանի, որո՞ւ յատկացուած է տետրակը:

Արշակին լրացումը տետրակը գոյականական անդամին յատկացուցիչն է:

Գոյականական անդամի այն լրացումը, որ ցոյց կու տայ պատկանելութիւն, յատկացում, վերաբերութիւն, ծագում կամ սերում, կը կոչուի յատկացուցիչ:

Ինքնաշարժին անհւր պայթած է:

Ի՞նչ բանի անհւր

Ինքնաշարժին լրացումը յատկացուցիչ է անհւր գոյականական անդամին:

Պարտէզին դուռը փակ է:

Ի՞նչ բանի դուռը

Պարտէզին լրացումը յատկացուցիչ է դուռը գոյականական անդամին:

Յատկացուցիչը կը դրուի միայն սեռական հոլովով եւ կը պատասխանէ որո՞ւ, ինչի՞, ի՞նչ բանի հարցումներուն:

Նախադասութեան այն անդամը, որ յատկացուցիչ ունի, կը կոչուի յատկացեալ:

Սովորաբար յատկացուցիչները որոշիչ յօդ կը ստանան:

Յատկացուցիչը սովորաբար կը դրուի յատկացեալէն առաջ: Սակայն գեղարուեստական երկերու, մանաւանդ բանաստեղծութիւններու մէջ յատկացուցիչը կրնայ յետադաս գործածուիլ: Օրինակ՝

*Ու երբ թիւովը մատներուդ
Սերմանես քու սերմընցուն՝
Հընձես թիւովն աստղերու:*

Յատկացուցիչը իր յատկացեալէն կը տրոհուի բութով միայն այն պարագային, եթէ յատկացուցիչին եւ յատկացեալին միջեւ իյնան բառեր կամ բառակապակցութիւններ, որոնք իմաստային շփոթ կը յառաջացնեն: Օրինակ՝

Մետրոպ Մաշտոցի՝ Օշական գիւղը գտնուող համեստ շիրիմը հայ ժողովուրդի սրբութիւն սրբոցն է:

Վարժութիւն

Ա. Մէկական յարմար յատկացուցիչ գրէ՝ հետեւեալ յատկացեալներուն:

1. (Ինչի՞ն) Ձիուն վրնջիւնը կը լսուի:
2. (Ինչի՞ն) մլաւիւնը նեղացուցիչ է:
3. (Ինչի՞ն) ոռնոցը լսուեցաւ ամբողջ գիշերը:
4. (Ինչի՞ն) մոնջիւնը վախցուց եղնիկները:
5. (Ի՞նչ բանի) ճիւղերը մերկացեր են:
6. (Ի՞նչ բաներու) եզերքները ծառերով զարդարուած են:
7. (Ի՞նչ բանի) ջուրը պաղ է:
8. (Ի՞նչ բանի) օդը մաքուր է:

Բ. Հետեւեալ բառերը յատկացուցիչ-յատկացեալ կապակցութեան վերածէ՛.

ագոս կոինչ	ագոսին կոինչը
մարդ գեղեցկութիւն	
աղջիկ հրապոյր	
կին երջանկութիւն	
պալատ շքեղութիւն	
Յիսուս հրաշքներ	
մանուկ ուրախութիւն	
շուն հաւատարմութիւն	
աշակերտ ուշիմութիւն	

Գ. Բացայայտիչ

Ընկերս՝ Աշոտը, շատ յոգնած է:
Ընկերս, ո՞վ

Աշոտը լրացումը կը բացատրե, կը բացայայտե, թե ո՛վ է ընկերս. այլ ձեւով մը կը կրկնէ ընկերս անդամը: Աշոտը եւ ընկերս նոյն անձը ցոյց կու տան:

Աշոտը լրացումը ընկերս գոյականական անդամին բացայայտիչն է:

Քոյականական անդամին ո՛վ կամ ի՛նչ ըլլալը ցոյց տուող լրացումը կը կոչուի բացայայտիչ:

Այլ խօսքով բացայայտիչը բացայայտեալին կրկնութիւնն է տարբեր բառերով:

Ես հանդիպեցայ ընկերոջս՝ Արամին:

Ընկերոջս՝ որո՞ւ

Արամին բացայայտիչ է ընկերոջս գոյականական անդամին:

Երբ մեծնամ, պիտի կարդամ Կորիւնին գրած գիրքը՝ «Վարք Մաշտոցի»-ն:

Գիրքը՝ ի՞նչ

«Վարք Մաշտոցի»-ն բացայայտիչ է գիրքը գոյականական անդամին:

Բացայայտիչը կը պատասխանէ ո՞վ, որո՞նք, որո՞ւ, որո՞նց եւ այլ հարցումներու:

Նախադասութեան այն անդամը, որ բացայայտիչ ունի, կը կոչուի բացայայտեալ:

Վերը նշուած ընկերս, ընկերոջս, գիրքը բացայայտեալ են:

Արան՝ իմ սիրելի եղբայրս, ատաղձագործ է:

Եղբայրս բացայայտիչ է:

Բացայայտիչը կը դրուի գոյականական անդամէն (բացայայտեալէն) ետք, կը համաձայնի բացայայտեալին հետ, այսինքն՝ կ'ունենայ անոր հոլովը, թիւը (երբեմն նաեւ դէմքը, առումը) եւ կը պատասխանէ անոր ուղղուած նոյն հարցումին:

Օրինակ՝ Ո՞վ ատաղձագործ է: Արան

ենթակալ

Արան՝ (Ո՞վ): Եղբայրս

բացայայտիչ

Բացայայտիչը կրնայ ըլլալ բազմակի:

Օրինակ՝ Այսօր հանդիպեցայ զարմիկներս՝ Գոռը եւ Հայկը:

Այս տեսակ բացայայտիչները կը կոչուին բուն բացայայտիչ: Կան նաեւ բացայայտիչի այլ տեսակներ՝ մասնական բացայայտիչ, մասնաւորող պարագայեական բացայայտիչ:

Վարժութիւն

Ընդգծէ՛ բացայայտիչը մէկ գիծով եւ բացայայտեալը երկու գիծով:

1. Շատ գեղեցիկ է Երեւանը՝ Հայաստանի մայրաքաղաքը:
2. Գեղամայ լեռներու գիրկը կը ծփայ Սեւանը՝ լեռնային լիճերու թագուհին:
3. Նոր տարուան առիթով ապարանջան մը նուիրեցի քրոջս՝ Յասմիկին:
4. Ես կը հպարտանամ իմ եղբորմովս՝ նկարիչ Աշոտով:
5. Ծնողքս դժգոհ էր իմ ընկերներէս՝ Աշոտէն եւ Յակոբէն:
6. Մայրենի լեզուն՝ ազգին պահպանութեան այդ կարեւոր միջոցը, պէտք է սիրել եւ լաւ գիտնալ:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ԱՐՏԱՇԷՍ ԵՐԿՐՈՐԴ

Երբ Արտաւազդ սպաննուեցաւ, իր որդիներէն մէկը, որ **Արտաշէս** կը կոչուէր, Հայաստան կը գտնուէր: Երբ լսեց, թէ իր հայրը խարդախութեամբ սպաննուեց էն, շատ բարկացաւ եւ, որչափ հռոմայեցի զինուոր գտաւ Հայաստանի մէջ ու դուրսը, վրէժի համար ամենքն ալ սուրէ անցուց: Յետոյ Արտաշէս շատ բարեկամ եղաւ պարթեւներուն, որոնք Հռոմի թշնամի էին:

Հռոմայեցիները ուզեցին սպաննել Արտաշէսը, բայց դժուար էր անոր դէմ պատերազմիլ. ուստի մարդասպան մը գտան, անոր շատ ոսկի տւին ըսելով.

— Գնա՛, սպաննէ՛ Արտաշէսը, որ մեզի այնքան թշնամի է:

Այդ չար մարդը յանկարծակիի բերելով սպաննեց Արտաշէսը:

Հայերը սաստիկ տխրեցան եւ հակառակ հռոմայեցիներու փափաքին՝ թագաւոր դրին Տիգրան Չորրորդը: Ասիկա շատ սիրելի թա-

գաւոր եղաւ: Տասնութը տարի վերջ հռոմայեցիները ուզեցին Տիգրանը քշել Հայաստանէն եւ ուրիշ մէկը թագաւոր դնել: Անոնք Հայաստանի դէմ պատերազմի եկան: Իրենց զօրավարն էր **Գայոս** անունով մէկը, որ Հռոմի կայսրին որդին էր: Խարբերդ քաղաքին մօտերը կար **Արտազէրս** կոչուած անառիկ բերդ մը, որ ժայռերու վրայ շինուած էր. ասոր մօտ եղաւ պատերազմը, եւ հայ իշխան մը՝ **Ատոմ**, քաշեց իր աղեղը ու սպաննեց Հռոմի կայսրին որդին՝ վրէժ առնելով Արտաշէս Երկրորդին մահուան:

Երբոր Տիգրան Չորրորդ հայոց թագաւորը մեռաւ, մանչ գաւակ չունէր, եւ հայերը մնացին առանց թագաւորի: Հռոմայեցիները կ'ուզէին իրենց կողմնակից մէկը դնել, պարթեւներն ալ կ'ուզէին իրենց կողմնակից թագաւոր մը դնել: Վարթուն տարի շարունակ պատերազմ եղաւ այս երկու ազգերուն միջեւ Հայաստանի հողին վրայ, եւ մեր երկիրը շատ աղքատացաւ:

ԲԱՌԵՐ

Փափաք – մեծ ցանկութիւն, իդձ:

Կայսր – թագաւոր, միապետ:

Անառիկ – դժուար առնուող, անմատչելի, ամուր, աննուաճ:

Կողմնակից – բարեկամ, համախոհ, գաղափարակից:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր յատկացուցիչ - յատկացեալ կապակցութիւնները եւ ըսէ՛, թէ ինչով են արտահայտուած յատկացուցիչները:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննե՛ր հայթայթէ Արտաշէս Երկրորդ եւ Տիգրան Չորրորդ թագաւորներուն վերաբերեալ եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 25.

Մասնական բացայայտիչ

Մասնական բացայայտիչը բացայայտեալին կը կապուի *իբրեւ (որպէս)* բառով եւ բացայայտեալին իմաստը իր մէջ կառնէ սահմանափակ ձեւով, ոչ ամբողջութեամբ: Օրինակ՝

Յակոբը՝ իբրեւ դասարանի պատասխանատու, ինքզինք արդարացուց:

Այս նախադասութեան մէջ արդարացնելու յատկանիշը Յակոբին կը վերագրուի մասնական իմաստով, այսինքն՝ *իբրեւ դասարանի պատասխանատու* մասնական բացայայտիչը կը բացայայտէ *Յակոբը* որոշ տեսակէտով մը, մասնական կերպով, միայն իբրեւ դասարանի պատասխանատու:

Այն բացայայտիչը, որ ցոյց կու տայ բացայայտեալին միայն մէկ կողմը, մէկ յատկանիշը եւ բացայայտեալին կը կապուի իբրեւ, որպէս բառերով, կը կոչուի մասնական բացայայտիչ:

Ի տարբերութիւն բուն բացայայտիչի՝ մասնական բացայայտիչը բացայայտեալին նկատմամբ կրնայ ըլլալ թէ՛ նախադաս, թէ՛ յետադաս: Օրինակ՝

Իբրեւ տիպար աշակերտ՝ Աշոտը պարզեւատրուեցաւ: (նախադաս բացայայտիչ)

Աշոտը՝ իբրեւ տիպար աշակերտ, պարզեւատրուեցաւ: (յետադաս բացայայտիչ)

Մասնական բացայայտիչը բուն բացայայտիչէն կը տարբերի նաեւ անով, որ սովորաբար յօդ չառնէր, այսինքն՝ դէմքով չի համաձայնիր իր բացայայտեալին հետ: Օրինակ՝

Արամը՝ իբրեւ դասարանի լաւագոյն աշակերտ, պարզեւատրուեցաւ:

Ծանոթութիւն:

Մասնական բացայայտիչը, որոշիչ յօդ կը ստանայ, երբ ունի սեռական հոլովով դրուած լրացում: Օրինակ՝

Արամը՝ իբրեւ հօրեղբորս մտերիմ ընկերը, ծառայասէր անձ է:

Վարժութիւն

Մէկ գիծով ընդգծէ՝ մասնական բացայայտիչը, երկու գիծով՝ անոր բացայայտեալը:

1. Յակոբ Օշականի վաստակը՝ իբրեւ մնայուն արժէք, մեծագոյնն է ամբողջ գրականութեան մէջ:
2. Իբրեւ ազնիւ մարդ՝ Միքայէլը սիրուած է ամէնքէն:
3. Ես դիմեցի Արամին՝ որպէս խմբապետի:
4. Վահանը՝ իբրեւ ընդհանուր հրամանատար, դարձեր է Փանջունի մը:
5. Բացատրութիւն կը պահանջէին եղբորմէս՝ իբրեւ տնօրէն:
6. Եղբայրս՝ իբրեւ այդ ընկերութեան ներկայացուցիչը, հաշիւ պիտի տար անոնց:
7. Գեղամով՝ որպէս հաւատարիմ ընկերոջմով, կը հպարտանանք ամէնուրեք:
8. Արմէնը եւ Սահակը՝ որպէս լաւ բանուորներ, առատօրէն վարձատրուեցան:

Մասնաւորող պարագայական բացայայտիչ

Մասնաւորող պարագայական բացայայտիչը կը ճշգրտէ, կը մասնաւորէ բացայայտեալին իմաստը, մանաւանդ երբ բացայայտեալը տեղ կամ ժամանակ ցոյց կու տայ:

Սայլ մը կեցաւ դրան առջեւ՝ հորին քով:

Ստալինեան հալածանքի շրջանին՝ 1937ին, զոհ գացին հազարաւոր մտաւորականներ:

Առաջին նախադասութեան մէջ *դրան առջեւ* անդամը տեղի պարագայ է, իսկ *հորին քով* անդամը՝ մասնաւորող պարագայական բացայայտիչ *դրան առջեւ* բացայայտեալին, որովհետեւ *հորին քով* անդամը կը ճշգրտէ, թէ ո՛ր կեցած է սայլը:

Երկրորդ նախադասութեան մէջ *Ստալինեան հալածանքի շրջանին* անդամը ժամանակի պարագայ է, իսկ *1937ին* կապակցութիւնը կը ճշգրտէ, թէ ե՛րբ եղած է հալածանքը:

Մասնական բացայայտիչ ունենալու համար պէտք է ունենալ տեղի պարագայ կամ ժամանակի պարագայ, որպէսզի մասնաւորող պարագայական բացայայտիչը ճշգրտէ անոնց տեղը կամ ժամանակը: Այսպէս՝

Ռաֆայէլ Պատկանեան կը թաղուի իր ծննդավայրին մէջ:
Ընդգծուածը տեղի պարագայ է:

Ռաֆայէլ Պատկանեան կը թաղուի իր ծննդավայրին մէջ՝ Ս. Խաչ վանքին բակը:
Ընդգծուածը մասնաւորող պարագայական բացայայտիչ է:

Վարժութիւն

Ա. Մէկ գիծով ընդգծէ՝ մասնաւորող պարագայական բացայայտիչները, երկու գիծով՝ անոնց բացայայտեալները:

1. Փողոցին մեծ դրան կից՝ բակին ծայրը, կար միշտ գոց դուռ մը:
2. Պարտէզը՝ ծառին քով, հաւաքուած էին գիւղացիները:
3. ԺՁ. դարուն՝ 1512-ին, սկիզբ կ'առնէ հայկական տպագրութիւնը Յակոբ Մեղապարտի ջանքերով:
4. Մեր տան բակը՝ ջրհորին քով, եղբայրս կը կռուէր դրացիին տղուն հետ:
5. Աշնան՝ սեպտեմբերին կամ հոկտեմբերին, պտուղները կը հասունանան:
6. Վաղը՝ ժամը 7-ին, տեղի պիտի ունենայ վկայականաց բաշխումը:

Բ. Ընդգծե՛լ իւրաքանչիւր նախադասութեան բացայայտիչը եւ նշե՛ անոր տեսակը:

1. Բաֆֆի՝ իբրեւ մեծ գաղափարախօս, գալիք յեղափոխութեան պատկերը գծեց:
2. Դասարանին գեղեցկագոյն աղջիկը՝ Արշալոյսը, շուշանի պէս ձեռքեր ունի:
3. Յակոբէն՝ իբրեւ պատասխանատուէ, դժգոհ են պաշտօնեաները:
4. Վաղը՝ կէսօրէ ետք՝ ժամը հինգին, ժողով ունինք:
5. Հայերս շատ կը սիրենք Հայաստանի մայրաքաղաքը՝ Երեւանը:
6. Պետրոս Դուրեանի՝ Սկիւտարի սոխակին բանաստեղծութիւնները շատ յուզիչ են:
7. Մեծ աղջիկը՝ Լուսինէն, սուրճ հրամցուց հիւրերուն:
8. Այնտեղ՝ ծառին տակ, նստած էին աշակերտները:

Բացայայտիչներուն կէտադրութիւնը

Բացայայտիչը տրոհուող լրացում է եւ ունի իւրայատուկ կէտադրութիւն:

Բացայայտիչը բացայայտեալէն կը բաժնուի բութով, իսկ յաջորդ անդամէն՝ սովորաբար ստորակէտով: Օրինակ՝

Մորթագերծ եղած Վասակի որդին՝ Մուշեղ, կը կազմակերպէ Հայաստանի դիմադրութիւնը:

Ամառը՝ Յուլիսին եւ Օգոստոսին, աշակերտները ծովափ պիտի երթան:

Արամը՝ իբրեւ աշխատասէր աշակերտ, պարզեւատրուեցաւ:

Բացայայտիչէն ետք ստորակէտ չի դրուիր՝

Ա. Երբ բացայայտիչը դրուած է սեռական հոլովով, եւ բացայայտեալը կը կատարէ ուրիշ անդամի մը յատկացուցիչի պաշտօնը: Օրինակ՝

*Արամին՝ **էղբօրս** գիրքը կորսուեցաւ:*

Այս նախադասութեան մէջ թաւ նշուած բառը (*եղբօրս*) սեռական հոլովով արտայայտուած բացայայտիչ է, իսկ անոր բացայայտեալը (*Արամին*) կը կատարէ *գիրքը* անդամին յատկացուցիչի պաշտօնը:

Ծանօթութիւն:

Երբ սեռական հոլովով արտայայտուած բացայայտիչին կը յաջորդէ նոյն հոլովով (սեռականով) արտայայտուած ուրիշ բառ մը, գոր կարելի է շփոթել բացայայտիչին հետ, ապա այդ թիրիմացութիւնը կանխելու համար բացայայտիչէն ետք ստորակէտ կը դրուի: Օրինակ՝

Մահակին՝ ընկերոջս, եղբօր աշխատասիրութիւնը հիացուցած է ամէնքը:

Այս նախադասութեան մէջ բացայայտիչն է *ընկերոջս* բառը, իսկ առանց ստորակէտի՝ բացայայտիչը կըլլայ *եղբօր* բառը:

Բ. Երբ բացայայտիչին կը յաջորդէ նաեւ բացայայտեալին վերաբերող կապ: Օրինակ՝

Յասմիկին՝ քրոջս համար գիրք մը գնեցի:

Այս նախադասութեան մէջ *քրոջս* անդամը բացայայտիչ է, որուն յաջորդած է *համար* կապը, որ կը վերաբերի թէ՛ *քրոջս* բացայայտիչին, թէ՛ *Յասմիկին* բացայայտեալին: Այդ իսկ պատճառով բացայայտիչէն ետք ստորակէտ չէ դրուած:

Ծանօթութիւն:

Այս դէպքին հետ շփոթելու չէ այն պարագան, երբ կապը բացայայտիչին բաղադրիչն է եւ չի վերաբերիր բացայայտեալին: Օրինակ՝

Բացատին եզրը՝ աղբիւրին քով, քիչ մը հանգիստ առանք, ապա առաջ շարժուեցանք:

Այս նախադասութեան մէջ *քով* կապը բացայայտիչին մէկ մասն է եւ չի վերաբերիր *բացատին եզրը* բացայայտեալին: Այդ իսկ պատճառով կապէն ետք ստորակէտ դրուած է: Հոս բացայայտիչն է՝ *աղբիւրին քով:*

Գ. Երբ ստորոգիչին հանգոյցը կամ օժանդակ բայը կը դրուի բացայայտիչէն անմիջապէս ետք: Օրինակ՝

Եղբայրս՝ Յակոբն է դասախօսը:

Այս նախադասութեան մէջ *Յակոբն* անդամը բացայայտիչ է, որուն յաջորդած է ստորոգիչին հանգոյցը՝ *է* (ստորոգելին՝ *եղբայրս*): Այդ իսկ պատճառով բացայայտիչէն ետք ստորակէտ չէ դրուած:

Դ. Երբ բացայայտիչին անմիջապէս կը յաջորդէ **ալ** շաղկապը: Օրինակ՝

Ընկերս՝ Արամն ալ ներկայ էր ժողովին:

Այս նախադասութեան մէջ *Արամն* անդամը բացայայտիչ է, որուն յաջորդած է *ալ* շաղկապը:

Վարժութիւն

Ա. Բացայայտիչներուն կէտադրութիւնը յիշելով՝ կէտադրէ՝ հետեւեալ նախադասութիւններուն բացայայտեալ-բացայայտիչ կապակցութիւնները: Ընդօժէ՝ բացայայտիչները:

1. Ալիսին քրոջս համար գիրքեր գնած եմ:
2. Այսօր կէսօրէ ետք գիւղ պիտի երթամ:
3. Եղբօրս Արամին տղուն ինքնաշարժը նոր է:
4. Արշակին հօրեղբօրս տղուն ինքնաշարժը նոր է: (2 ձեւով)
5. Քոյրս Յասմիկն ալ մեզի հետ պիտի գայ:
6. Մտերիմ ընկերոջս իբրեւ կարիքաւոր անձի ես շատ օգնած եմ:
7. Այնտեղ ծառին ներքեւ նստած էին աշակերտները:
8. Մեր սիրելի դաստիարակը պարոն Լեւոնն է եկած:
9. Հօրեղբօրս տղան Մարգիսն է զեկուցողը:
10. Քեռիիս Մկրտիչին հետ տուն վերադարձայ:
11. Լուսնի կաթնագոյն լոյսին տակ ծովուն հանդարտ ջուրին վրայ մեղմիկ կը սահէր մակոյկը:
12. Այսօր կէսօրուան ժամը 12-ին պիտի հաւաքուինք մայրաքաղաքին հրապարակը:

Բ. Ամբողջացո՛ւր կէտադրութիւնը:

1. Վաչէն մեր խմբապետը խումբը կառաջնորդէր տողանցքի աստէն:
2. Կորիւնի նշանաւոր գործը «Վարք Մաշտոցի»-ն կը ներկայացնէ Մեսրոպ Մաշտոցի կեանքն ու գործունէութիւնը:
3. Գրիգոր Նարեկացի նշանաւոր է իր գեղեցիկ աղօթագիրքով «Նարեկ»-ով:
4. Հայաստանի մայրաքաղաքը Երեւանը անցեալին Էրեբունի կոչուած է:
5. Արտաշէսեան հարստութեան առաջին թագաւորը Արտաշէսը Սաթենիկ իշխանուհիին հետ պսակուեցաւ:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԻՈՐ

Հայաստան, վաթսուն տարի կռիւներու մէջ ըլլալով եւ անտերունչ մնալով, շատ խեղճութեան հասաւ: Վերջապէս թագաւորելու եկաւ Տրդատը, որ պարթեւներու **Վաղարշ** թագաւորին եղբայրն էր: Հռոմայեցիները, սակայն, չէին ուզեր, որ Տրդատ թագաւոր ըլլայ Հայաստանի, անոր համար պատերազմի ելան պարթեւներու եւ հայերու դէմ: Անոնց զօրավարն էր **Պետոս**՝ շատ վախկոտ եւ հպարտ մարդ մը: Արածանի գետին քով **Հրանդէա** կոչուած բերդ մը կար. հոն եղաւ ճակատամարտ: Հայերու եւ պարթեւներու ձիաւոր բանակը մեծ յաղթութիւն մը տարաւ: Հռոմայեցիները գրեթէ բոլորն ալ ջարդուեցան. իրենց Պետոս զօրավարն ալ գերի ինկաւ:

Այն աստէն հռոմայեցիները ուրիշ զօրավար մը դրկեցին նոր բանակով. ասիկա **Կորբուղոն** կը կոչուէր. վախցաւ հայերու եւ պարթեւներու դէմ պատերազմելու, ու խաղաղութիւն ըրին՝ պայման դնելով, որ Տրդատ Հայաստանի թագաւոր ըլլայ, բայց թագը Հռոմի կայսրին ձեռքէն առնէ:

Տրդատ, հետը առած երէք հազար զինուոր եւ շատ մը ազնուական իշխաններ, գնաց Հռոմ քաղաքը, ուր կը նստէր **Ներոն** կայսրը: Հռոմի մէջ Տրդատը պատուելու համար շատ մեծ հանդէսներ կատարեցին եւ անոր գլխուն վրայ դրին Հայաստանի թագը: Այդ օրը **Ոսկեղէն** օր կոչուեցաւ: Տրդատ թագաւոր եղաւ Քրիստոսէ վաթսունվեց տարի վերջ ու Հայաստան գալով՝ իմաստութեամբ կառավարեց ու մեռաւ:

ԲԱՌԵՐ

Անտերունչ – անտեր, անիշխան:

Ձիաւոր բանակ – հեծելազօր, այրուձի:

Ազնուական – բարձր դասակարգի անձ, տոմիկ, ազնուագարմ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մեջ գտի՛ր յատկացուցիչ - յատկացեալ կապակցութիւնները եւ ըսէ՛, թէ ինչով են արտահայտուած յատկացուցիչները:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննե՛ր հայթայթէ Տրդատ Առաջին թագաւորի մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 26.

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Մասնակցող աշակերտները կը սպասեն:

Հոս *մասնակցող* լրացումը եւ *կը սպասեն* ստորոգիչը արտայայտուած են բայերով: Անոնք այս նախադասութեան բայական անդամներն են:

Նախադասութեան այն անդամը, որ բայով արտայայտուած է, կը կոչուի բայական անդամ:

Վազքի մասնակցող աշակերտները կը սպասեն ազդանշանին:

Վազքի եւ *ազդանշանին* բառերը կը լրացնեն *մասնակցող* եւ *կը սպասեն* բայական անդամները:

Բայով արտայայտուած անդամի մը լրացումը կը կոչուի բայական անդամի լրացում:

Բայական անդամի լրացումները կըլլան երկու տեսակ՝ ինդիք եւ պարագայ:

Ինդիքներ

Արամը գրիչով նամակ կը գրէ Աշոտին:

1. Ի՞նչ կը գրէ Արամը:
2. Ան ինչո՞վ կը գրէ նամակը :
3. Գրիչով որո՞ւ կը գրէ նամակը:

Նամակ, գրիչով, Աշոտին անդամները միեւնոյն գործողութեան միտքը տարբեր կողմերէ լրացնող առարկաներ են: Ասոնք տարբեր ձեւերով կը մասնակցին գործողութեան կատարման, սերտ կապ ունին անոր (գործողութեան) հետ:

Գործողութեան կապուած առարկայ ցոյց տուող լրացումները կը կոչուին խնդիրներ:

Վերը նշուած օրինակներուն մէջ *նամակ, գրիչով, Աշոտին* լրացումները խնդիրներ են:

Խնդիրները կը պատասխանեն *ի՞նչ, որո՞ւ, որո՞նց, ինչի՞, ինչերո՞ւ, ի՞նչ քանի, որմէ՞, որոնցմէ՞, ի՞նչ քանէ, ինչո՞վ, ինչերո՞վ, ի՞նչ քանով, որո՞վ* հարցումներուն:

Վարժութիւն

Ընդգծէ՛ խնդիրները:

1. Կայծակը չոր ճաթիւնով բախեցաւ ժայռերուն:
2. Գիւղացին զգոյշ քայլերով մօտեցաւ թուփերուն:
3. Ծերուկը ձեռնափայտով թեթեւակի զարկաւ իմ շունիս:
4. Որսորդը կերակրեց անօթի շունը:
5. Սպարապետին ձին գիտէր այդ հովիտին բոլոր բոյրերն ու հոտերը:
6. Աշխատասէր աշակերտը պարգեւատրուեցաւ դպրոցին տնօրէնութենէն:
7. Քոյրս գիրք մը նուիրեց իր ուսուցչուհիին:
8. Կրտսեր եղբայրս հրաժարեցաւ իր պաշտօնէն:
9. Մեծ հայրս մեզի կը պատմէր հին օրերէն:
10. Իշխանները գինի կը խմէին ոսկեայ գաւաթներով:

Ուղիղ եւ անուղղակի խնդիրներ

Խնդիրները կըլլան երկու տեսակ՝ ուղիղ եւ անուղղակի:

Ուղիղ խնդիր

Ծիծեռնակը ճանճ կերաւ:

Ես դասընկերս տեսայ:

1. Ի՞նչ կերաւ ծիծեռնակը:
2. Ես զո՞վ տեսայ:

Այս երկու նախադասություններուն մէջ գործողությունները ուղղակի կը կատարուին, կանցնին ճանճ-ին եւ դասընկեր-ոջ վրայ: Այս երկու բառերը ուղիղ խնդիրներ են:

Ուղիղ կը կոչուի այն խնդիրը, որուն վրայ անմիջականօրէն, ուղղակի կանցնի գործողութիւնը:

Ուղիղ խնդիրը կըլլայ միայն ուղղական-հայցական հոլովով: Ան կը պատասխանէ զո՞վ, որո՞նք, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր հարցումներուն:

Վարժութիւն

Ա. Միացո՛ւր եւ ընդգծե՛ ուղիղ խնդիրները:

Շունը	խոտ կը սիրէ:
Ոչխարը	ոսկոր կը սիրէ:
Մկնիկը	պանիր եւ ցորեն կը սիրէ:
Աշակերտը	դաս եւ խաղ կը սիրէ:
Ձուկը	ձուկ եւ մեղր կը սիրէ:
Արջը	ձուկ եւ խմոր կը սիրէ:
Ծիծեռնակը	միջատ կը սիրէ:

Բ. Ընդգծե՛ ուղիղ խնդիրները:

Շատակները

.... Ամբան ամիսներուն բուն կը բռնէ եւ կուտէ աւելի քան հազար դաշտային մուկ եւ այլ վնասակար կրծողներ: Այսպիսով, բուն կրծողներէն կը փրկէ մէկ թոն հացահատիկ:

Հաշուած են, որ եթէ մարդը թռչունի ախորժակ ունենար, ան մէկ օրուան մէջ այնքան սննդամթերք պիտի ուտէր, որքան կուտէ մէկ ամսուան մէջ:

Մարդոց շատակերութիւնը կը վնասէ առողջութեան, իսկ թռչուններունը ոչ միայն չի վնասէր իրենց, այլեւ ոչնչացումէ կը փրկէ աշխարհի բուսական բարիքները:

Անուղղակի խնդիր

Ուսուցիչը կը սպասէր աշակերտներուն:

Գիրք մը նուիրեցի Գեորգին:

Աշոտը նամակ մը ստացաւ Արշակէն:

Աշակերտները Կիպրոս մեկնեցան օդանաւով:

1. Որո՞նց կը սպասէր ուսուցիչը:
2. Որո՞ւ նուիրեցի գիրք մը:
3. Աշոտը որմէ՞ նամակ մը ստացաւ:
4. Աշակերտները ինչո՞վ Կիպրոս մեկնեցան:

Այս նախադասութիւններուն մէջ *աշակերտներուն, Գէորգին, Արշակէն, օղանաւով* բառերը անուղղակի կապուած են գործողութիւններուն: Այս բառերը անուղղակի խնդիրներ են:

Անուղղակի կը կոչուի այն խնդիրը, որ անուղղակի կապուած է գործողութեան ստորոգիչին:

Անուղղակի խնդիրը կըլլայ տրական, բացառական եւ կամ գործիական հոլովով: Ան կը պատասխանէ *ինչի՞, ինչի՞ մասին, ի՞նչ բանի, որո՞ւ, որո՞ւ մասին, ինչէ՞, ի՞նչ բանէ, որո՞ւ կողմէ, որմէ՞, ինչո՞վ, որո՞վ, ի՞նչ միջոցով* հարցումներուն:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ անուղղակի խնդիրները:

1. Փոքր քոյրս շատ կը վախնայ շուներէն եւ կատուներէն:
2. Երկչոտ քայլերով մօտեցայ հիւղակի դռնակին:
3. Մեր ուսուցիչները միշտ գոհ են մեզմէ:
4. Անհամբեր կը սպասէի քու վերադարձիդ:
5. Աշոտը գաւազանով զարկաւ ընկերոջս ձեռքին:
6. Ես կը հպարտանամ դասընկերներուս յաջողութիւններով:
7. Չաքարը իրեն յատուկ շատախօսութեամբ բան մը կը պատմէր ընկերոջս եւ քոյրերուս:

Բ. Ընդգծէ՛ ուղիղ խնդիրը մէկ գիծով, անուղղակի խնդիրը՝ երկու:

Մէկ ստորոգիչը կրնայ մէկէ աւելի ուղիղ եւ անուղղակի խնդիրներ ունենայ:

Աշխատասէր արհեստաւոր մը շատ դժգոհ էր իր միակ գաւակէն, որովհետեւ ան սաստիկ ծոյլ էր եւ ամենեւին չէր գնահատէր հօրը աշխատանքը, չէր սորվէր, անխնայ կը վատնէր անոր շահած դրամը, օրը կանցընէր

գուարճութիւններու մէջ: Երբ հայրը կ'ըսէր, թէ ինչո՛ւ չի հասկնար աշխատանքի քաղցրութիւնը, որդին կը դժգոհէր՝ ըսելով.

– Մեծ բան մը չէ...

Հայրը որոշեց որդիին հասկցնել աշխատանքի կարեւորութիւնը եւ վաստակի քրտինքին քաղցրութիւնը:

Երկար մտածելէ ետք գտաւ հնարը. «Ձինք պէտք է գրկել գուարճանալու միջոցներէն. թող ինք աշխատի ու ապրի», – մտածեց ան եւ որդին իր մօտ կանչելով՝ յայտնեց իր պահանջը:

Ա. Դաւթեան

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՄԱՆԱՏՐՈՒԿ ԹԱԳԱԻՈՐ

Տրդատ առաջինին յաջորդեց իր որդին՝ **Սանատրուկ**: Կը պատմեն, թէ երբ դեռ տղայ էր, իր Սանտո կոչուած դայեակը զինքը տեղ մը տարած ժամանակ լեռներու վրայ ձիւնի բուքի հանդիպեցաւ: Դայեակը ձիւնի տակ՝ իր գրկին մէջ, երեք օր պահեց զինքը, մինչեւ որ եկան ու ազատեցին:

Սանատրուկ բարի եւ խելացի թագաւոր եղաւ. իր ժամանակ հայ ժողովուրդը սկսաւ վաճառականութիւն ընել. արտերը ցանեցին, ու մեր երկիրը հարստացաւ: Սանատրուկ յետոյ Արածանի գետին վրայ **Մծուրք** անունով մեծ ու գեղեցիկ քաղաք մը շինեց. այնքան դրամ ծախսեց, որ քովը ա՛լ բան չմնաց. անոր համար քաղաքին հրապարակին վրայ իր մեծ արձանը շինել տուաւ՝ ձեռքին մէջ դահեկան մը դրած. ըսել կ'ուզէր, թէ միայն այս դրամը մնացեր էր:

Իր ժամանակ **Թադէոս** առաքեալը Հայաստան եկաւ քրիստոնէութիւն քարոզելու: Շատ հրաշքներ ըրաւ ու կրցաւ շատ ազնուական իշխաններ քրիստոնէայ դարձնել: Ասոնց մէջ էր նաեւ թագաւորին աղջիկը՝ **Սանդուխտ**: Սանատրուկ շատ բարկացաւ, որ իր աղջիկը, ձգելով կոռպաշտութիւնը, քրիստոնէայ եղած էր. խրատեց, յորդորեց եւ ըսաւ.

— Քեզ կը սպաննեմ:

Բայց Սանդուխտ մտիկ չըրաւ: Այն ատեն թագաւորը հրամայեց իր զինուորներուն, որ թէ՛ Սանդուխտը եւ թէ՛ Թադէոս առաքեալը բռնեն ու զլուխնին կտրեն:

Այս երկուքը մեր Հայ եկեղեցիին առաջին քրիստոնեայ մարտիրոսներն եղան, եւ մենք ամէն տարի իրենց տօնը կը կատարենք:

ԲԱՌԵՐ

Դայեակ – 1. ստնտու, 2. դաստիարակ:

Բուք – ձմեռնային սառնաշունչ մրրիկ:

Դահեկան – հին դրամական միաւոր:

Յորդորել – համոզել, տրամադրել բան մը ընելու:

Մարտիրոս – հաւատին համար նահատակուած անձ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր խնդիր լրացումները եւ որոշէ՛ անոնց տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննէ՛ր հայթայթէ Սանատրուկ թագաւորի մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 27.

Պարագաներ

Այսօր Յակոբը դպրոց գնաց:

Ո՞ւր գնաց Յակոբը:

Ե՞րբ գնաց Յակոբը:

Այսօր, դպրոց բառերը գործողութեան տարբեր հանգամանքներ ցոյց տուող լրացումներ են:

Գործողութեան տարբեր հանգամանքներ ցոյց տուող լրացումները կը կոչուին պարագաներ:

Հայերէնի մէջ պարագաները թիւով բաւականին շատ են: Ծանօթանանք մի քանիին:

ա. Տեղի պարագայ

Փողոցին մէջ խճողում կայ:

Եղբայրս վերադարձաւ Փարիզէն:

Ո՞ւր խճողում կայ:

Եղբայրս ուրկէ՞ վերադարձաւ:

Գործողութեան տեղը ցոյց տուող լրացումը կը կոչուի տեղի պարագայ:

Տեղի պարագան կը պատասխանէ **ո՞ւր, ուրկէ՞** հարցումներուն:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ տեղի պարագաները:

1. Մանուկը ձեռքը ինկածը բերանը կը տանի:
2. Յասմիկը գիւղէն եկած է:
3. Յովհաննէսը քաղաք պիտի երթայ:
4. Աչքիս մէջ թարթիչ մը ինկած է:
5. Ծառին մօտ կարմիր կակաչներ ծաղկած են:

- 6. Ճիւղերուն վրայ թռչունները կը ճռուողեն:
- 7. Կամուրջին տակէն գետ մը կը հոսի:

բ. Ժամանակի պարագայ

*Հօրեղբայրս պիտի մեկնի գիշերը:
Ժամը երեքին մրցաշարքը պիտի սկսի:*

Ե՞րբ պիտի մեկնի հօրեղբայրս:
Ե՞րբ պիտի սկսի մրցաշարքը:

Գործողութեան ժամանակը ցոյց տուող լրացումը կը կոչուի ժամանակի պարագայ:

Ժամանակի պարագան կը պատասխանէ ե՞րբ, երբէ՞ն, ո՞ր օրէն, ո՞ր ժամուն եւ նման հարցումներու:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ ժամանակի պարագաները:

- 1. Այսօր քեզի սպասեցի:
- 2. Վաղը դպրոցը փակ պիտի ըլլայ:
- 3. Ամառը մենք ծով կ'երթանք:
- 4. Երկու ժամէն պիտի ճամբորդենք:
- 5. Երկուշաբթի եւ երեքշաբթի շատ դաս չենք ունենար:
- 6. Գարնան՝ ծաղիկները կը ծաղկին:
- 7. Անցեալին սառնարան չկար:

գ. Ձեռի պարագայ

*Արցախի ազատամարտիկները քաջարար պայքարեցան:
Ուսուցիչը դանդաղօրէն կը քալէր բակին մէջ:*

Ի՞նչպէս պայքարեցան ազատամարտիկները:
Ի՞նչպէս կը քալէր ուսուցիչը:

Գործողութեան ձեւը ցոյց տուող լրացումը կը կոչուի ձեւի պարագայ:

Ձեւի պարագան կը պատասխանէ ի՞նչպէս, ի՞նչ ձեւով հարցումներուն:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ ձեւի պարագաները:

1. Զինուորը հերոսաբար պաշտպանեց իր հայրենիքը:
2. Դասընկերս բարձրաձայն կը շատախօսէր:
3. Ծոյլը երգով ու խաղով կանցընէ իր ժամանակը:
4. Աշխատասէր աշակերտը հաճոյքով դաս կընէ:
5. Արջը ախորժակով կուտէ մեղրը:

դ. Նպատակի պարագայ

Մենք գիւղ գացինք հանգիստ առնելու համար:

Աշտոր տուն վերադարձաւ քնանալու:

Ի՞նչ նպատակով գացինք գիւղ:

Ինչո՞ւ Աշտոր տուն վերադարձաւ:

Գործողութեան նպատակը ցոյց տուող լրացումը կը կոչուի նպատակի պարագայ:

Նպատակի պարագան կը պատասխանէ ինչո՞ւ, ի՞նչ բանի խամար, ի՞նչ նպատակով հարցումներուն:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ նպատակի պարագաները:

1. Մենք սար բարձրացանք ձիւնագնդակ խաղալու համար:
2. Գարնան՝ դաշտ կերթանք վայրի ծաղիկ քաղելու համար:
3. Անկողին մտայ քնանալու համար:
4. Դաշտ գացինք խաղացողները քաջալերելու համար:
5. Դրամ շատցուցի գիրք գնելու համար:
6. Յաջողելու համար գիշեր–ցերեկ դասերս սերտեցի:
7. Վանդակին դռնակը բացի թռչունը արձակելու նպատակով :

է. Պատճառի պարագայ

Փոքրիկը ճչաց ուրախութենէն:

Ազնիւր տունը կը մնար եղբօրը հիւանդութեան պատճառով:

Ինչո՞ւ ճչաց փոքրիկը:

Ինչո՞ւ Ազնիւր տունը կը մնար:

Գործողութեան պատճառը ցոյց տուող լրացումը կը կոչուի պատճառի պարագայ:

Պատճառի պարագան կը պատասխանէ **ինչո՞ւ, ինչէ՞(ն), ի՞նչ բանէ, ի՞նչ պատճառով** հարցումներուն:

Վարժութիւն

Ա. Ընդօժէ՛ պատճառի պարագան եւ կապէ՛ զայն ստորոգիչին:

1. Երեխան անօթութենէն լացաւ:
2. Տոպրակին ծանրութենէն յոգնեցայ ու ճամբան նստայ:
3. Գլխացաւիս պատճառով չկրցայ աշխատիլ:
4. Քայլէլէն յոգնեցայ:
5. Նեղութիւն կը զգամ աղմուկէն:
6. Կինը անմտութեան պատճառով իւղն ու բրինձը Բարեկենդանին յանձնեց:

գ. Չափ ու քանակի պարագայ

Երեք անգամ ներկայ եղած եմ «Պաղտասար աղբար» թատերախաղին:

Աշոտը երկար խօսեցաւ եւ զիս համոզեց:

1. Քանի՞ անգամ ներկայ եղած եմ «Պաղտասար աղբար» թատերախաղին:
2. Աշոտը ո՞րքան խօսեցաւ:

Գործողութեան չափը ցոյց տուող լրացումը կը կոչուի չափ ու քանակի պարագայ:

Չափ ու քանակի պարագան կը պատասխանէ **ո՞րքան, ո՞րչափ, ի՞նչքան, քանի՞ անգամ** եւ նման հարցումներու:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՛ չափ ու քանակի պարագաները:

1. Թռչունները ինը ամիս մեր երկիրը կ'ապրին:
2. Կէսօրէ ետք երեք ժամ քնացայ ու բաւական հանգստացայ:
3. Ուսուցիչը նոյն դասը նորէն բացատրեց:
4. Ժամեր պարեցինք առանց յոգնելու:
5. Նորածինը քանի մը անգամ բացաւ–գոցեց աչքերը, յետոյ քնացաւ:
6. Չափազանց յոգնած եմ:
7. Քի՛չ խօսէ, շա՛տ լսէ:

Բ. Չախ կողմի բառերը ընտրովի միացո՛ւր դիմաւոր բայերուն:

Երեք լիթր	քնացայ:
Ութ ժամ	(ջուր) խմեցի:
Հարիւր տոլար	պտըտեցայ:
Օրերով	ծախսեցի:
Չափազանց	կը ճամբորդեմ:
Անդադար	յոգնած եմ:

ԷԶԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՄԵԾՆ ԽՈՍՐՈՎ

Սանատրուկի մահէն յետոյ դարձեալ խռովութիւն ինկաւ պարթեւներու եւ հռոմայեցիներու միջեւ, եւ շատ պատերազմներ եղան Հայաստանի մէջ, մինչեւ որ Քրիստոսէ երկու հարիւր քսաներկու տարի վերջ **Խոսրով** Հայաստանի թագաւոր եղաւ: Ասիկա շատ քաջ եւ մեծ թագաւոր եղաւ:

Իր թագաւորութեան առաջին տարիներուն ճակատագրական դէպք մը պատահեցաւ երկրին մէջ: **Արտաշիր Սասանեան** անունով պարսիկ իշխան մը ապստամբեցաւ պարթեւներու թագաւորին դէմ եւ պատերազմ

ընելով յաղթեց ու զայն սպաննեց: Մեր Խոսրով թագաւորը շատ ցաւեցաւ, որ իր ազգական թագաւորը՝ Արտաւան, յաղթուէր մեռեր է: Շատ մը ազգեր իր դրօշին տակ զինուոր կանչեց եւ մեծ պատերազմ ըրաւ Դավրէժ քաղաքին քովերը: Խոսրովի բանակը շատ մեծ յաղթանակ մը տարաւ, ու Արտաշիւր ստիպուեցաւ փախչիլ հեռու աշխարհներ եւ հոն սրտի ցաւէն մեռաւ: Իր որդին՝ **Շապուհ Առաջինը**, տեսնելով, որ զէնքով պիտի չկարենայ յաղթել Խոսրովին, ուզեց խաբէութեամբ սպաննել զանիկա: Կանչեց իր սիրելի իշխաններէն մէկը, որ **Անակ** կը կոչուէր, եւ ըսաւ անոր.

— Եթէ կարենաս Հայաստան երթալ եւ Խոսրովը սպաննել, քեզ իմ թագաւորութեանս երկրորդը կ'ընեմ:

Անակ իր ընտանիքով եկաւ Հայաստան. այնպէս մը խաբեց Խոսրովը, իբր թէ Շապուհի ձեռքէն փախեր է: Հինգ տարի վերջ, երբ օր մը որսի ելեր էին, գաղտնի զարկաւ եւ սպաննեց Խոսրովը, բայց ինքն ալ ընտանիքով սպաննուեցաւ, ու միայն իր փոքրիկ մէկ տղան ազատեցաւ, որ **Գրիգոր** կը կոչուէր, եւ յետոյ հայերուս Սուրբ Լուսաւորիչը եղաւ՝ մեր ազգը քրիստոնէայ դարձնելով:

ԲԱՌԵՐ

Ճակատագրական – բախտորոշ, վճռորոշ:

Ապստամբիլ – զինուած պայքարի ելլել իշխանութեան դէմ:

Դրօշին տակ – ղեկավարութեամբ, իշխանութեան ներքոյ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր պարագայ լրացումները եւ որոշէ՛ անոնց տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննէ՛ր հայթայթէ Խոսրով Մեծ թագաւորի մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 28.

ԲԱԶՄԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Մեր դասարանի ուշիմ, աշխատասէր ու պարտաճանաչ աշակերտը գնահատանքի արժանացաւ:

Ո՞ր աշակերտը:

Այս նախադասութեան մէջ *ուշիմ, աշխատասէր, պարտաճանաչ* բառերը *աշակերտը* գոյականական անդամին որոշիչ լրացումներն են: Երեք բառերն ալ կը պատասխանեն **ո՞ր** հարցումին եւ կը լրացնեն *աշակերտը* ենթական:

Նախադասութեան մէջ միեւնոյն անդամին՝ նոյն հարցումին պատասխանող լրացումները կը կոչուին բազմակի լրացումներ:

Այսինքն՝ վերի նախադասութեան մէջ *ուշիմ, աշխատասէր, պարտաճանաչ* բառերը բազմակի լրացումներ են:

Նախադասութեան բազմակի լրացումները իրարմէ կը բաժնուին ստորակէտով, իսկ իրարու կը միանան **եւ** կամ **ու** շաղկապով: Շաղկապով միանալու պարագային անոնց միջեւ ստորակէտ չի դրուիր:

Օրինակ՝ *Չինը ծածկած է լեռները, ձորերն ու դաշտերը:*

Սկսան ամրան տաք ու հեղձուցիչ օրերը:

Վարժութիւն

Ա. Ընդգծէ՝ բազմակի լրացումները եւ շրջագծէ՝ անոնց լրացեալները (գոյական կամ բայ):

1. Ընկերոջս հայրը ունի գործարան մը, որ կ'արտադրէ բարձրորակ ու փափուկ մուշտակներ:
2. Ծերունին կը քալէր նեղ, ցեխոտ, ամայի ու մութ փողոցէ մը:
3. Մայրս շուկայէն գնեց տանձ, խնձոր ու խաղող:
4. Հովիւները լեռնային արօտավայրեր տարին գիւղին կովերը, ոչխարներն ու գառները:
5. Հայրս ինձի համար խանութէն գնած էր գունաւոր մատիտներ, գծագրութեան տետրեր եւ ռետին:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԱՆՔԻ

Ա. Արագօրէն կը զարգանայ գրական արեւմտահայերէնը:

Բ. Արագօրէն կը զարգանա՞յ գրական արեւմտահայերէնը:

Գ. Արագօրէ՛ն զարգացիր, գրակա՛ն արեւմտահայերէն:

Դ. Արագօրէն կը զարգանա՞յ գրական արեւմտահայերէնը:

Բոլոր նախադասութիւնները գրեթէ նոյն ձեւով կազմուած են: Խօսքը կը վերաբերի գրական արեւմտահայերէնին, սակայն իւրաքանչիւր նախադասութեան մէջ գրական արեւմտահայերէնի նկատմամբ մօտեցումը, զգացումը, հաստատումը կը փոխուի:

Առաջին նախադասութեան մէջ կըսեմ, որ արագօրէն կը զարգանայ գրական հայերէնը:

Երկրորդին մէջ հարց կու տամ գրական արեւմտահայերէնի զարգացման մասին:

Երրորդին մէջ կը յորդորեմ, կը հրահանգեմ գրական արեւմտահայերէնի զարգացումը:

Չորրորդին մէջ կը սքանչանամ գրական արեւմտահայերէնի զարգացումով:

Տարբեր վերաբերումներու մէջ վճռական դեր կը կատարեն նախադասութիւններուն հնչերանգները:

Հնչերանգները չորս տեսակ են՝ պատմողական, հարցական, բացազանչական, հրամայական:

Վերաբերումի կողքին՝ հնչերանգի ձեւաւորման մէջ դեր ունին ստորոգիչը (մանաւանդ հրամայական եղանակը) եւ առոգանութեան նշանները: Պատմողական նախադասութիւնը ընդհանրապէս առոգանութեան նշան չի ստանար:

Օրինակ՝ *Լո՛ւէ՛* (հրամայական նախադասութիւն):

Օ՛հ, ի՛նչ գեղեցիկ է տեսարանը (բացազանչական նախադասութիւն):

Այսօր եղանակը լաւ է (պատմողական նախադասութիւն):

Ինչո՞ւ լո՛ւեցիր (հարցական նախադասութիւն):

Վարժութիւն

Բ. Որոշէ՛ նախադասութեան երանգը:

1. Արա՛ մ, գնա՛ տուն եւ սերտէ՛ դասերդ:

Հրամայական նախադասութիւն

2. Ո՞վ է Մերոպ Մաշտոց:

3. Ո՞րն է, պապօ՛, մեր հայրենիք: (Յ. Շիրազ)

4. Առաջին կիսախաղը վերջացաւ 1-2 արդիւնքով:

5. Օ՛հ, ի՛նչ հաճելի հանդիպում:

6. Իջեցուցէ՛ք առագաստները:

7. Անմիջապէս առագաստները իջեցուցին:

ՊԱՐԶ ԵՒ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարդա՛:

Քամին դաղրեցաւ:

Այս նախադասութիւնը քանի՞ միտք կ'արտայայտէ:

Մէկ միտք արտայայտող նախադասութիւնը պարզ նախադասութիւն է:

Կարդա՛:

Քամին դաղրեցաւ: Տեղատարափ անձրեւ սկսաւ:

Քանի՞ միտք կարդացիր:

Քանի՞ նախադասութիւններ են գրուածները:

Այս նախադասութիւններէն իւրաքանչիւրը մէկ միտք կ'արտայայտէ, այսինքն՝ պարզ նախադասութիւն է: Այս երկու պարզ նախադասութիւնները, որոնք իրարու կապուած են միտքով, կրնանք մէկ նախադասութեան վերածել: Այսպէս՝

Քամին դաղրեցաւ, եւ տեղատարափ անձրեւ սկսաւ:

Երբ երկու պարզ նախադասութիւններ կը միանան մէկ նախադասութեան մէջ, անոնք ա՛յդ նախադասութեան մէջ կը դաղրին այլեւս

ինքնուրոյն պարզ նախադասութիւն ըլլալէ, որովհետեւ այդ նախադասութեան բաղադրիչները կը դառնան: Հետեւաբար, վերը գրուած նախադասութիւնը ունի երկու բաղադրիչ նախադասութիւն.

առաջին բաղադրիչ նախադասութիւնը
քամին դադրեցաւ,
երկրորդ բաղադրիչ նախադասութիւնը
եւ տեղատարափ անձրեւ սկսաւ:

Բարդ կը կոչուի այն նախադասութիւնը, որ կազմուած է երկու կամ աւելի բաղադրիչ նախադասութիւններէ:

Օրինակ.

Ձմեռը անցաւ, եւ թռչունները վերադարձան մեր երկիրը:

Բարդ նախադասութիւնները կրնան ըլլալ համադասական եւ ստորադասական:

Բարդ համադասական կը կոչուի այն բարդ նախադասութիւնը, որուն բաղադրիչները իրարու կապուած են համադասութեամբ (համադասական շաղկապներով կամ ստորակէտով եւ կամ միջակէտով):

Օրինակ.

Արամը դասերը կը պատրաստէ, իսկ Անահիտը դաշնակ կը նուագէ:

Այս բարդ նախադասութեան մէջ երկու բաղադրիչները՝ *Արամը դասերը կը պատրաստէ, Անահիտը դաշնակ կը նուագէ,* իրարու կապուած են **իսկ** շաղկապով. անոնցմէ ոչ մէկը միւսէն կախեալ է, միւսին լրացումն է: Երկու բաղադրիչներն ալ իրարու համադաս են ու համագօր:

Բարդ ստորադասական կը կոչուի այն բարդ նախադասութիւնը, որուն բաղադրիչ նախադասութիւնները իրարու կապուած են ստորադասութեամբ (ստորադասական շաղկապներով):

Օրինակ.

Արան կը շտապէր, որովհետեւ ներկայացումէն կուշանար:

Այս բարդ նախադասութեան բաղադրիչները՝ *Արան կը շտապէր եւ ներկայացումէն կ'ուշանար*, իրարու կապուած են ստորադասական յարաբերութեամբ, որ արտայայտուած է **որովհետեւ** շաղկապով:

Ստորադասական յարաբերութիւն կը սենք, որովհետեւ *ներկայացումէն կ'ուշանար* բաղադրիչ նախադասութիւնը կը լրացնէ *Արան կը շտապէր* բաղադրիչ նախադասութիւնը՝ իբրեւ պատճառի պարագայ: Լրացում նախադասութիւնը ստորադաս է միւս՝ գլխաւոր նախադասութեանը:

Լրացում բաղադրիչ նախադասութիւնը կը կոչենք ստորադաս նախադասութիւն, իսկ գլխաւոր բաղադրիչը՝ գերադաս նախադասութիւն:

Ստորադաս նախադասութիւնը գերադասին համեմատ կրնայ ըլլալ առաջադաս, միջադաս կամ վերջադաս: Օրինակ՝

Եթէ կը փափաքիս, դուն ալ կրնաս մեզի ընկերանալ:

Եթէ կը փափաքիս ստորադաս բաղադրիչը առաջադաս նախադասութիւն է:

Արամը, որ իմ ընկերս է, շատ խելացի է:

Որ իմ ընկերս է ստորադաս բաղադրիչը միջադաս նախադասութիւն է:

Ընկերներուս հետ գացի պարատուն, թեւ պարել չեմ սիրէր:

Թեւ պարել չեմ սիրէր ստորադաս բաղադրիչը վերջադաս նախադասութիւն է:

Վարժութիւն

Նշէ՛ բարդ նախադասութիւնները եւ որոշէ՛ անոնց տեսակը (համադասական կամ ստորադասական).

ԶՐԱՄԱՆԻՆ ԽՈՒՓԸ

Շատ տարիներ առաջ Գեորգ Դպիր անունով հայ ճանապարհորդ մը, որ շատ գրասէր էր, մութը կոխելուն պէս կ'ապաստանի շամախցի հայ պառաւ կնոջ մը տունը:

Գիշերը սաստիկ ծարաւ կը զգայ: Կամաց մը անկողինէն կ'ելլէ եւ կը մօտենայ միջանցքը դրուած մեծ ջրամանին: Կը նկատէ, որ ամանին

բերնին վրայ հաստ խուփ մը դրուած է: Կ'ուզէ կանթէն բռնել, բայց խուփը կանթ չունէր: Վերցնելու ժամանակ ձեռքէն կ'իյնայ, բայց չի կոտորիր: Գէորգ կ'ուրախանայ, որ տանտիրոջ ամանը անվնաս մնաց, միեւնոյն ատեն սաստիկ կը զարմանայ՝ մտածելով, թէ այս խուփը ի՛նչ տեսակ կաւէ շինուած էր, որ իյնալով չկոտորեցաւ:

Գետնէն կը վերցնէ զայն եւ բակը ելլելով՝ անոր կը նայի լուսնի շողերուն տակ:

Կը նկատէ, որ ատիկա յոյն պատմագիրի մը շատ արժէքաւոր գիրքն է, որ հայերէնի թարգմանուած էր այն տարիներուն, երբ Մեսրոպ Մաշտոց հնարած էր հայերէն գիրերը: Այդ գիրքին յունարէն բնագիրը կորսուած էր, եւ ամէն ազգէ նշանաւոր մարդիկ, այս ու այն կողմ ինկած, կը փնտռէին զայն:

Գէորգ Դպիր ջուրը կը խմէ, բայց քունը այլեւս կը փախչի իր աչքերէն: Ան պառաւր կ'արթնցնէ, շնորհակալութիւն կը յայտնէ անոր եւ այդ թանկագին գանձը հետը առնելով՝ կը վերադառնայ Երեւան, ուրկէ կ'անցնի Երոպա:

Շուտով այդ գիրքը հայերէնէ նորէն կը թարգմանուի յունարէնի եւ եւրոպական ուրիշ լեզուներու:

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՅԵԱԼԷՆ

ՏՐՂԱՏ Գ.

Շապուհ պարսիկ թագաւորը երբ լսեց, թէ Անակ դաւաճանը սպաննեց հայոց Խոսրով թագաւորը, իսկոյն մեծ բանակով մեր երկիրը մտաւ. իրեն վախնալիք թշնամին հայերն էին: Շապուհ սպաննեց իրեն հակառակորդ իշխանները, սուրէ անցուց Խոսրովին ընտանիքը. բայց Արտաւազդ Մամիկոնեան իշխանը Խոսրովին ամէնէն փոքրիկ մանչը՝ **Տրդատը**, հռոմայեցիներուն երկիրը փախցուց եւ ազատեց:

Տրդատ մեծցաւ եւ մեծ անուն հանեց իբրեւ քաջ զօրավար: Այն ատենները գոթերու թագաւորը պատերազմի ելաւ հռոմայեցիներու դէմ եւ ըսաւ.

— Ինչո՞ւ այդքան արին թափենք. թող ձեր թագաւորը զայ, ու մենամարտինք, եւ քաջին ըլլայ յաղթանակը:

Հռոմայեցիներու թագաւորը, որ մարմնապէս թոյլ ու տկար էր, Տրդատին հազցուց իր զրահները ու դրկեց գոթերու թագաւորին դէմ:

Տրդատ մեծ քաջութեամբ կռուեցաւ ու մէկ հարուածով վերէն վար ճեղքեց գոթերու թագաւորը: Հռոմայեցիներու բոլոր բանակը գոչեց.

— Կեցցէ՛ Հայոց գահաժառանգը:

Կայսրը Տրդատը վարձատրելու համար զինք Հայաստանի թագաւոր պսակեց ու բանակ մըն ալ տալով՝ դրկեց Հայաստան, եւ նա, մտնելով իր երկիրը, տիրացաւ հօրը թագաւորութեան:

ԲԱՌԵՐ

Դաւաճան – 1. թշնամիին կողմը անցնող, 2. վստահութիւնը չարաշահող:

Գոթեր – հին գերմանական ցեղ մը:

Տկար – մարմնապէս թոյլ, ոչ ամրակազմ, ոյժը պակաս, վատոյժ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր համադասութեամբ իրար կապուած նախադասութիւնները եւ որոշէ՛, թէ անոնք ինչպէս կապուած են իրար:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ հայթայթէ Տրդատ Գ թագաւորի մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 29.

ԶԵՂՉՈՒՄ

ԶԵՂՉՈՒԱԾ ԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Խօսքի մեջ յաճախ ենթակային անունը տալը, անունը յիշելը աւելորդ կըլլայ: Ասոր պատճառը այն է, որ հայերէնի մեջ ստորոգիչը միաժամանակ կը բովանդակէ գործողութիւն կատարողին դէմքը եւ թիւը:

Ենթական կը զեղչուի՝

Ա. Երբ գործողութիւն կատարողը խօսողն է: Օրինակ՝

Տուն վերադարձայ:

(Զեղչուած է *ես* ենթական):

Բ. Երբ գործողութիւն կատարողը խօսակիցն է: Օրինակ՝

Բնչո՞ւ դատը չես տրված:

(Զեղչուած է *դուն* ենթական):

Գ. Երբ ենթական արդէն մէկ կամ քանի մը անգամ արտայայտուած է նախորդ ինքնուրոյն կամ բաղադրիչ նախադասութիւններուն մեջ իբրեւ ենթակայ կամ իբրեւ լրացում: Օրինակ՝

Արամը տուն վերադարձաւ, որպէսզի հանգստանայ:

(Հոս «որպէսզի հանգստանայ»-ն զեղչուած ենթակայով բաղադրիչ նախադասութիւն է):

Այն նախադասութիւնը, որուն ենթական չէ արտայայտուած կամ բաց ձգուած է, բայց լռելեայն կը հասկցուի, կը կոչուի զեղչուած ենթակայով նախադասութիւն:

Կարելի չէ ենթական ամեն պարագայի զեղչել: Ատիկա հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ ստորոգիչը (դիմաւոր բայ) մասնացոյց կընէ, կը յիշեցնէ, թէ ո՞վ է կամ ի՞նչ է ենթական. անմիտ բան կը ստանանք, եթէ կազմենք զեղչուած ենթակայով այսպիսի նախադասութիւններ՝

Յովսէփը եւ Արամը տուն կը վերադառնային: Վերադարձի ճամբուն վրայ ինկաւ: Ծիծաղելով ըսաւ՝ այս ի՞նչ բան էր:

Այս արտայայտութենէն կարելի չէ գիտնալ, թէ ո՛վ գետին ինկաւ, թէ ո՛վ ըսաւ «այս ի՞նչ բան էր»:

Կարելի է, օրինակ, այսպէս գրել.

Յովսէփը եւ Արամը տուն կը վերադառնային: Վերադարձի ճամբուն վրայ Յովսէփը ինկաւ: Արամը ծիծաղելով ըսաւ՝ այս ի՞նչ բան էր:

Ծանօթութիւն:

Գրագէտի մը կենսագրական զիծերը ներկայացնելու ատեն ենթական (գրագէտին անունն ու մականունը) կը դառնայ վերնագիր եւ այդ պատճառով շարադրանքին մէջ կը զեղչուի: Օրինակ՝

Մկրտիչ Խրիմեան-Հայրիկ

Ծնած է 1820-ին Վան: Կանուխէն որբ մնալով՝ մեծցած է իր հօրեղբօր խնամքին տակ:

27 տարեկանին, երբ ամուսնացած էր արդէն, կու գայ Պոլիս եւ կը փորձէ անցնիլ Եւրոպա՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու: Նիւթական դժվարութեան պատճառով չի կրնար իրականացնել իր փափաքը:

Եւ այլն...

Վարժութիւն

Բ. Պարզ նախադասութիւնները իրարու շողկապէ՛ր բարդ նախադասութիւններ ունենալու համար: Ընդգծէ՛ զեղչուած ենթակայով բաղադրիչ նախադասութիւնները:

1. Յասմիկը պարտէզ գնաց: Յասմիկը ծաղիկ քաղեց:
Յասմիկը պարտէզ գնաց եւ ծաղիկ քաղեց:
2. Քոյրս շուկայ գնաց: Քոյրս կանաչեղէն գնեց: Քոյրս անմիջապէս տուն վերադարձաւ:
3. Եղբայրս տուն վերադարձաւ: Եղբայրս անհանգիստ էր:
4. Արամը առաւօտեան կանուխ արթնցաւ: Արամը դասերը պիտի սերտէ:
5. Մեծ հայրս եկեղեցի պիտի երթար: Մեծ հայրս հիւանդացաւ: Մեծ հայրս տունը մնաց:

6. Հրշեջները ժամանակին հասան: Հրշեջները չկրցան կրակը մարել:

7. Քանդակագործը երկար աշխատեցաւ: Ան քանդակին շինութիւնը աւարտեց:

ԶԵՂՉՈՒԱԾ ՍՏՈՐՈԳԻՉՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Նախադասութեան մէջ կրնայ գեղչուիլ նաեւ ստորոգիչը: Ստորոգիչը կրնայ գեղչուիլ ամբողջովին կամ մասամբ:

Օրինակ՝

Աբրահամը տուն գնաց, իսկ Արամը՝ դպրոց:

(Զեղչուած է *գնաց* պարզ ստորոգիչը. այդ պատճառով ալ բութ դրուած է):

Յակոբը աշխատասէր է, իսկ Աշոտը՝ ծոյլ:

(Զեղչուած է բաղադրեալ ստորոգիչին է հանգոյցը. այդ պատճառով ալ է հանգոյցին փոխարէն *Աշոտը* ենթակային վրայ դրուած է բութ):

Այն նախադասութիւնը, որուն ստորոգիչը ամբողջովին կամ մասամբ գեղչուած է, բայց լռելեայն կը հասկցուի, թէ ի՛նչ կընէ կամ ի՛նչ կըլլայ ենթական, կը կոչուի գեղչուած ստորոգիչով նախադասութիւն:

Ստորոգիչը ամբողջութեամբ կրնայ գեղչուիլ՝

ա. Եթէ նոյն ստորոգիչը ամբողջովին կամ անոր նիւթական իմաստ արտայայտող մասը (ստորոգելին կամ խոնարհուող բայը, նոյն կամ նախընթաց նախադասութեան մէջ արդէն անգամ մը գործածուած է:

Օրինակ՝

Մենք պիտի մեկնինք օդանաւով, իսկ անոնք՝ շոգենաւով:

Այս նախադասութեան մէջ գեղչուած է *պիտի մեկնին* ստորոգիչը. անիկա կը հասկցուի նոյն նախադասութեան առաջին բաղադրիչէն, ուր նոյն բայը գործածուած է առաջին դէմքով (պիտի մեկնինք):

Արամը երկայթագործի որդի է, Ադամը՝ կօշկակարի:

Այս նախադասութեան մէջ ամբողջովին զեղչուած է *որդի է* բաղադրեալ ստորոգիչը, որովհետեւ նոյն նախադասութեան առաջին բաղադրիչին մէջ անգամ մը գործածուած է:

բ. Երբ ստորոգիչը հարցումի ձեւով տրուած է հարցական նախադասութեան մէջ եւ պատասխանին մէջ չի կրկնուիր: Օրինակ՝

- Այսօր դուք քանի՞ դասապահ ունէիք:

- Մենք՝ հինգ դասապահ:

- Ուրկէ՞ կու գաք:

- Ես՝ դպրոցէն, իսկ Արամը՝ տունէն:

գ. Եթէ ստորոգիչը առանց գործածուելու կը հասկցուի: Այս երեւոյթին կը հանդիպինք մասնաւորաբար առածներուն մէջ: Օրինակ՝

Հազար խօսքին՝ մէ՛կ խօսք, հազար ճնճողուկին՝ մէ՛կ քար:

(Զեղչուած են *ըսէ* եւ *նետէ* ստորոգիչները):

Վարժութիւն

Ա. *Վերականգնէ՛ զեղչուած ստորոգիչները (մասամբ կամ ամբողջովին) եւ զանոնք գրէ՛ փակագիծերուն մէջ:*

1. Ոմանք զինուած էին սուրերով, ուրիշներ՝ նիզակներով:
2. Ռազմաճակատին վրայ Արամը անողորք ազատամարտիկ մըն էր, իսկ տունը՝ անձնուրաց եւ գթառատ հայր:
3. Ձիաւորներէն մէկը նստած էր գետինը, իսկ միւսը՝ իր ձիուն թամբին վրայ:
4. Յակոբը ունի հինգ մանչ. երեքը ուսանող են, երկուքը՝ արհեստաւոր:
5. Դուն ուսուցիչի զաւակ ես, իսկ ես՝ բժիշկի:
6. - Մրջիւններուն տալու համար շաքար տարի:
- Ո՞րքան:
- Տոպրակ մը:
7. Հին պատերը չդիմացան, հին փողոցները՝ նոյնպէս, եւ ջուրը հեղեղեց հողէ տանիքները:
8. Ես երկու նկանակ տուի փոքրիկին, ընկերս ալ՝ շիշ մը ջուր:
9. Եղբայրս երկարահասակ է, իսկ ես՝ կարճահասակ:

10. Հայրս երէկ վերադարձաւ, իսկ մեծ եղբայրս՝ այսօր:
11. Հասկցողին՝ մէկ, չհասկցողին՝ հազար ու մէկ:
12. Նկարները թուղթերուն անկիւնները փակցուցէ՛ք, իսկ կենսագրականները՝ վարը:
13. Ուսանողները եկած էին հեռուէն. մէկը՝ Ռուսաստանէն, միւսը՝ Աւստրալիայէն, երրորդը՝ Չինաստանէն:
14. Անվախը մէկ անգամ կը մեռնի, վախկոտը՝ հազար անգամ:
15. Դուն քաղաքի կեանքին վարժ ես, եղբայրդ՝ գիւղի կեանքին:

Բ. Ընդգծէ՛ մասամբ գեղջուած ստորոգիչները եւ բուժ դի՛ր, ուր որ պէտք է:

... Իսկ հիմա անցա՛ն այն ժամանակները. անոնք անցեալ են, մենք ապառնի, անոնք խաւար են, մենք լոյս, անոնք ատելութիւն են, մենք սէր, անոնք սուր են, մենք գրիչ, անոնք տգէտ են, մենք գիտուն, անոնք կրակ են, մենք ջուր, անոնք միս են, մենք բանջարեղէն...

ԷՋԵՐ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐՈՒ ԿՐՕՆՔԸ

Շատ հին ժամանակ հայերը կը պաշտէին արեւը, լուսինը, երկիրս եւ աստղերը, որովհետեւ արեւը զիրենք կը տաքցնէր, երկիրս իրենց կերակուր կու տար, լուսինն ու աստղերն ալ գիշերը ճամբորդները կը լուսաւորէին: Յետոյ պաշտեցին երկնքի մայրը՝ անունը դնելով **Անահիտ**: Հայերը շատ կը սիրէին այս աստուածուհին, զայն կը համարէին Հայաստանի մայրը, անոր համար շինած էին մեծ-մեծ մեհեաններ եւ ամէն տարի փառաւոր տօներ կը կատարէին: Անահիտի հետ պաշտեցին **Աստղիկ** դիցուհին, որ առաւօտեան Արուսեակին պատկերն էր՝ անոր պէս գեղեցիկ եւ մաքուր լոյսով:

Ուրիշ մէկ սիրելի աստուած մըն ալ ունէին, որ **Վահագն** կը կոչէին. ասիկա քաջերու պաշտպանն էր, չար սատանաները, վիշապները կը սպաննէր. իրեն համար կ'ըսէին նաեւ, թէ ծիրանի կարմիր ծովերէն ծնած է:

Այս երեք աստուածներուն յիշատակը շատ մեծ հանդէսով կը տօնախմբէին:

Յունիսի վերջերը **Վարդավառի** տօնը կը կատարէին եօթը օր, եօթը գիշեր, իսկ Օգոստոսի 7-ին՝ Նաւասարդի մեծ տօնը, երբ կը սկսէր հայոց Նոր տարին:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ երբ Հայաստան եկաւ եւ քրիստոնէութիւնը քարոզեց, հայերը ձգեցին հին աստուածները եւ սկսան պաշտել ճշմարիտ Աստուածը:

ԲԱՌԵՐ

Մեհեան - հեթանոսական եկեղեցի:

Դիցուհի – հեթանոս աստուածուհի:

Արուսեակ – Լուսաստղ:

Վարժութիւն

Ա. Շարադրանքին մէջ գտի՛ր ենթակայի եւ ստորոգեալի զեղջման դէպքերը եւ որոշէ՛ անոնց բնոյթը:

Բ. Ի՞նչ կը յիշես գրուածքէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւննե՛ր հայթայթէ հին հայոց աստուածներուն մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ:

ԴԱՍ 30.

ԱՆԵՆԹԱԿԱՅ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Առնենք 2 օրինակ:

1. *Չիւնեց:*
2. *Անձրեւեց:*

Այս նախադասութիւններէն իւրաքանչիւրը չունի եւ չի կրնար ունենալ ենթակայ. կարծէք ենթական եւ ստորոգիչը արտայայտուած են միասին՝ մէկ բառով:

Անենթակայ կը կոչուի այն նախադասութիւնը, որուն ստորոգիչը չունի եւ չի կրնար ունենալ ենթակայ:

Անենթակայ նախադասութիւնները կ'արտայայտուին՝

ա. Բայերու եզակի Գ. դէմքով. ասոնք ցոյց կու տան բնութեան երեւոյթներ, օրուան պահեր, վիճակ, եղանակ եւ այլն: Օրինակ՝

Այսօր պիտի անձրեւէ:

Ե՞րբ պիտի լուսնայ:

բ. Բայերու յոգնակի Գ. դէմքով. ասոնք ցոյց կու տան ընդհանրապէս բոլորին վերաբերող գործողութիւն: Այսպիսի նախադասութիւնները կը գործածուին յատկապէս առածներու եւ ասացուածքներու մէջ: Օրինակ՝

Երկայթը տաք-տաք կը ծեծեն:

Պտղատու ծառին շատ քար կը նետեն:

Այս նախադասութիւններուն մէջ երբեք կարելի չէ վերականգնել *անոնք* ենթական, որովհետեւ միտքը իսկոյն կը փոխուի, եւ անենթակայ նախադասութիւնը կը դառնայ ենթակայով նախադասութիւն, որուն ենթական, սակայն, ճշգրիտ ձեւով չէ արտայայտուած:

գ. Բայերու եզակի Բ. դէմքով. ասոնք կ'արտայայտեն խրատներ, ասացուածքներ, որոնք յաճախ կ'արտայայտուին հրամայական եղանակով (արգելական կամ հաստատական): Օրինակ՝

Արջը չսպաննած՝ մորթը մի՛ ծախեր:

Ծովը չտեսած՝ մի՛ բռայկնար:

Թեև *մի ծախե՛ր, մի՛ բռպիկնար* ստորագիչները արտայայտուած են եզակի Բ. դէմքով, բայց չեն վերաբերիր խօսակիցին, այլ կը վերաբերին ամէնքին, բոլոր մարդերուն:

դ. Բայերու յոգնակի Գ. դէմքով. ասոնք ցոյց կու տան գործողութիւնը կատարողի անորոշութիւն, այսինքն՝ յստակօրէն յայտնի չըլլար, թէ ո՛վ է ենթական: Օրինակ՝

Քեզ գրասենեակէն կը կանչեն:

Եղբայրս ընդհանուր հսկիչ նշանակեցին:

ե. Ապառնի դերբայով եւ օժանդակ բային եզակի Գ. դէմքով: Այս ձեւով որեւէ բանի անհրաժեշտութիւնը կը նշուի: Այս ձեւերը հնաբոյր են եւ այժմ այնքան ալ գործուն չեն գրական լեզուին մէջ: Օրինակ՝

Այս գործին համար բան մը ընելու է:

Վարդանը անգամ մը հոս կանչելու է:

զ. Կարգ մը բայերու կրաւորական ձեւի Գ. դէմքով: Օրինակ՝

Ժխորի մէջ դժուար կը խօսուի:

Ասոր մասին գրուած է:

Վարժութիւն

Ընդգծե՛ անենթակայ նախադասութիւնները եւ անենթակայ բաղադրիչ նախադասութիւնները:

1. Ճուտերը աշնան կը համրեն:
2. Օձը գլուխէն կը սպաննեն:
3. Փողոցէն զիս կանչեցին, եւ ես ալ շուարած՝ պատշգամ վազեցի:
4. Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով քանի մը կոճղեր դրաւ կրակին վրայ:
5. Կանձրեւէ, տղա՛ս... Աշունը թաց է:
6. Յակոբ Պարոնեանի մասին շատ գրուած է:
7. Գործաւորները տուն ճամբելու էր. արդէն կը մթնէր, կը ցրտէր:

ԱՆԴԷՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Առնենք 3 օրինակ:

1. *Անթերի կատարել բոլոր վարժությունները:*
2. *Ի նչպէս կատարել այս վարժությունը:*
3. *Ահաւասիկ մեր դպրոցը:*

Այս օրինակները անդէմ նախադասութիւններ կը կոչուին, որովհետեւ չունին ստորոգիչ, թէեւ համազօր են ստորոգիչով եւ ենթակայով նախադասութիւններուն: Այս տեսակ նախադասութիւնները սովորաբար ցանկութիւն, կամք, հրաման, կոչ եւ հարցում կարտայայտեն կամ որեւէ վիճակ կը նկարագրեն:

Այն նախադասութիւնները, որոնք կարտայայտեն հրաման, ցանկութիւն, կամք, հարցում կամ վիճակ եւ չունին ստորոգիչ, բայց ստորոգումը կը դրսեւորեն ձայնային առանձնայատուկ շեշտով՝ հնչերանգով, կը կոչուին անդէմ նախադասութիւններ:

Անդէմ նախադասութեան կիրարկութեան մէջ մեծ դեր կը կատարէ հնչերանգը, ինչպէս նաեւ գործածութեան իրադրութիւնը: *Լռել, սպասել* եւ *լռութիւն* բառերը, առանձին առած կամ բառարանին մէջ, նախադասութիւններ չեն: Բայց, օրինակ, ընթերցասրահի մը դրան վրայ գրուած *լռութիւն* բառը շեշտուած հնչերանգով կընկալուի իբրեւ նախադասութիւն, որ կարտայայտէ «լռութիւնը պահպանեցէ՛ք» կամ «լուռ մնացէ՛ք» միտքը:

Անդէմ նախադասութիւնները չունին նաեւ ենթակայ, թեպէտ կարելի է այդ նախադասութիւնները փոխել եւ վերածել ենթակայով եւ ստորոգիչով նախադասութիւններու:

Օրինակ՝

- Անթերի կատարել բոլոր վարժությունները:*
Պէտք է անթերի կատարել բոլոր վարժությունները:
Անթերի կատարեցէ՛ք բոլոր վարժությունները:

Պահպանե՛լ մաքրութիւնը:

Պէտք է պահպանել մաքրութիւնը:

Պահպանեցէ՛ք մաքրութիւնը:

Անդէմ նախադասութիւնները իրենց կազմութեամբ կըլլան երկու տեսակ՝ բայական ու անուանական:

Բայական անդէմ նախադասութիւնը սովորաբար կը կազմուի անորոշ դերբայով կամ նուազագոյնը իր կազմին մէջ կունենայ անորոշ դերբայ մը:

Օրինակ՝

Ծալե՛լ ձեռքերը:

Բարձրացնե՛լ ուսման մակարդակը:

Անտեսե՛լ եւ արհամարհե՛լ:

Այս նախադասութիւններուն մէջ անորոշ դերբայը սովորաբար կը կոչուի գլխաւոր (գերադաս) անդամ, սակայն անիկա ո՛չ ստորոգիչ, ո՛չ ալ ենթակայ է, այլ պարզապէս գլխաւոր անդամ անդէմ նախադասութեան մէջ:

Օրինակներէն կարելի է եզրակացնել, որ անդէմ նախադասութեան գլխաւոր անդամը կրնայ լրացում ունենալ կամ չունենալ:

Պահպանե՛լ մաքրութիւնը:

Կատարե՛լ վարժութիւնները:

Ընդգծուածները գլխաւոր անդամներուն (պահպանել, կատարել) լրացումներն են:

Անուանական անդէմ նախադասութիւնը սովորաբար կը կազմուի գոյականէ մը (կամ գոյականներէ), որ յաճախ կ'արտայայտուի նաեւ թեք հոլովներով եւ որեւէ կապով (նախադրութիւն, յետադրութիւն): Օրինակ՝

Մի՛շտ ժողովուրդին հետ, մի՛շտ ժողովուրդին համար:

Օ՛ն ընկերնէ՛ր, մա՛հ թշնամիներուն:

Անուանական անդէմ նախադասութիւնները, ինչպէս նաեւ բայական անդէմ նախադասութիւնները յաճախ գեղարուեստական ստեղծագոր-

ծութեան մէջ կը գործածուին, յատկապէս երբ պէտք կըլլայ միտքը աւելի սեղմ արտայայտել կամ խօսքին տալ որոշ հանդիսատրութիւն:

Վարժութիւն

Ա. Մէկ գիծով ընդգծէ՝ քայական անդէմ նախադասութիւնները, իսկ երկու գիծով՝ անուանական անդէմ նախադասութիւնները:

1. Խոտին մէջ երիցուկները կղզիներ կը յօրինէին տեղ-տեղ: Մացառ: Թաւուտ: Ծառերու ճիւղերուն պտուկներ:
2. Շշուկ քայլափոխի: Վերցուցի աչքերս. աւազանին մօտ կեցեր էր երիտասարդ մը: Պարզ, սովորական քաղքենի:
3. Յարձակի՛ լ եւ կրակէ՛ լ:
4. Պաքարի՛ լ անիրաւութեան դէմ:
5. Ի՛նչ փոյթ:
6. Հիմա, հեռո՛ւն,
Ահա ջրվէժն Ապրիլի ջինջ աստղերուն...
7. Բոլոր գէնքերը յանձնէ՛ լ պետութեան:
8. Աչքեր, աչքեր, սուրբ աչքեր՝
Մշուշապատ ու անդորր...
9. Երթա՛ լ, երթա՛ լ, երթա՛ լ անձայն, անհանդէս.
Երթա՛ լ առոյին պէս՝ մարգերու տակ անտես.
Կապոյտին մէջ՝ հե՛զ, հողմնավար ամպին պէս...
10. Մի՛ շտ ժողովուրդին հետ, մի՛ շտ ժողովուրդին համար:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Մեծ եղեռնին զոհ արեւմտահայ առաջնակարգ ստեղծագործողներէն է: Հրատարակուած են անոր «Սարսուռներ», «Յեղին սիրտը», «Հեթանոս երգեր», «Հացին երգը», ժողովածուները: Իր գլխաւոր երկերն են՝ «Հարճը» պոեմը, «Ձօն», «Անդաստան», «Գեղեցկութեան արձանին», «Մեռած Աստուածներուն» բանաստեղծութիւնները եւ այլն: Դաժանաբար սպաննուած է 1915-ին:

ԱՆԴԱՍՏԱՆ

Արեւելեան կողմն աշխարհի
Խաղաղութի՛ն թող ըլլայ...
Ո՛չ արիւններ, քրտինք հոսին
Լայն երակին մէջ ակօսին.
Ու երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի,
Օրհներգութի՛ն թող ըլլայ:

Արեւմտեան կողմն աշխարհի
Բերրիութի՛ն թող ըլլայ...
Ամէն աստղէ ցօղ կայլակի,
Ու ամէն հասկ ձուլէ ոսկի.
Եւ ոչխարներն երբ սարին վրայ արածին,
Ծիլ ու ծաղի՛կ թող ըլլայ:

Հիւսիսային կողմն աշխարհի
Առատութի՛ն թող ըլլայ...
Ոսկի ծովուն մէջ ցորեանին
Յաւետ լողայ թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացուի,
Բերկըրութի՛ն թող ըլլայ...

Հարաւային կողմն աշխարհի
Պտղաբերո՛ւմ թող ըլլայ...
Ծաղկի՛ մեղրը փեթակներուն,
Յորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի,
Սիրերգութի՛ն թող ըլլայ:

ԲԱՌԵՐ

Անդաստան – հանդ, արտ, մշակուող դաշտ:

Կոչնակ – եկեղեցի հրաւիրող զանգահարութիւն:

Կայլակ – 1. պզտիկ կաթիլ, պուտ, 2. բարակ շիթ, ցայտ:

Գերանդի – խոտհունձի գործիք մը:

Աղուն – աղալիք հացահատիկ:

Բերկրութիւն – հրճուանք, ցնծութիւն, ուրախութիւն:

Փեթակ – արկղ կամ կողով մեղուներու ընտանիքի մը համար:

Վարժութիւն

Ա. Քերթուածէն արտագրէ՛ բարդ նախադասութիւնները եւ որոշէ՛ անոնց տեսակը:

Բ. Ի՞նչ կը յիշես քերթուածէն: Պատմէ՛:

Գ. Յաւելեալ տեղեկութիւններ հայթայթէ Դանիել Վարուժանի մասին եւ պատմէ՛ դասընկերներուդ: